ԵՐԵՎԱՆ
ЕРЕВАН



ВАЗГЕН АЗАТЯН

ЕРЕВАН

ВТОРОЕ
ПЕРЕРАБОТАННОЕ И
ДОПОЛНЕННОЕ
ИЗДАНИЕ

ИЗДАТЕЛЬСКО-ПРОИЗВОДСТВЕННОЕ ОБЪЕДИНЕНИЕ «ПАРБЕРАКАН»
ЕРЕВАН — 1989

ՎԱԶԳԵՆ ԱԶԱՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ԵՐԿՐՈՐԴ
ԼՐԱՑՎԱԾ ԵՎ
ՎԵՐԱՄՇԱԿՎԱԾ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՐԲԵՐԱԿԱՆ» ԱՐՏԱԴՐԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ
ԵՐԵՎԱՆ — 1989

ԳՄԴ 26. 89 (2Հ) ց2
Ա 224

Վ. Գ. ԱԶԱՏՅԱՆ
Կազմող, տեքստի և լուսանկարների հեղինակ

В. Г. АЗАТЯН
Составитель, автор текста и цветных иллюстраций.

Գրախոս՝ պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր
Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

Рецензент — доктор исторических наук, профессор
Т. Х. АКОПЯН

Ուղեցույցը ծանոթացնում է մեր երկրի արդյունաբերության, գիտության ու մշակույթի, վարչական խոշոր կենտրոններից մեկի՝ Հայկական ԽՍՀ մայրաքաղաք Երևանի պատմական անցյալին, հեղափոխության և մշակույթի նշանավոր գործիչներին, պատմաճարտարապետական հուշարձաններին և քաղաքի այսօրվա կյանքին:

Նախատեսվում է ընթերցողների լայն շրջանի, զբոսաշրջիկների ու հյուրերի համար:

Путеводитель знакомит с историческим прошлым, выдающимися революционерами и деятелями культуры, историко-архитектурными памятниками и сегодняшней жизнью столицы Советской Армении — Еревана — одного из крупных промышленных, научных, культурных и административных центров страны.

Рассчитан на широкий круг читателей, туристов и гостей.

© «Պարբերական» արտադրահրատարակչական միավորում, Երևան—1989
ИПО «Парберакан», Ереван — 1989.

Բարի գալուստ
Добро пожаловать

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Բիբլիական Արարատ լեռան ստորոտում հպարտ ու վեհորեն փռված է վարդագույն, հինավուրց և նորօրյա Երևանը, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մայրաքաղաքը, Խորհրդային Միության արդյունաբերության, գիտության, մշակույթի ու վարչական խոշոր կենտրոններից մեկը:

Հայաստանն իր բազմադարյան պատմության ընթացքում շատ մայրաքաղաքներ է ունեցել: Վերջինը Երևանն է, աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, որի 2750-ամյակը նշվեց 1968 թ.:

Խորհրդային իշխանության տարիներին կառուցվեց նոր, ծաղկուն մի քաղաք: Սկսվեց ալեհեր քաղաքի երկրորդ երիտասարդությունը, նրա ուրախալի ու երջանիկ վերածնության բերկրալի ժամանակաշրջանը: Հայ ժողովուրդը նրա մեջ դրեց իր ոգին ու հանճարը, ներկա ու գալիք սերունդների համար սիրով ու հավատով կառուցեց այս արևային քաղաքը:

Այս ուղեցույցը ձեզ կօգնի ծանոթանալ մեր քաղաքի պատմահեղափոխական անցյալի, հրաշալի մարդկանց, ճարտարապետական հին ու նոր հուշարձանների ու կոթողների, ազգային ինքնատիպ մշակույթի ու արվեստի պատմության հետաքրքիր դրվագներին: Հայոց մայրաքաղաքն այսօր դարձել է շենշող ու ծաղկուն, սիրո ու լուսավոր երազանքների հավերժ մի քաղաք, որը գերում է բոլորին՝ բանաստեղծին ու երգչին, նկարչին ու ճարտարապետին:

Գալով Երևան, հավանաբար, դուք կցանկանաք լինել նաև հանրապետության այլ քաղաքներում ու բնակավայրերում, տեսնել հայկական հին ու նոր հուշարձանները, զմայլվել նրա տեսարժան վայրերով, անկրկնելի բնությամբ:

Մեր քաղաքը ձեզ կդիմավորի հյուրընկալորեն:

ОТ АВТОРА

У подножия библейской горы Арарат гордо и величаво раскинулся розовый, древний и вечно юный Ереван — столица Армянской Советской Социалистической республики, один из крупных прсмышленных, научных, культурных и административных центров Советского Союза.

Армения за всю свою многовековую историю имела множество столиц. Последняя — Ереван, один из древнейших городов мира, 2750-летие которого отмечалось в 1968 г.

За годы Советской власти был построен новый цветущий город. Началась вторая молодость седовласого города, плодотворный период его обновления и возрождения. Народ Армении вложил в него всю душу, талант и силу своего гения, с любовью и верой в будущее построил этот солнечный город.

Данный путеводитель поможет вам ознакомиться с революционно-историческим прошлым нашего города, с его замечательными людьми, древними и новыми архитектурными памятниками, страницами его истории, своеобразной национальной культурой и искусством. Наша столица сегодня восхищает и пленяет всех: поэта и певца, художника и зодчего. Ныне она стала прекрасной и цветущей — вечный город любви и светлых надежд.

Посетив Ереван, вы, вероятно, пожелаете побывать и в других городах и селах республики, познакомиться с величественными памятниками зодчества, восхититься ее достопримечательностями, неповторимой природой.

Наш город встретит вас гостеприимно.

Երևանի համայնապատկերը
Панорама Еревана

Երևանի արևմտյան դարպասը
Западные ворота Еревана

Էրեբունի-Երևանի հիմնադրման հուշամեդալը
Памятная медаль, посвященная 2750-летию Еревана

Էրեբունի-Երևանի հիմնադրման սեպագիր արձանագրությունը (782 թ. մ. թ. ա.)

Клинописная запись об основании Эребуни-Еревана (782 г. до н. э.)



HOTEL ARMENIA



Լույսի ծով է, խնդություն...
Праздник света и радости

ՈՐՏԵՂԻՑ Է ՍԿՍՎՈՒՄ ԵՐԵՎԱՆԸ

Հարցրու յուրաքանչյուր հայից՝ որտեղից է սկսվում Երևանը, և նա առանց վարանելու մատնացույց կանի Արարատ լեռը և կասի՝ այ, այնտեղից:

Ամեն առավոտ, երբ Երևանցին բացում է իր լուսամուտը, նրա առջև հայտնվում է վեհանիստ Արարատը: Նա կարոտով ու բերկրանքով ողջունում է իր հարազատ լեռը ու հայացքը սահեցնում գունագեղ լանջերի ու ալեհեր գագաթների վրայով:

Քաղաքամայր Երևանին դեմ առ դեմ, Արարատյան եդեմական դաշտի հարավային եզրին հառնում է ձյունափառ Արարատը՝ Հայկական լեռնապարի փառապսակն ու Նահապետը, որը բիբլիական հանդիսավորությամբ հազարամյակներ շարունակ հսկում է հայոց աշխարհին ու առավոտվա բարի լույսի հետ փառահեղորեն ողջունում չքնաղ հովտի բնակիչներին ու հյուրերին:

Առասպելական հերոսի տարիք ունի Արարատը: Երկրաբանները հաստատում են, որ նրա մեծ գագաթը 3,5 միլիոն տարեկան է, իսկ փոքրը՝ 150—200 հազար: Առաջինի բարձրությունը 5165, իսկ երկրորդինը՝ 3925 մետր է:

Երևանի հյուսիս-արևմուտքում կանգնած է քառագագաթ Արագածը՝ Խորհրդային Հայաստանի տարածքի ամենաբարձր լեռը (4090 մ), որին ժողովուրդը սիրում է ու նրան երգեր ձոնում: Սակայն ուրիշ է Արարատը: Արարատը մշտապես ներկա է հայոց լեզվում, հայի մտապատկերում, նրա հիշողության, պատմության ու քերթության մեջ:

Երևանում շատ են այն բլուրները ու բարձունքները, որտե-

ղից, ինչպես ափիդ մեջ, կարող ես տեսնել քաղաքի ծովածավալ համայնապատկերը:

Գառնի-Գեղարդ տանող ճանապարհի բարձրադիր մի հատվածում, ի պատիվ հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցի, կառուցվել է տուֆակերտ հուշակամար: Դա մի հրաշալի դիտակետ է:

Նայում ես դեպի հեռուն, ու հանկարծ ծիածանակերպ կամարի միջից իր վիթխարի հասակով երկինք է մխրճվում Հայաստանի երկգլխանի հզոր արծիվը՝ Արարատ լեռը: Փառահեղ մի տեսարան: Երկիրը փռվում է աչքիդ առաջ, համայնապատկերը ալիք-ալիք գնում է հեռու-հեռուները...

Այս դիտակետից պարզ երևում է, թե ոչ վաղ անցյալում մինչև ուր էին հասնում Հայկական լեռնաշխարհի, մեր հին ու մեծ պատմական հայրենիքի սահմանները, որի կենտրոնում միշտ եղել է Արարատ լեռան համալիրը: Դա լեռնային մի մեծ երկիր է, շուրջ չորս հարյուր հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ, հաշված նաև այս անկյունը, որը մոտ երեսուն հազար քառակուսի կիլոմետր է: Այստեղից պարզորեն երևում է մեր գերված հայրենիքը, ավերված ու կիսավեր տաճարներով, սյունազարդ պալատներով ու եկեղեցիներով:

Բարձունքից նկատվում է մի լայն ու մեծ ճանապարհ, որ ստեղծել է ամենազոր բնությունը, որպեսզի գան ու անցնեն ժողովուրդները, ազգերը: Այդպես եղել է աշխարհաստեղծումից ի վեր:

Եվ այսպես, հմայված նայում ես Արարատի կողմը: Լեռնապարը քեզ տանում է հեռու, այն ուղղությամբ, ուր մի ժամանակ բաբախում էր Մեծ Հայքի սիրտը՝ Վանա լճով, Դարս, Վան, Անի քաղաքներով...

Ալեզարդ Մասիսներին նայելիս հայը կարծես լսում է «Կռունկ» ամենագեղեցիկ ու ամենատխուր երգը՝ պանդխտության երգը: Նա լսում է դուդուկի անուշ ու ախորժալուր դայլայլը՝ «Դլե յամանը»... Եվ երաժշտությունը ինչպես սրբազան աղոթք, ինչպես հին օրհնություն ալիք-ալիք տարածվում է հեռու-հեռուներ:

Պարսկական և թուրքական տիրապետության դարավոր լու-

Թանգարանների համալիրը Վ. Ի. Լենինի անվան հրապարակում

Комплекс музеев на площади им. В. И. Ленина

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հուշակոթողը

Памятный обелиск, посвященный установлению Советской власти в Армении

ծը հայ ժողովրդին կանգնեցրել էր ֆիզիկական ոչնչացման վտանգի առաջ:

1827 թվականը բախտորոշ եղավ ինչպես Արևելյան Հայաստանի, այնպես էլ Երևանի համար: Դրանից շուրջ հարյուր տարի առաջ հայ ժողովրդի լավագույն ու առաջադեմ զավակները թուրքական ու պարսկական ատելի լծից ազատագրվելու միակ հույսը կապեցին Ռուսաստանի հետ: Եվ հետագայում Ռուսաստանը փրկեց հայոց աշխարհի արևելյան մասը, այդ հատվածը ընդգրկելով իր կազմի մեջ: Արևելյան Հայաստանի ժողովուրդը հնարավորություն ունեցավ շփվելու ռուսական առաջադիմական մշակույթին, նրա սոցիալական կարգին և իր հոգևոր ու ֆիզիկական մասնակցությունը բերել նրա կյանքին, համատեղ պայքարելու ժողովրդական իշխանություն ստեղծելու համար:

Դժբախտաբար, նման ապահովություն չունեցավ Արևմտյան Հայաստանի բնակչությունը, որը 1915 թ. ապրիլին բնաջնջվեց թուրքական ռեակցիոն իշխանությունների կողմից:

1920 թվականի նոյեմբերի 29-ը դարձավ Արևելյան Հայաստանի, հայ ժողովրդի ազգային վերածնության իսկական օրը: Կարմիր Հոկտեմբերից ճառագած արևը ջերմացրեց հայոց երկիրը, հայ ժողովրդին տվեց ապրելու և ստեղծագործելու լիիրավ հնարավորություն: Իրականացավ հայ ժողովրդի վաղեմի երազանքը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և ռուս ժողովրդի անշահախնդիր օգնության շնորհիվ հայ ժողովուրդը իր հողի փրկված մի բեկորում հաստատեց խորհրդային կարգեր, սկիզբ դրեց իր նոր, սոցիալիստական պետականությանը, իսկ Երևանը դարձավ հայոց նոր մայրաքաղաքը:

Երևանի համար սկսվեց պատմական մի աննախընթաց շրջան, այն դարձավ շինարարական հսկայական մի հրապարակ: Ցարական Ռուսաստանի այս ծայրամասը պատմության համար ակնթարթ թվացող շուրջ 70 տարիների ընթացքում վիթխարի թռիչք կատարեց սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում:

Այժմ Հայաստանը դարձել է ծաղկուն մի հանրապետություն, իսկ նրա մայրաքաղաք Երևանը՝ երկրի հզոր արդյունաբերության, առաջավոր գիտության, բարձր մշակույթի, աշխարհի հոգևոր կյանքի ու քաղաքակրթության կարևոր կենտրոններից մեկը: Այսօր Երևանը հայ ժողովրդի սիրտն է, նրա հզորության պատվարը: Այս-

տեղ է նրա պետականության խարիսխը, մտքի ու մշակույթի կենտրոնը՝ պետական համալսարանը և տասից ավելի բարձրագույն ուսումնական հաստատությունները, Գիտությունների Ակադեմիան, հայոց հինավուրց պատմության ու տարեգրության հռչակավոր գանձարան Մատենադարանը, թատրոններն ու թանգարանները, այստեղ է գտնվում հանրապետության արդյունաբերության ծանրակշիռ մասը:

Երևանն այսօր ԽՍՀՄ-ին և աշխարհին տալիս է շարժական էլեկտրակայաններ ու տրանսֆորմատորներ, հաստոցներ ու գեներատորներ, ավտոմեքենաներ, էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, ավտոդողեր, կոմպրեսորներ, ժամացույցներ, բյուրեղապակի, գործվածքներ, կոնյակներ, պահածոներ և այլն:

Թողարկվող արտադրանքի ավելի քան երկու հարյուր տեսակներ առաքվում են աշխարհի շուրջ 80 երկրներ: Ժամանակակից քաղաքների համակարգում Երևանն ապրում է իր բուռն ու լիարյուն կյանքով: Սոցիալ-տնտեսական աննախադեպ նվաճումների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1982 թ. նոյեմբերի 26-ի հրամանագրով քաղաքն արժանացավ Հայրենիքի բարձրագույն պարգևին՝ Լենինի շքանշանի:

Այսօրվա երևանցին գուցե չնկատի էլ, թե օրվա ընթացքում քանի անգամ է հայացքն ուղղում Արարատին, քանի անգամ է մտովի կամ բարձրաձայն տալիս Արին-բերդ, Էրեբունի, Արաքս, Մուշ, Կիլիկիա, Տիգրան, Վարդան, Հայկ անունները, քանի անգամ է հոլովում Նարեկացու, Թումանյանի, Աբովյանի ու Չարենցի անունները, քանի անգամ է հիանում Սարյանի գույներով, Կոմիտասի ու Խաչատրյանի անմահ երաժշտությամբ...

Իտալիայում գիտնականները հաշվել են, թե օրվա ընթացքում միջին հաշվով քանի անգամ են հնչում Միքելանջելոյի ու Լեոնարդոյի անունները... Արդյունքը ֆանտաստիկ թվերի է հասել: Նույնը կարելի է ասել նաև հայերի մասին:

Երևանը չի սկսվում և չի վերջանում քառակուսի կիլոմետրերով, չի սահմանափակվում վիճակագրական տվյալներով: Այն տարածվում է աշխարհի յուրաքանչյուր անկյունում, որտեղ հայի սիրտ է բաբախում: Այսօրվա մեր Երևանը՝ տարիքով Հռոմից մեծ, ժամանակին մրցակցության մեջ մտած Բաբելոնի հետ, աշխարհում առաջինը լինելով դարպաս քրիստոնեության մուտքին,

տեսած ավերի ու աղետի այնպիսի հորձանուտ, որպիսին ոչ մի քաղաքի վիճակված չէր՝ այսօր էլ կա, ապրում ու ծաղկում է աշխարհի աչքի առաջ:

Երևանը 21-րդ դարը թևակոխող ժամանակակից քաղաք է, որն ապրում է զարգացած մեծ քաղաքներին հատուկ ռիթմով: Այսօրվա երևանցին ոտք է գցում Նյու Յորքի և Լոնդոնի, Փարիզի ու Տոկիոյի քաղաքացու հետ: Մենք իրավամբ հպարտանում ենք մեր արևային քաղաքով: Այո, արևը Երևանի բաղկացուցիչ մասն է, ինչպես վարդագույն տուֆը, «Զվարթնոց» օդանավակայանը, «Հրազդան» ստադիոնը, Ծիծեռնակաբերդն ու Մարզահամերգային համալիրը, Մաշտոցն ու Արարատը...

Վ. Ի. Լենինի անվան հրապարակում

На площади им. В. И. Ленина



Վ. Ի. Լենինի անվան
հրապարակում

На площади
им. В. И. Ленина

Ստեփան Շահումյանի
հուշարձանը
Памятник
Степану Шаумяну



Քաղաքի գլխավոր
ժամացույցը
Главные часы
города

Մինիստրությունների շենքը
Վ. Ի. Լենինի անվան
հրապարակում
Здания министерства на
площади В. И. Ленина

ԱՐԵՎԻ ԵՎ ԼՈՒՅՍԻ ՔԱՂԱՔԸ

Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում՝ Հայոց աշխարհի երկու վիթխարի լեռնային զանգվածներից՝ Արարատից և Արագածից գրեթե հավասար հեռավորության վրա, հյուսիսային լայնության մոտավորապես 40° և արևելյան երկայնության 62° հատույթում: Քաղաքի միջով հոսում է Արաքսի ձախ վտակ Հրազդան գետը՝ քաղաքը բաժանելով երկու մասի: Երևանի բարձրությունը ծովի մակերևույթից 865—1390 մետր է, արևափայլի տարեկան տևողությունը հասնում է 2700 ժամի, օդի միջին տարեկան ջերմաստիճանը 8,8—11,6° է, հուլիս-օգոստոս ամիսներին 22—26°, առավելագույնը՝ 41,4°, իսկ ձմռանը՝ մինչև—30°: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 300—350 մմ-ի սահմաններում:

Միջին տարեկան ջերմությամբ Երևանը նման է Սևաստոպոլին, Լոնդոնին, Փարիզին, Թուրինին, միջին ամառային ջերմությամբ՝ Բարսելոնին, իսկ միջին ձմեռային եղանակով նման է Լենինգրադին:

Տեղումները մեծ մասամբ լինում են գարնանը և աշնանը, անձրևները հատկապես ամռանը՝ կարճատև են և տեղատարափ: Երևանի համար անսովոր չեն կայծակն ու որոտը, կարկուտն ու հեղեղները: Երևանին բնորոշ է շոգ ամառը, ցրտաշունչ և կարճատև ձմեռը: Գարունը կարճ է տևում ու զովաշունչ եղանակներին անսպասելիորեն հաջորդում են շոգերը, որոնք շարունակվում են մինչև սեպտեմբերի կեսերը: Այդ շրջանում, կեսօրից հետո, քաղաքի օդը զովացնում է Արագածից փչող լեռնային քամին, որն իր հետ բերում է մոտակա սարերի սառը շունչը:

Մեղմ ու տևական է լինում երևանյան աշունը: Քաղաքի շուկաները լցվում են դաշտերի, այգիների ու պարտեզների բերք ու բարիքով: Մեղմ գիշերները Երևանի աշունը դարձնում են հմայիչ ու հեքիաթային:

Երևանի բազմաթիվ ջրավազանների, արհեստական անտառների, պտղատու այգիների, փողոցների երկայնքով ձգվող ծառերի ու սիզամարգերի շնորհիվ զգալի չափով մեղմանում է քաղաքի միկրոկլիման: Դեկորատիվ ծառատեսակներից Երևանում տարածված են հարավային չինարին (կամ սոսի), գնդաձև և սովորական ակացիան, նաիրյան բարդին, հացենին, ուռին և այլն: Առաջնակարգ է Երևանի խմելու ջուրը, բերված 18-30 կմ հեռավորությունից՝ Աբովյանի շրջանի Գառնիի Քառասունակ աղբյուրներից, Աշտարակից, Հրազդանի հովտից, Ազատ գետի ձորից և այլ տեղերից: Դրանք բնական սառնորակ, վճիտ ու անուշահամ աղբյուրներ են՝ զերծ օրգանական խառնուրդներից:

Երևանում աճում են խաղողի մի շարք ընտիր տեսակներ, արևահամ դեղձ, խնձոր, սալոր, կեռաս, բալ, սերկևիլ, փշատ, ընկույզ: Բարձր բերք են տալիս բանջարանոցային կուլտուրաները՝ ձմերուկը, պոմիդորը, պղպեղը, վարունգը, կանաչեղենը:

Երևանի հեռավորությունը ուղիղ գծով Սև ծովից 300, Կասպից ծովից 450, իսկ Միջերկրական ծովից 800 կմ է:

Բարեկամությունը խորհրդանշող «Ձեռքեր» քանդակը

Скульптура «Руки», олицетворяющая дружбу



Հազարամյակների պատմություն ունի Հայաստանը:

Այստեղ հայտնաբերված մարդկային մշակույթի հնագույն հուշարձանների մնացորդները ըստ հնագիտական, երկրաբանական և հնէաբանական տվյալների, ունեն շուրջ մեկ միլիոն տարվա անցյալ: Այստեղ գտնված քարե ու վաղ երկաթե դարերի հուշարձանները վկայում են մարդու զարգացման բոլոր աստիճանների անընդմեջ գոյությունը: Հնագետները հաստատում են, որ հայկական լեռնաշխարհը մարդաբնակ է եղել դեռ այն ժամանակ, երբ Միջագետքի դաշտավայրը ծովի հատակ էր, երբ Տիգրիս և Եփրատ գետերը թափվում էին Պարսից ծոցը:

Աշխարհի ոչ մի երկիր իր պատմության ընթացքում այնքան շատ մայրաքաղաք չի ունեցել, որքան Հայաստանը: Տասներկու մայրաքաղաք՝ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի և, ի վերջո, Երևան:



Սարդուր Երկրորդի սաղավարտը (մ. թ. ա. VIII դ.)

Шлем Сардура Второго (VIII в. до н. э.)

Ապակյա ուլունքներ, Կարմիր բլուր (մ. թ. ա. VIII դ.)

Стеклянные бусы (Кармир-блур, VIII в. до н. э.)

Երևանը հայոց երկրի տասներկուերորդ մայրաքաղաքն է, աշխարհի հնագույն քաղաքներից մեկը: Պեղումները հաստատում են, որ քաղաքի այժմյան տարածքը և շրջակայքը բնակեցված է եղել անհիշելի ժամանակներից:

Մինչև օրս էլ Հայաստանի, ինչպես նաև Երևանի տարածքում պահպանվել են ավելի քան հինգ հազար հուշարձան՝ նախնադարյան քարանձավներ, նախամարդու կացարաններ, ամրոցներ, հեթանոսական տաճարներ, միջնադարյան բերդեր, վիմափոր վանքեր, քրիստոնեական եկեղեցիներ ու տաճարներ, հազվագյուտ որմնանկարներ, ձեռագրեր, խաչքարեր . . .

Մարդիկ իրավամբ Հայաստանը անվանում են «թանգարան բաց երկնքի տակ», իսկ անգլիացի մեծ բանաստեղծ Բայրոնն ասել է.

«Համայն հողագնդի վրա չկա մի այլ երկիր, որն այնքան լիքը լիներ հրաշքներով, ինչքան հայերի երկիրը...»:

Երևանի տարածքի հնագույն բնակավայրերից են Շենգավիթը, Արին-Բերդը, Կարմիր բլուրը, Ծիծեռնակաբերդը, որոնք հազարամյակներ շարունակ եղել են բնակավայրեր, իսկ Ավանի ձորի և Հրազդանի կիրճի քարայրները՝ կացարաններ մարդկության պատմության վաղ արշալույսին: Պեղումների ժամանակ Շենգավիթում հայտնաբերվել են մ. թ. ա. IV—II հազարամյակների մշակութային բազմաթիվ իրեր՝ պղնձե ու քարե գործիքներ, պղնձե ու ոսկե նետասլաքներ, ոսկյա ու արծաթյա զարդեր, իսկ Ծիծեռնակաբերդի տարածքում՝ դամբարաններ, կիկլոպյան պարսպի մնացորդներ, խեցեղեն և այլ արժեքավոր իրեր . . . Մայրաքաղաքի հնագույն այլ բնակավայրերում նույնպես հայտնաբերվել են ձուլարան-օջախ, զանազան խեցեղեն իրեր, հացահատիկի տեսակներ, խաղողի կորիզներ և այլն:

Երևանի բուն պատմությունը սակայն, սկսվում է Էրեբունի հայտնի ամրոցի հիմնադրմամբ:

Երևանի պատմության համար առանձնահատուկ նշանակություն ունեցան մ. թ. ա. առաջին հազարամյակի սկզբներին տեղի ունեցած իրադարձությունները, երբ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան մասերում սկսեց կազմավորվել ժամանակի հզոր հայկական պետություններից մեկը՝ Ուրարտուն: Մ. թ. ա. 782-ին Հայաստանի այժմյան մայրաքաղաք Երևանի բլուրներից մեկի վրա Արգիշտի թագավորը կառուցեց ուրարտական պետության վարչա-ռազմական կենտրոն Էրեբունի բերդաքաղաքը: 1950 թ.

պեղումների ժամանակ այնտեղ հայտնաբերվեց Արգիշտի թագավորի սեպագիր մի արձանագրություն, որն էլ հավաստում է քաղաքի ծնունդը:

«Խալդ աստծո մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին այս բերդը հոյակապ կառուցեց և կոչեց քաղաք Էրեբունի. ի փառս Բիայնա երկրի և ի սարսափ նրա ոսոխների: Արգիշտին ասում է,- «Հողն ամայի էր, կատարեցի հզոր ձեռնարկումներ այստեղ. Խալդյան մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին թագավոր է հզոր, թագավոր Բիայնա երկրի, տերը Տուշպա քաղաքի»:

Էրեբունի ամրոցը գտնվում է անմատչելի բլրի վրա, շրջապատված մինչև 10 մետր բարձրության լայն պարսպով: Այստեղ էր գտնվում ուրարտական բազմամարդ կայազորը, որի շնորհիվ էլ բերդը դարձել էր ռազմաստրատեգիական կարևորագույն հանգույցներից մեկը:

Էրեբունին խոշոր դեր էր կատարում նաև վարչատնտեսական առումով: Գտնվելով բարեբեր երկրների կենտրոնում, հնագույն ժամանակներից ի վեր Արաքսի և Հրազդանի հովիտներով ձգվող ճանապարհների խաչմերուկում, ավելի էր բարձրանում նրա դերն ու նշանակությունը: Հյուսիսային երկրներից գանձվող հարկերը, ռազմավարը հավաքվում էր այստեղ և նախնական մշակումից հետո ուղարկվում պետության մայրաքաղաք Տուշպա (Վան):

Էրեբունի ամրոցի զբաղեցրած մոտ 50 հեկտար տարածությունը այժմ ամբողջովին մտնում է Երևան քաղաքի շրջագծի մեջ:

1950-1959 թ. թ. ընթացքում կատարված պեղումների շնորհիվ ճշտված է միջնաբերդի արտաքին ստվերագիծը, պաշտպանական պարսպի ուղղությունը ու նրա առանձին հատվածների ճշգրիտ դիրքը, պալատի, գլխավոր տաճարի, ընդարձակ բակի և մյուս օժանդակ շինությունների բնույթն ու մեծությունը: Հայտնաբերված են սեպագիր արձանագրություններ, նյութական մշակույթի բազմաթիվ ու բազմապիսի մնացորդներ, ուրարտական-հայկական արվեստի հազվագյուտ նմուշներ, որոնք մեծ արժեք են ներկայացնում ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի, Մերձավոր Արևելքի արվեստի ու պատմության համար:

Հնագիտական ուսումնասիրությունների շնորհիվ պարզվել է, որ Էրեբունին եղել է վարչական խոշոր կենտրոն, Արարատյան հարթավայրում եղած ուրարտական ամենահզոր բերդը, որը մ. թ. ա. VII դարում

կորցնում է իր նախկին նշանակությունը և նրան փոխարինելու է գալիս Թեյշեբաինի բերդաքաղաքը, որը նույնպես գտնվում է Երևանի տարածքում` Կարմիր-բլուրում:

Դեռևս Քրիստոսի ծննդից 782 տարի առաջ որձաքարի վրա փորագրված սեպագիր այս արձանագրությունը, որը հասել է վերածնված Երևանի այժմյան թանգարանին, ազդարարել է աշխարհին Էրեբունի-Երևան քաղաքի ծնունդը:

Իսկ Ռուսա II-ի օրոք կառուցվել է այն ջրանցքը, որն այժմ էլ հոսում է Երևանի միջով և ոռոգում Արարատյան դաշտը: «Առու հանեցի Իլդարունի (այժմ Հրազդան) գետից. խաղողի այգի տնկեցի . . .» վկայում է սեպագիրը:

Աշխարհում խաղողի հնագույն ծննդավայրերից մեկը Հայաստանն է, քարերի ու լեռների երկիր Հայաստանը: Այստեղ զմայլանքով ես նայում դաշտերում ու դարավանդներին թառած կանաչ-կարմիր այգեստաններին, խաղողի հրդեհվող վազերին, հազարագույն ու ոսկեփայլ ողկույզներին:

Ավելի քան երեսուն-քառասուն դար սրանից առաջ հայերի նախնիները այս հողում բերդեր են կառուցել, մշակել խաղող ու ցորեն, պաշտպանել իրենց ցանքն ու այգին օտարներից, կուռքեր պաշտել և իրենց սերն ու տառապանքը արվեստ դարձրել: Նրանք ճաշակել են կարմրախայտ ձուկն ու ըմպել Նոյի ձեռքով տնկված խաղողի որթից քամված գինին ու սքանչացել արդար:

Ու պատահական չէ, որ խաղողը, մրգերի այս պերճ թագուհին, այնքան հարազատ է հայ ժողովրդին, հազարամյակներ շարունակ դարձել է նրա խնամքի ու պաշտամունքի առարկան, նրա հավերժության խորհրդանիշը: Այն այսօր էլ զարդարում է Հայաստանի պետական գերբը:

Հայ ժողովուրդը լեռների ու ապառաժների վրա խաղող է աճեցրել, վայելել նրանից քամված արևահամ գինին ու մարդկային հանճարի ջերմ ու ընտեղծագործ ներշնչանքով այդ նույն քարերի ու ժայռերի վրա քանդակել արև ու արծիվ, խաղող ու ծաղիկ, կառուցել բերդեր ու ամրոցներ, տաճարներ ու պալատներ:

Չնայած Էրեբունի-Երևանը մինչև XV դարը չի եղել մայրաքաղաք, սակայն հայտնի է որպես ստրատեգիական ու մըշակութային կենտրոններից մեկը Հայաստանում ընդհանրապես, իսկ Արարատյան հովտում` մասնավորապես: Դվինի, Անիի, Կարսի անկումից հետո Երևանը դառնում է Հայաստանի քա-



Էրեբունի ամրոցն ու թանգարանը

Крепость Эребуни и музей

դաքական, տնտեսական ու մշակութային օրրանը՝ Արարատ «աշխարհի» կենտրոնը:

Երևանի նշանակությունը մեծացավ (1437-1467 թ. թ.), երբ այն դարձավ Արարատյան աշխարհի մեծագույն մասն ընդգրկող կուսակալության կենտրոնը: Այդ ժամանակից ի վեր Երևանը հաճախ հիշատակվում է որպես «Արարատյան երկրի մայրաքաղաք»:

Երևանին, սակայն, բախտ չէր վիճակված զարգացման բնական ընթացքը: Նրա պատմությունը հայ ժողովրդի պատմության նման ունի տխուր տարեգրություն: Երևանի XIV—XVIII դարերի պատմությունը ավերումների, կոտորածների, սովի ու տարափոխիկ հիվանդությունների մի երկար շղթա է: Պարսկա-թուրքական մռայլ ու ծանր տիրապետության շրջանում Հայաստանը դարձել է երկու գիշատիչ տերությունների անվերջ պատերազմների թատերաբեմը: Առաջին հարվածը միշտ ստանում էր խանության կենտրոնը՝ Երևանը, որի նշանավոր բերդը երկար ժամանակ արևելքում հռչակված էր իր անառիկությամբ: Իսկ 1554 թ. թուրքական երկու հարյուր հազարանոց բանակը գրավեց և ավերեց Երևանը, Նախիջևանը, Սյունիքը: Երևանի բերդը կառուցվեց 1582 թ. (Ներկայիս «Արարատ» տրեստի գինու կոմբինատի տեղում): Պարսկա-թուրքական շրջանում (XVI—XVII դդ.) Երևանը ձեռքից-ձեռք է անցել 14 անգամ և ամեն անգամ հիմնովին ավերվել: Քաղաքի վրա առանձնապես ծանր հետևանքներ է թողել 1604 թ. Շահ-Աբաս I-ի նվաճումը: Պակաս ավերածություն չի պատճառել 1679 թվին տեղի ունեցած երկրաշարժը, որի հետևանքով հիմնահատակ ավերվել է քաղաքի մեծ մասը՝ բնակելի շենքերը, եկեղեցիները, բերդը, Հրազդանի և Գետառի կամուրջները:

Երևանի վրայով սևակնած շատ ամպեր են անցել: Հայոց երկրի գրեթե բոլոր նվաճողները՝ ասուրները, հռոմեացիները, բյուզանդացիները, այնուհետև արաբները, սելջուկները, պարսիկները, թաթարները, մոնղոլները, թուրքերը երկարամյա կռիվներ են մղել, խորտակել բերդերն ու ամրոցները, հրկիզել այգիները, ավերել դպրոցներն ու եկեղեցիները, գերել ու սրի քաշել բնակիչներին, կողոպտել ունեցվածքը . . .

Հայ ժողովրդին հազարամյակներ շարունակ բաժին են ընկել անօրինակ դառնություններ, կործանումներ, տառապանքներ, սակայն նա միշտ անտրտունջ քայլել է քաղաքակիրթ ազգերի առաջին շարքերում, կառուցել, շենացրել իր երկիրը, ստեղծել արվեստի ու գիտության մնայուն գանձեր:

Ահա թե ինչ է ասել անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Բայրոնը հայ ժողովրդի մասին:

«Հայը հարստահարված և բարձրատոհմ ազգ է, որը հրեաների ու հույների պես տարագիր ու ստրուկ է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման և վերջինների ստրկամտության: Այս ժողովուրդը հարստացել է առանց կեղծելու և ստրկության մեջ արժանացել պատվի՝ առանց բանսարկության: Բայց նրա տեղը, այնուամենայնիվ, երկար ժամանակ եղել է «Գերության տան» մեջ, որը վերջերս բազմապատկել է իր անթիվ օթևանները:

Թերևս դժվար է գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպիսին էլ լինեն նրանց ճակատագիրը, որը դառն է եղել, ինչպիսին էլ լինի ապագայում, նրանց երկիրը հավետ պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը և, թերևս նրանց լեզուն միայն ավելի խոր ուսումնասիրության պահանջ է դընում ավելի գրավիչ դառնալու համար: Եթե վստահենք Ս. գըրքին, դրախտը Հայաստանում էր, Հայաստան, որն իր հողի վաղանցուկ առնչակցության պատճառով Ադամի սերունդների պես թանկ վճարեց մի մարդու երջանկության դիմաց, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանում էր, որ ջրհեղեղը սկսեց տեղի տալ, և իջավ աղավնին: Բայց դրախտը դեռ չէր հասցրել անհետանալ, երբ ծայր առավ այդ երկրի տարաբախտությունը, քանզի երկար ժամանակ հզոր թագավորություն լինելով հանդերձ, համարյա երբեք անկախ չեղավ, և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անապատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով»:

Հայ ժողովրդի նկատմամբ հալածանքները միշտ էլ շարունակվում էին:

1724 թվականին երկու ամիս տևեց Երևանի հերոսական պաշտպանությունը, սակայն երբ թուրքերին օգնության հասավ 40 հազարանոց բանակը, դիմադրությունն արդեն անօգուտ էր: Թշնամին քաղաքը քանդեց, հողին հավասարեցրեց, կողոպտեց ու թալանեց: Եվ այսպես շարունակ, մինչև 1827 թվականը, երբ ռուսական զորքերը ոտք դրեցին հայկական հողը:

1828 թ. Թուրքմենչայի պայ-

մանագրով, Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո, Երևանում ընկրկվում են աշխուժանալ շինարարական և բարեկարգման աշխատանքները: Բայց այնուամենայնիվ, մինչև XX դարի սկիզբը Երևանը մնում էր որպես գավառական փոքրիկ մի քաղաք, որի բնակչության թիվը կազմում էր ընդամենը 11.9 հազար:

Իմպերիալիստական առաջին պատերազմը, թուրքերի ձեռնարկած ցեղասպանությունը, որին զոհ դարձան մոտ երկու միլիոն հայեր, ազգամիջյան պատերազմներն ու տնտեսական փլուզումը անասելի ծանր էին անդրադառնում Հայաստանի վրա: Սակայն հազարամյակներ շարունակ ստեղծագործ աշխատանքով աշխարհում արդեն վաղուց իրեն հաստատած ժողովուրդը մեռնել չէր կարող: Եվ ահա 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հայ ժողովուրդը իր հայրենիքի փրկված մի բեկորում հաստատում է խորհրդային կարգեր: Հայաստանը ապրում է իր ազգային վերածնունդը, իսկ Երևանը դառնում Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքը:

Խորհրդային կարգերի հաստատումով քաղաքամայր Երևանը դառնում է հսկայական շինարարական հրապարակ: Մեծատաղանդ ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը 1924 թ. նախագծեց Երևանի վերակառուցման գլխավոր հատակագիծը: Մի քանի տարում ծնվեցին նորանոր թաղամասեր, հրապարակներ, լայնահուն պողոտաներ ու փողոցներ, ստեղծվեցին մշակույթի օջախներ, կուլտուր-լուսավորական հիմնարկների վիթխարի մի ցանց: Քաղաքի թաղամասերն ունեցան իրենց վարչատնտեսական ու կուլտուրական կենտրոնները, շարք մըտան արդյունաբերական ձեռնարկությունները:

Երևանի Նոր Բութանիա, Նոր Կիլիկիա, Մարաշ, Նոր Զեյթուն, Արաբկիր, Սեբաստիա, Նոր Նորք և այլ միկրոքաղաքթաղամասերը, որոնք մեր կորած Հայրենիքի պատմական տեղանուններով են կոչվում, ընդարձակում են Հայոց նոր մայրաքաղաքի գեղանի համայնապատկերը:

Այսօր Երևանում հնից գրեթե ոչինչ չի մնացել, խորհրդային մարդիկ նորովի հրաշակերտեցին օտարների անհամար ապատակություններից ի վերջո ազատագրված հարազատ ոստանը, և այժմ մեր առջև հառնել է ժամանակակից վարդագույն մի նոր քաղաք:

Էրեբունի ամրոցի միջնաբերդի պարիսպը
Стена цитадели крепости Эребуни

Կարմիր բլուրի ընդհանուր տեսքը
Общий вид на Кармир-блур



Արծաթե անոթ ձիու պատկերով
(մ. թ. ա. V դ., Էրեբունի)

Серебряный сосуд
с изображением лошади
(V в. до н. э., Эребуни)

Կավե անոթ
(մ. թ. ա. VIII դ., Էրեբունի)

Глиняный сосуд
(VIII в. до н. э., Эребуни)

Գինու կարասներ
(մ. թ. ա. VII դ., Կարմիր բլուր)

Винные карасы
(VII в. до н. э., Кармир-блур)

ՄԵԿ ՊՏՈՒՅՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանը բաժանված է վարչական ութ շրջանների. Լենինյան, Օրջոնիկիձեի, Սպանդարյանի, Մյասնիկյանի, 26 կոմիսարների անվան, Շահումյանի, Սովետական և Մաշտոցի:

Հիանավուրց Նորքից, ուր վեր է խոյանում Հայկական հեռուստատեսության երկնամուխ աշտարակը, քաղաքը երևում է ինչպես ափիդ մեջ: Պարզ երևում են պողոտաներն ու փողոցները, լճերն ու զբոսայգիները, հրապարակներն ու մարզադաշտերը, բլուրները՝ Նորքը, Կոնդը, Ծիծեռնակաբերդը, Կարմիր բլուրը, Շենգավիթը . . . (Երևանը, ինչպես նրանից 29 տարով փոքր Հռոմը, կառուցված է յոթ բլուրների վրա):

Պարզ գծագրվում են Արտաշատի, Էջմիածնի, Աշտարակի և Սևանի խճուղիները՝ քաղաքի հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան դարպասները:

Որքան էլ Նորքի բարձունքը Երևանին ծանոթանալու համար հարմար դիտակետ լինի, եկեք, այնուամենայնիվ, քաղաք մըտնենք նրա դարպասներից:

ԶՎԱՐԹՆՈՑ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ

Էջմիածնի խճուղով և Ծովակալ Իսակովի պողոտայով դեպի քաղաք

Ճարտարապետական ինքնատիպ կառույց է «Զվարթնոց» օդանավակայանը, որը շահագործման է հանձնվել 1980 թ.: Երևանն այսօր իր օդային ուղիներով հաղորդակցվում է Խորհրդային Միության և աշխարհի բազմաթիվ քաղաքների հետ: Դա Երևանի արևմտյան օդային դարպասն է:

1933 թ. հուլիսի 21-ին Երևանի օդանավակայանից (այժմ «Էրեբունի»), Երևան-Թբիլիսի երթուղով կատարվեց առաջին թռիչքը, իսկ նույն թվականի դեկտեմբերի 25-ից դրվեց կանոնավոր թռիչքների հիմքը: 1945 թ. «ՍՊ-47» ինքնաթիռը նույն օդանավակայանից ուղղություն վերցրեց դեպի Մոսկվա: 1959 թ. սկսվեց արևմտյան, այժմ «Զվարթնոց» օդանավակայանի շինարարությունը, իսկ երկու տարի հետո «ԻԼ-18» օդային հսկաները ակոսելով ԽՍՀՄ օդային տարածությունները սկսեցին պարբերաբար թռիչքներ կատարել դեպի Խորհրդային Միության խոշոր քաղաքներ:

«Զվարթնոց» օդանավակայանը այսօր միջազգային համարում ունի, նա ուղևորներ ու բեռներ է փոխադրում երկրի զանազան քաղաքներ, տարբեր աշխարհամասեր, համարվում է ԽՍՀՄ-ի խոշոր օդանավակայաններից մեկը, որի թողունակությունը ժամում կազմում է 2100 ուղևոր:

Օդանավակայանի շինությունը կլոր է, նման հատած կոնի, հիմքի տրամագիծը հավասար է 200 մետրի: Կառույցի կենտրոնական մասում սնկաձև վեր է խոյանում այն մասնաշենքը, ուր տեղավորված են օդանավակայանի դիսպետչերական ծառայությունը և ռեստորանը: Դա ամենաբարձր կետն է, որտեղից երևում են թռիչքային դաշտը, օդանավակայանի ողջ տարածքը:

«Զվարթնոց» օդանավակայանը հագեցված է ժամանակակից տեխնիկայով, ստեղծված են բոլոր հարմարությունները ու պայմանները ուղևորների սպասարկումը բարձր հիմքերի վրա դնելու և թռիչքները անվտանգ դարձնելու համար:

Այս հիանալի կոթողի շնորհաշատ հեղինակներն են ճարտարապետներ Ա. Թարխանյանը, Ս. Խաչիկյանը, Լ. Չերքեզյանը

և Ժ. Շեխլյանը, իսկ կոնստրուկտորը՝ Ս. Բաղդասարյանը:

«Զվարթնոց» օդանավակայանից Էջմիածնի խճուղով ուղղություն ենք վերցնում դեպի Երևան: Արգավանդ գյուղի մոտ, ճանապարհի աջ կողմում, բարձունքի վրա բազմագույն տուֆից կառուցված միակուռ պատվանդանով կանգնած են երեք կամարաձև բարձր սյուներ, որոնց ամենավերին, ճակատային մասում, ողջ լայնքով տիրաբար իր հուժկու թևերն է փռել բրոնզակուռ արծիվը, իսկ նրա թիկունքում արեգակն է՝ հավերժական, հզոր ու պայծառ: Դա հայոց հինավուրց գերբի պատկերն է, այսօրվա Երևանի արևմտյան դարպասի խորհրդանիշը: Հենց այստեղ ավարտվում է Էջմիածնի խճուղին ու սկսվում Ծովակալ Իսակովի անունը կրող լայնահուն պողոտան:

Ծովակալ Իսակով: Խորհրդային բազմազգ ժողովրդի կողմից սիրված ու թանկ մի անուն:

Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս, ԽՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ, ՀԽՍՀ ԳԱ պատվավոր անդամ Հովհաննես (Իվան) Ստեփանի Իսակովը ծնվել է Կարսի մարզի Հաջիքենդ գյուղում, երկաթուղայինի ընտանիքում 22.8.1894 թ., վախճանվել է 11. 10. 1967 թ. Մոսկվայում, թաղված է Նովոդևիչի գերեզմանատանը:

Հ. Իսակովը իր փոթորկոտ կյանքը նվիրաբերել է հեղափոխության, երկրի պաշտպանության, գիտության ու գրականության գործին:

Մեծ է ականավոր զորահրամանատարի ներդրումը հատկապես Հայրենական մեծ պատերազմում, ԽՍՀՄ-ի նավատորմի և ռազմածովային գիտության զարգացման գործում:

Հայ ժողովրդի արժանավոր զավակ, մեծատաղանդ գրող-գիտնական Հ. Իսակովի գրչին են պատկանում ծովայինների կյանքից նվիրված ավելի քան 250 բարձրարժեք պատմվածքներ և գիտական հիմնավոր ուսումնասիրություններ: Ծովակալ Իսակովի պողոտայի վրա է գտնվում գունավոր տպագրության տպարանի համալիրը՝ հանրապետության պոլիգրաֆիական արդյունաբերության նոր ու խոշոր ձեռնարկություններից մեկը, որը ԽՍՀՄ-ում առաջինը կառուցվեց Լայպցիգի նախագծով: Այստեղ տպագրվում են հարյուրավոր բարձրորակ գունազարդ գրքեր, ալբոմներ, ուսումնական ձեռնարկներ և այլ հրատարակություններ:

Մեր ճանապարհի ձախ կողմում հայ հեթանոսական շրջա-

նի պատերազմի և կրակի աստված, առասպելական հերոս Վահագնի արձանն է: «Երկնել է ծովը ծիրանի...» ու նորամանուկը՝ Վահագնը, պայքարի է ելել ոսոխի դեմ, նրա ջըլապինդ բազուկներին վիշապներ են փաթաթվել, իսկ նա վճռական է, լեցուն հաղթանակի հավատով:

Ճանապարհը ձգվում է դեպի Երևան: Ձախ կողմում կենտրոնական ավտոկայանն է, որտեղից ուղևորները մեկնում են հանրապետության ամենատարբեր քաղաքներն ու շրջանները: Այնուհետև բազմահարկ բնակելի շենքեր: Նույն շարքում, բարձունքի վրա Երևանի կոնյակի գործարանի համալիրն է: Հայաստանում կոնյակի արտադրությունը սկզբնավորվել է 100 տարի առաջ, 1887 թվականին Երևան քաղաքում:

Բարձրորակ դասական տեխնոլոգիայի և խաղողի տեղական սորտերի հաջող զուգակցումը, Արարատյան հարթավայրի կլիմայական պայմանների առանձնահատկությունները, ինչպես նաև մասնագետ կոնյակագործների հարուստ փորձն ու գիտելիքները ապահովեցին հայկական կոնյակի արժանի հռչակը:

Միջազգային ցուցահանդեսներում ու համտեսներում հայկական կոնյակներն արժանացել են 60 ոսկե և արծաթե մեդալների: «Երևան» կոնյակը ունի 57% թնդություն, այն ամենաբարձր աստիճանի կոնյակն է ԽՍՀՄ-ում, արժանացել է երեք ոսկե և երկու արծաթե մեդալների:

Մեր առջև բացվում է Հրազդանի գեղատեսիլ կիրճի համայնապատկերը: «Հաղթանակ» կամուրջը, 75 հազար տեղանոց «Հրազդան» կենտրոնական ըստադիոնը, տասնյակ բազմահարկ շենքեր ու շինություններ: Ձորի մյուս ափին՝ բարձունքում, վեհորեն կանգնած է Սբ. Սարգիս եկեղեցին (XIII դ.) իր երեք խաչակիր գմբեթներով ու հրաշալի խորաքանդակներով, որոնք ճարտարապետական յուրօրինակ ներդաշնակություն են կազմում և օրգանապես միաձուլվում հրաշալի բնությանը: «Հաղթանակ» կամըրջի մյուս կողմում «Արարատ» տրեստի գինու կոմբինատի հըրաշակերտ շենքն է, որը նախագծել ու կառուցել է ԽՍՀՄ

ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը:

Շենքի արևմտյան պատի վրա կարդում ենք հետևյալ արձանագրությունը.

«Այստեղ 1827 թ. հեղինակի ներկայությամբ առաջին անգամ բեմադրվեց ռուս մեծ գրող Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» անմահ կոմեդիան»:

ԼԵՆԻՆԻ ՊՈՂՈՏԱ

Կամրջի ձախ կողմով, ստորգետնյա անցումով դուրս ենք գալիս Լենինի անվան պողոտա՝ մայրաքաղաքի ամենաբանուկ ու ամենագեղեցիկ պողոտաներից մեկը: Երևանցիները սիրում են երեկոները զբոսնել այս պողոտայի ծառաշատ մայթերով, հիանալ նրա պայծառ ու բազմերանգ լուսավորությամբ, գնումներ կատարել խանութներում ու կրպակներում, վայելել սրճարանների ու ճաշարանների համեղ խորտիկները, ըմպել զովացուցիչ անուշահամ հյութեր, լսել հաճելի երաժշտություն:

Պողոտայի սկզբում, աջ կողմի վրա Երևան քաղաքի պատմության թանգարանն է, մշակույթի հարուստ մի օջախ:

Երևանում գտնվող յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է խորապես ծանոթանալ հայ ժողովրդի պատմության հետաքրքիր դրվագներին, նրա հերոսական ուղուն, սոցիալիստական շինարարության աննախընթաց նվաճումներին, թող այցելի քաղաքի բազմաթիվ թանգարանները, ուր հավաքված են մեր ազգային մշակույթի անմահ գանձերը:

Երևանի պատմության թանգարանը հիմնադրվել է 1931 թվականին: Անցած տարիների ընթացքում թանգարանի ցուցանմուշների թիվը աճել ու հասել է շուրջ 60 հազարի, որոնց զգալի մասը պահպանվում է ֆոնդերում, իսկ ցուցադրություններում եղածները լուսաբանում են Երևանի հեռավոր անցյալից մինչև մեր օրերի պատմությունը: Թանգարանն ունի 9 խոշոր ցուցադրություն, որոնք բաժանված են մինչխորհրդային և խորհրդային բաժինների ու զանազան ենթաբաժինների:

Սրահներում ցուցադրված են Շենգավիթից, Ծիծեռնակաբերդից, Կարմիր բլուրից և այլ բնակատեղերից մշակույթի ու կենցաղի հնագույն շատ առարկաներ, որոնք հավաստում են,

որ Երևանը, որպես բնակավայր գոյություն է ունեցել ավելի քան 6000 տարի մեզանից առաջ:

Հաջորդ սրահը նվիրված է Երևանի հիմնադրմանը: Այստեղ մենք տեսնում ենք Ուրարտական Արգիշտի Առաջին թագավորի սեպագիր արձանագրությունը, ուր նշված է Էրեբունի (այսօրվա Երևան) բերդաքաղաքի հիմնադրման մասին (782 թ. մ. թ. ա.):

Երրորդ սրահում ներկայացված է Ուրարտական պետության վարչա-տնտեսական կենտրոնը՝ Կարմիր բլուրը (Թեյշեբաինի, մ. թ. ա. VII դ.):

Չորրորդ և հինգերորդ ցուցադրությունները պատմում են վաղ միջնադարյան Երևանի մասին, ցուցադրված է VII դարի պատմիչ Սեբեոսի գրքից մի հատված, ուր հիշատակվում է Երևանի անունը: Այստեղ ցուցադրված են նաև միջնադարյան վիմագիր արձանագրություններ, զանազան ճանապարհորդների հուշագրություններ, գծանկարներ և այլն: Հաջորդ սրահի նյութերին ծանոթանալիս պարզ է դառնում, որ XVIII-XIX դարերի ընթացքում պարսկա-օսմանյան տիրապետության ժամանակ ինչպիսի ծանր վիճակ էր ստեղծվել հայ ժողովրդի, մասնավորապես երևանցու համար:

Ցուցանմուշները լուսաբանում են ռուսական զորքերի կողմից ցուցաբերած մեծ օգնության, Երևանի բերդի գրավման և այլ հիշարժան դեպքերի մասին: Թանգարանի հենց այս բաժնում են պահպանվում ռուս հայտնի նկարիչներ Մաշկովի մի շարք գրաֆիկական բնագիր նկարները և Ռուբոյի «Երևանի բերդի գրավումը» յուղաներկ կտավի պատճենը: Փաստագրական նյութեր կան հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության, արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելու պատմական փաստի մասին:

Հարուստ է այն ցուցադրությունը, որը պատմում է XIX դարի վերջի և XX դարի առաջին քառորդի հայ և ռուս հեղափոխականների համատեղ պայքարի դրվագների մասին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար մղված հերոսական պայքարի, անձնազոհ, խիզախ ու անվեհեր հեղափոխական մարտիկների անօրինակ սխրանքի մասին: Արժանավայել ձևով է ներկայացված «Հայրենական մեծ պատերազմը և երևանցիները» բաժինը:

Հարուստ ցուցադրությունները պերճախոս կերպով ներկայացնում են նաև Երևանի խորհրդային շրջանի հետաքրքիր պատմությունը, նրա նվաճումները արդյունաբերության, գիտության, լուսավորության, մշակույթի բնագավառներում:

Թանգարանի հանդիպակաց մասում մշտառատ կոլտնտեսային շուկան է: Ընդարձակ մի տարածություն, երկհարկ սրահներով, որը տարվա բոլոր ժամանակներին լցված է բնության բերք ու բարիքով:

Շուկայից ոչ հեռու, հայ գեղանկարչության մեծ նահապետ Մարտիրոս Սարյանի անունը կրող փողոցն է: Լենինյան մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ԽՍՀՄ Գեղարվեստի Ակադեմիայի իսկական անդամ, Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Սարյանը ապրեց ու ստեղծագործեց մեծ կյանքով (1880-1972 թ. թ.): Հրաշք բնության հրաշք որդին ժողովրդանվեր սխրանքի ուղի է անցել, հասել համաշխարհային փառքի ու ճանաչման: Հանճարեղ արվեստագետի ստեղծագործությունների թեման Հայաստան աշխարհն էր, մեր մեծ հայրենիքը, նրա հրաշք բնությունը, սխրագործ մարդիկ... Սարյանը ստեղծեց հայրենի երկրին ու մարդուն նվիրված մի վիթխարի պատկերասրահ, Հայաստանին պարգևեց մի «Հայաստան»:

Նրա հռչակը տարածվեց աշխարհի բոլոր երկրներում, իսկ զարմանահրաշ կտավները ցուցադրվել են փառաբանված գրեթե բոլոր թանգարաններում: Ճշմարիտ է բնութագրել Սարյանին Ֆրանսիայի մեծ զավակ Լուի Արագոնը.

«Հայաստանի լույսը հասնում է մեզ շնորհիվ Մարտիրոս Սարյանի: Լույսը երջանիկ մարդկանց, լեռների, մրգերի վրա... Սա մի գանձ է վերագտնված: Այնքան գեղեցիկ է նրա գույնը, որ դարերը մեր Սեզանի ու Մատիսի կողքին Սարյանին պիտի հատկացնեն առաջնակարգ տեղ...»:

Լենինի պողոտայի մի հատվածում, ծառ ու ծաղիկներով պսակված պուրակում կանգնեցված է մեծ արվեստագետի հուշարձանը, (հեղինակ՝ Լևոն Թոքմաջյան): Հուշարձանը կերտված է ուրալյան սպիտակ մարմարից, բարձրությունը 5 մետր է, քաշը՝ 60 տոննա: Ձյունասպիտակ հուշարձանը փառահեղ է, նստած է ինքը՝ Վարպետը:

Այս խաչմերուկից մի քանի հարյուր մետրի վրա Մ. Սարյանի տուն-թանգարանն է, հենց իր՝ գույների մեծ վարպետի անունը կրող փողոցի № 3 շենքում: Վարպետաց-վարպետի տուն-թանգարանը եռահարկ գողտրիկ մի շենք է, ամբողջ մի պատկերասրահ: Բնապատկերներ, դիմանկարներ, գծանկարներ և տարբեր բնույթի ու ժանրի աշխատանքներ, որոնցով հիանում է ամեն մի այցե-

լու: Դրանք ստեղծված են ամենատարբեր ժամանակներում և հաճախ տարբեր երկրներում: Դիտելով կտավները այնպիսի զգացողություն ես ապրում, թե գտնվում ես հենց այդ հեքիաթային կիրճում, զգում ես նրա զովը, թվում է, թե կարող ես խմել ու ծարավդ հագեցնել լեռնային գետակի սառնորակ ու անուշ ջրով, թե սրանք հենց այն ծաղիկներն են, որոնց վրայից մեղուները նեկտար են հավաքում...

Սարյանը՝ բնության հրաշք զավակը, արևի ու լույսի մեծ երգիչը ապրեց շուրջ մեկ դար, ստեղծեց անմահ գանձեր ու հանձնեց հավերժությանը:

Լենինի պողոտայի ու Սարյան փողոցի աջ ու ձախ կողմերում ժամանակակից արվեստի թանգարանի մասնաշենքերըն են: Այն հիմնադրվել է 1972 թվականին և որպես այդպիսին միակն է ԽՍՀՄ-ում: Այստեղ հավաքված են ավելի քան 200 հեղինակների 1200 գործեր, որոնցից շուրջ չորս հարյուրը պարբերաբար ցուցադրվում են:

Ցուցադրություններին ծանոթանալուց հետո հիացմունքի ջերմ խոսքեր են գրել իտալացի նկարիչ Ռենատո Գուտուզոն, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Միխայիլ Ուլյանովը, մեքսիկացի անվանի նկարիչ Խոսե Դավիթ Ալֆարոն և ուրիշներ:

Հատկապես ջերմ է ամերիկահայ հանճարեղ գրող Վիլյամ Սարոյանի 1975 թվականին թողած գրառումը.

«... Գեղանկարչական կտավներում ու քանդակներում հայ ժողովրդին ես տեսնում եմ ավելի ուժեղ, քան երբեք: Թանգարանը ժամանակակից է, տաղանդը վիթխարի: Յուրաքանչյուր հայ այցելու պետք է հասկվի երջանկության այն զգացումով, թե որքան մեծ առաջընթաց է ապրել հայ ժողովուրդը այս կարճ 55 տարիների ընթացքում»:

Մեծ առաջնորդի անունը կրող պողոտայով քայլում ենք առաջ: Աջ ու ձախ կողմերում գերատեսչական - վարչական շենքեր են, բնակելի տներ, առևտրական օբյեկտներ, երաժըշտական ուսումնարան, գեղարվեստի դպրոց, գրախանութ... Անցորդի ուշադրությունն է գրավում 20 թիվը կրող շենքի մուտքին ամրացված գրանիտե հուշաքար-քանդակը.

«Այս տանը 1939-1984 թվականներին ապրել է բանաստեղծ Հովհաննես Շիրազը»:

Հուշաքար-քանդակի հեղինակներն են բանաստեղծի երեք որդիները՝ ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Արա Շիրազը, Մասիս Շիրազը և Սիփան Շիրազը:

Հովհաննես Շիրազ: Հայ ժողովրդի համար նվիրական մի անուն: Խորհրդահայ մեծատաղանդ բանաստեղծը ծնվել է 1914 թ. Ալեքսանդրապոլ քաղաքում (այժմ՝ Լենինական): Շիրազը հենց սկզբից սիրվեց ժողովրդի կողմից, սիրվեց իր ստեղծագործությունների համար:

Քաղաքի Գլխավոր պողոտան: Ձախ անկյունում հայկական օդային հաղորդակցությունների կենտրոնական գործակալությունն է, կողքին ստորգետնյա խոշոր հանրախանութը:

Սարյան փողոցում բազմահարկ, ապակեպատ ճակատով վեր խոյացած շենքը ՀԽՍՀ կապի մինիստրությունն է, ուր տեղավորված է նաև կենտրոնական փոստատունը իր միջքաղաքային հեռախոսային ծառայություններով:

Անցնում ենք Գլխավոր պողոտան: Ձախ կողմի վրա, № 17 շենքում տեղավորված է խորհրդահայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի տուն-թանգարանը, ուր (1932—1937 թթ.) ապրել ու ստեղծագործել է հեղափոխության բոցաշունչ երգիչը:

Չարենցին ծնել է իր դարը՝ համաշխարհային պատմության փոթորկահույզ ամենազոր ժամանակը:

Եղիշե Չարենց (Եղիշե Աբգարի Սողոմոնյան): Ծնվել է 1897 թ. Կարս քաղաքում (այժմ՝ Թուրքիայում): Վախճանվել է 1937-ին Երևանում: 1915-ին զինվորագրվել է հայկական յոթերորդ կամավորական բանակին և Կարսից հասել Վան, 1916-ին մեկնել է Մոսկվա, սովորել Շանյավսկու անվան գըրական համալսարանում: 1918-19-ին որպես կարմիր բանակի զինվոր մասնակցել է քաղաքացիական կռիվներին:

1920 թվականին Չարենցն աշխատել է Հայաստանի լուսավորության ժողկոմում, որպես արվեստի բաժնի վարիչ: Նորից Մոսկվա՝ ուսումնառության: 1924-ին մեկնել է արտասահման: Եղել է Պոլսում, Աթենքում, Հռոմում, Նեապոլում, Վենետիկում, Փարիզում, Բեռլինում և այլուր: Հայաստանում հիմնադրել է «Նոյեմբեր» գըրական միավորումը: 1928-ին Երևանում ծանոթացել է Մաքսիմ Գորկու հետ, 1928-35-ին աշխատել է Հայաստանի Պետհրատում, որպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ:

Չարենցի տեղը XX դարի պոեզիայի աստղաբույլի մեջ ճշգրիտ բնութագրել է Ֆրանսիայի մեծ զավակ Լուի Արագոնը.

«Մեր դարի ճակատը պսակված է բանաստեղծական մի շարք պայծառ անուններով,

Տեսարան Չարենցի հուշակամարից

Հայաստանի պարի պետական անսամբլի ելույթներից

Из выступлений Государственного ансамбля танца Армении

«... Ու Նաիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում»

«...И наирянок чуткий стан в обряде танца я люблю»

«Զվարթնոց» օդանավակայանը
Аэропорт «Звартноц»

Հեռուստատեսային աշտարակը
Телевизионная башня



Կոնյակի արտադրությունը Հայաստանում սկզբնավորվել է 1878 թվականին Երևանում (հիմնադիր Ներսես Թաիրյան)

Производство коньяка в Армении было основано в 1878 году в Ереване Нерсесом Таиряном



Անգլիայում դա Կիպլինգն է, Ֆրանսիայում՝ Ապոլիներն ու Էլյուարը, Գերմանիայում՝ Ռիլկեն, Իսպանիայում՝ Գարսիա Լորկան, Ռուսաստանում՝ Մայակովսկին ու Եսենինը, Հայաստանում՝ Չարենցն ու Իսահակյանը»:

Բանաստեղծի քնարը միշտ էլ ժողովրդի հետ է, այն հուզում է, հոգում արթնացնում նվիրականը, սովորեցնում է ջերմորեն սիրել հայրենիքը: «Ես իմ անուշ Հայաստանին» մանկուց տպավորվում է ամեն հայի հոգում և ընդմիշտ մնում է նրա հետ, որպես հայրենիքի հանդեպ հավերժական հրկեզ սեր:

Ճշմարիտ է ասել Վիլյամ Սարոյանը. «Մենք հազվադեպորեն կմտածենք իր մասին իբրև Եղիշե: Մեր տղան հավերժ Չարենցն է՝ հայկական արևի, հույզի, ծիծաղի, վշտի և վերջապես լռության որդին . . .»:

Հայ երախտապարտ ժողովուրդը հարգանքի մեծ տուրք է մատուցում իր մեծանուն զավակին: Չարենցի անունով են կոչվում Հայաստանի գրականության և արվեստի պետական թանգարանը, Չարենցավան քաղաքը, միջնակարգ դպրոց և լայնահուն փողոց Երևանում: Սահմանվել է Չարենցի անվան գրական մրցանակ: Մայրաքաղաքի օղակաձև այգում վեր է խոյանում բանաստեղծի 18 մետրանոց մոնումենտալ հուշարձանը:

Եղիշե Չարենցը խորհրդահայ գրականության անկրկնելի դեմքերից է՝ մեծ Հոկտեմբերի, վերածնված Հայաստանի բոցաշունչ երգիչը:

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:
Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:
Ուր է՛լ լինեմ-չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր —
Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան—յա՛րն եմ սիրում:
Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխարհ անցի՛ր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա,
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:

Ե. Չարենցի տուն-թանգարանի հանդիպակաց մասում Ն. Կ. Կրուպսկայայի անվան մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտն է: Անցած 60 տարիների ընթացքում այստեղ ծնվել է 250 հազարից ավելի երեխա: Երևանում տարեկան միջին հաշվով ծնվում է 22 հազար երեխա, որոնցից ավելի քան չորս հազար մանուկների առաջին ճիչը լսվում է այս հոյակերտ ինստիտուտի կամարների տակ:

Շարունակում ենք մեր շրջագայությունը:

Լենինի անունը կրող պողոտան նման է վիթխարի մի թանգարանի: Յուրաքանչյուր շենք, արձան, պուրակ, իր հետաքրքիր պատմությունն ունի: Այս արժանիքների շնորհիվ է նաև, որ Երևանը իրավացիորեն դասական քաղաքի համբավ է վայելում:

Հասնում ենք Թումանյան փողոց, Երևանի գեղեցիկ ու լայնահուն փողոցներից մեկը: Ձախ կողմում, բարձունքի վրա հայ հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի թանգարանն է, որը բացվել է 1953-ի ապրիլին՝ բանաստեղծի մահվան 30-ամյակի առթիվ: Այստեղ ամեն ինչ սրբություն է, կարոտի հուշ: Այցելուի առջև փռվում է Լոռվա հեքիաթային բնաշխարհը, թումանյանական հրաշալի աշխարհը: Մուտքի մոտ մեծ Լոռեցու կիսանդրին է, որը բարի, լուսավոր ու իմաստուն հայացքով նայում է աշխարհին, նայում վերածնված ու

իր երջանկությունը կերտող հայ ժողովրդին:

Կան գրողներ, որոնք վիթխարի ուժով մարմնավորում են իրենց ծնող ժողովրդի դարավոր ավանդույթները, հոգեկան կերպարի լավագույն գծերը, քայլում ժամանակի հետ, և լինելով խորապես ազգային՝ արտահայտում են համամարդկային խոհեր ու զգացմունքներ: Այդպիսին է հայ ժողովրդի ամենասիրելի գրող, մեծ մտածող Հովհաննես Թումանյանը: Նա եղել ու մնում է հայ գրականության առաջընթացի հզոր փարոսը: Իր ընդգրկումների վիթխարիությամբ ու խորքով, բանաստեղծական ու արձակ գործերի ինքնատիպությամբ կանգնել է համաշխարհային նշանավոր անունների կողքին:

Հայ գրականության համար Թումանյանը նույնքան մեծ է, որքան Պուշկինը՝ ռուսական, Գյոթեն գերմանական, Հոմերոսը՝ հունական, Շևչենկոն՝ ուկրաինական, Ռուսթավելին՝ վրացական գրականությունների համար:

Հովհ. Թումանյանը գրչով ու հասարակական անձնվեր գործունեությամբ բարձր հնչեցրեց ժողովուրդների բարեկամության ու եղբայրության երգը: Նա սրտանց ողջունեց Հոկտեմբերը, կանգնեց նոր կյանք կերտող իր ժողովրդի կողքին և իր հրեղեն խոսքով բարեմաղթեց նրա վերածնունդը:

«... Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտա առաջին:
Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նոր հայրենիք,
Հզոր Հայրենիք»:

Համառոտ Թումանյանի մասին ճշմարիտ բնութագրում է տվել հայ ժողովրդի մեծ բարեկամ Վալերի Բրյուսովը.

«Թումանյանի պոեզիան իր ամբողջության մեջ ինքը՝ Հայաստանն է, հնադարյան ու նոր, մեր վարպետի կողմից հարություն առած ու տպավորված բանաստեղծության մեջ»:

Հովհաննես Թումանյանը ծնվել է 1869 թ. փետրվարի 19-ին, Լոռու (այժմ Թումանյանի շրջան) Դսեղ գյուղում: Ու թեպետ ապրեց ընդամենը 54 տարի, բայց վաստակը դարերի է հավասար: Նա գրականության պատմություն մտավ որպես ազգային մեծ գրող: Ճշմարտացիությունը, անկեղծությունը և պարզությունը բնորոշ են Թումանյանական բանարվեստին:

«Ինչպես բարձր են Հայաստանի լեռները, այնքան էլ բարձր է Թումանյանի բարոյական դեմքը: Ինչպես խորն են Հայաստանի ձորերը, այնպես էլ խորքն են Թումանյանի մտքերը»:

Այսպես է բնորոշել ուկրաինական նշանավոր բանաստեղծ Պավլո Տիչինան Թումանյանին:

«Ամբողջ մարդկությունը մի ընտանիք է: Ժողովուրդները էդ մեծ ընտանիքի անդամներն են: Գնում են մի նպատակի, և ամեն մեկն ունի իր դերը երջանիկ դարձնելու ամենքին և ամենքի երջանկությունը դարձնելու ամեն մեկի երջանկությունը»:

Թումանյանի այս խորը և համամարդկային արտահայտությունը՝ աշխարհի ժողովուրդներին միմյանց բարեկամ ու եղբայր տեսնելու ազնիվ ձգտումը, մեծ մտածողի անսահման բարության վառ առհավտչյան է: Մեծ է Թումանյանը, վիթխարի ու անընդգրկելի է նրա աշխարհը:

Իմաստուն ու խորախորհուրդ է գրել Եղիշե Չարենցը.

«... Բազում պոետներ կան, բայց
Թումանյանն է անհաս Արարատը
Մեր նոր քերթության...»:

«Հեղեղի պես եկավ նա առասպելական Լոռվա վայրենի լեռներից, բերելով իր հետ մի ամբողջ բնություն՝ հուռթի և բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ, իր տոհմիկ երգերով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ... Հեղեղը ժամանակի մեջ գավելով ու մաքրվելով բյուրեղացավ ու ոճավորվեց այն սքանչելի, անմահ լեգենդների ու պոեմների մեջ, որ կազմում են մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը...»:

«Նրա կախարդական գրիչը ուր որ դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշքը»:

Սա հայ դասական քնարերգության վարպետ Ավետիք Իսահակյանի խոստովանությունն է:

Թումանյանի հրաշք արվեստում հայ ժողովուրդը խոսեց իր ցավերից, հոգսերից, իր երազանքներից, այդ արվեստում բյուրեղացավ նրա ոգին, էպիկական հանդարտությամբ ու քնարական ջերմությամբ տրոփեց հերոսական ու աշխատասեր մեր ժողովրդի սիրտը:

Շարունակում ենք մեր շրջագայությունը:

Քիչ առջևում, պողոտայի աջ կողմում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքն է: Թատրոնի առջև կանգնած են Թու-

մանյանի և մեծ երգահան Ալեքսանդր Սպենդիարյանի հուշարձանները, որոնք յուրովի իմաստավորում, հանդիսավորություն ու կշռույթ են տալիս մշակույթի այս շենշող օջախին:

Մեծատաղանդ ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի նախագծով ու նրա նվիրական ջանքերով է վեր խոյացել արվեստի այս հոյակերտ տաճարը, որը Փարիզում կայացած համաշխարհային մրցույթի ժամանակ արժանացել է Ոսկե մեծ մեդալի: Հայր և որդի Թամանյանները մեկ միասնական, օղակաձև հսկա կառույցում, նույն առանցքի վրա ստեղծեցին երկու դահլիճ 2660 հանդիսատեսի համար՝ օպերային թատրոնի դահլիճը և Հայֆիլհարմոնիայի մեծ համերգասրահը: Ամֆիթատրոնի ձև ունեցող այս շինությունը ճարտարապետական ինքնատիպ ու հետաքրքիր, միաժամանակ արտահայտիչ ծավալներով կառույց է: Այստեղ, առաջին անգամ 1935 թ. մարտի 27-ին բեմադրվեց Թումանյանի անմահ պոեմի հիման վրա ստեղծված մեծատաղանդ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան, որը խոշոր կտավի և բարձրարվեստ գործ լինելով՝ առանձնահատուկ տեղ է գրավում մեր ազգային երաժշտության պատմության մեջ: Ընդ որում «Անուշ» օպերան առաջին անգամ բեմադրվել է 1912 թ. Ալեքսանդրապոլի (Լենինական) քաղաքային թատրոնում:

Երևանի օպերային թատրոնը ստեղծման օրից վերելքի հրաշալի ուղի է անցել: Այն մեծ ճանաչում ունի ինչպես մեր մեծ Հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Այս նույն շենքում է նաև Հայֆիլհարմոնիայի մեծ համերգասրահը, որը կրում է աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի անունը, ուր բազմիցս հանդես է եկել անմահ արվեստագետը:

Արամ Խաչատրյանը քսաներորդ դարի մեծ կոմպոզիտորներից է:

Ժամանակի ականավոր կոմպոզիտոր, դիրիժոր, սոցիալիստական աշխատանքի հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան մրցանակի և ԽՍՀՄ Պետական մրցանակների դափնեկիր, Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արամ Խաչատրյանի ապրած 75 տարիների գեղեցիկ կյանքն են բնութագրում նրա ջերմ հայրենասիրությունը, ստեղծագործական փոթորկուն վերելքը, կատարողական փայլուն արվեստը, կրքոտ հրապարակա-

խոսությունը, մանկավարժական բեղուն գործունեությունն ու այլ հատկանիշներ:

Հանճարեղ կոմպոզիտորը նորովի ներկայացրեց հայ ժողովրդական և հինավուրց երաժշտությունը: Երեսնական թվականներին նրա ստեղծագործական որոնումների պսակը դարձավ «Գայանե» բալետը, որը հայ ազգային երաժշտությանը բերեց համաշխարհային ճանաչում:

Արամ Խաչատրյանը կերտեց անմահ կոթողներ՝ նրա ստեղծագործության փառապսակը եղավ աշխարհացունց «Սպարտակ» բալետը, որի համար կոմպոզիտորը արժանացավ Լենինյան մրցանակի: Տաղանդավոր արվեստագետը ստեղծեց իր մեծակտավ Երրորդ սիմֆոնիան, երաժշտություն գրեց բազմաթիվ կինոնկարների համար, իսկ «Ստալինգրադյան ճակատամարտը» կինոնկարի համար արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի: Գրեց «Դիմակահանդեսի», «Պեպոյի», Հայկական ԽՍՀ պետական հիմնի երաժշտությունը, ստեղծեց ջութակի, թավջութակի, դաշնամուրի կոնցերտ-ռապսոդիաները, մենանվագներ ալտի, ջութակի, դաշնամուրի համար:

Արամ Խաչատրյանը արմատներով կապված էր հայրենի հողին, նա գովերգում էր նորն ու գեղեցիկը, կյանքի ստեղծագործ պաթոսը, գովերգում ուժեղ, ազատ ու գեղեցիկ մարդուն:

«— **Ախարհում իշխողը պետք է լինի մարդասիրությունը, իսկ երաժշտական արվեստն ու մարդասիրությունը միմյանցից անբաժան են»** — հարցազրույցներից մեկում ասել է մեծ կոմպոզիտորը:

Ա. Խաչատրյանը հեղինակային համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ տարբեր քաղաքներում և արտասահմանյան 55 երկրներում՝ Եվրոպայի սոցիալիստական բոլոր երկըրներում, ինչպես նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Ճապոնիայում, ԳՖՀ-ում և այլուր:

Հայ մեծ կոմպոզիտորը երաժըշտական արվեստում վիթխարի ներդրումների համար պարգևատրվել է Լենինի երեք, Աշխատանքային Կարմիր դրոշի, Հոկտեմբերյան հեղափոխության շքանշաններով, ինչպես նաև արտասահմանյան երկըրների բազմաթիվ մեդալներով ու շքանշաններով, այդ թվում Ֆ. Լիստի, Բ. Սմետանայի, Բ. Բարտոկի հուշամեդալներով, խաղաղության համաշխարհային խորհրդի՝ Ժ. Կյուրիի մեդալով, ԲԺՀ-ի Կիրիլի և Մեֆոդիի Առաջին աստիճանի, Ֆրանսիական «Արվեստի և գրակա-

Ս. Սարգիս եկեղեցին (XIII դ.)
Церковь св. Саркиса (XIII в.)

«Հաղթանակ» կամուրջը
Мост Победы

«Հրազդան» ստադիոնը
Стадион «Раздан»

նության» երրորդ աստիճանի շքանշաններով: Ընտրվել է Իտալիայի «Սանտա Չեչիլիա» երաժշտական ակադեմիայի պատվավոր անդամ, ԳԴՀ-ի ԳԱ թղթակից անդամ, Մեքսիկայի կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսոր: Լեհաստանի ժողովրդական հանրապետությունը նրան ճնորհել է արվեստի վաստակավոր գործչի կոչում:

«Չափազանց հզոր է Արամ Խաչատրյանի էմոցիոնալ լիցքը», — գրել է հանրահռչակ ջութակահար Դավիթ Օյստրախը:

Իսկ կոմպոզիտոր Դմիտրի Կաբալևսկին դիպուկ է նկատել.

«Արամ Խաչատրյանը հարուստ է, հարուստ է այն ամենով, ինչը նրան տվել է հայրենիքը, նրա հարազատ Հայաստանը»:

Լենինի պողոտան
Проспект Ленина

ՀԽՍՀ կապի մինիստրության շենքը
Здание Министерства связи Армянской ССР



Հողի բարիքները...
Дары земли...





Մ. Սարյան—«Հայաստան»

М. Сарьян «Айастан»

Մ. Սարյանի հուշարձանը

Памятник М. Сарьяну

Ալ. Սպենդիարյանի անվան
օպերայի և բալետի
թատրոնը
Театр оперы и балета
им. А. Спендиаряна

Տեսարան «Անուշ»
օպերայից
Сцена из оперы
«Ануш»

Ալ. Սպենդիարյանի հուշարձանը
Памятник Ал. Спендиаряну

Հովհ. Թումանյանի հուշարձանը
Памятник Ов. Туманяну

Սայաթ-Նովայի պողոտան
Проспект Саят-Новы

Հայաստանի պետական երգչախումբը
Государственная капелла Армении

ՀԿԿ Կենտկոմի շենքը
Здание ЦК КП Армении

Արամ Խաչատրյանի տուն- թանգարանում
Дом-музей Арама Хачатуряна

ՀԽՍՀ ԳԱ նախագահության շենքը
Здание Президиума Академии наук Армянской ССР

Ստ. Շահումյանի անվան համագումարների պալատը
Дворец съездов им. Ст. Шаумяна

Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճից ոչ հեռու, Պլեխանովի փողոցի վրա է գտնվում Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը: Շենքի վերհաշուք հինգ կամարները զարդարում են թանգարանի ճակատային մասը: Հենց մուտքի մոտից լսվում է հանճարեղ Խաչատրյանի աննման երաժշտությունը, որը ուղեկցում է այցելուին թանգարանում գտնվելու ժամանակ: Տուն-թանգարանը բացվել է 1984-ի հունվարին: Եռահարկ այս շենքում ցուցանմուշների թիվը հասնում է 11.000-ի, որոնք մանրամասնորեն պատմում են մեծ արվեստագետի գեղեցիկ կյանքի ու գործունեության մասին:

Աշխարհահռչակ կոմպոզիտորը իր մահկանացուն կնքեց 1978 թվականին և ննջում է հայ մեծերի կողքին՝ Երևանի քաղաքային պանթեոնում:

Լենինի պողոտայով քայլում ենք առաջ: Աջ կողմում միջնադարի մեծ մտածող, երգահան, բանաստեղծ ու նվագածու Սայաթ-Նովայի աղբյուր-հուշարձանն է, իսկ մի քանի քայլի վրա՝ նրա անունը կրող երաժշտական դպրոցը և լայնահուն պողոտան:

Սայաթ-Նովան Անդրկովկասի բանաստեղծ-երգիչն է, և նրա երգերը օրվա բոլոր ժամերին հնչում են ռադիոյով, հեռուստատեսությամբ, համերգասրահներում:

Սայաթ-Նովան հայ գուսանական-ժողովրդական քնարերգության գագաթն է: Խորապես ազգային երևույթ լինելու հետ միասին Սայաթ-Նովան առաջին բանաստեղծն էր, որը իր բազմալեզու ստեղծագործությամբ ու առօրեական գործունեությամբ մեծ դեր խաղաց Կովկասի ժողովուրդների հոգեվոր մերձեցման ասպարեզում: XVIII դարի երկրորդ կեսից նըրա հանճարի շնչով են ջերմացել հայը, վրացին, ադրբեջանցին: Նա եղբայրական այս երեք ժողովուրդների լեզուներով հնչեցրեց իր ոսկե քնարը:

Կոմիտաս (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) — ծնվել է 1869 թվականին Քյոթահիայում (Թուրքիա), վախճանվել է 1935 թվականին Փարիզում: Թաղված է Երևանում, իր անունը կրող զբոսայգում գտնվող հայ մշակույթի գործիչների պանթեոնում:

Կոմիտասը հայ ժողովրդի ամենահանճարեղ և շատ սիրված զավակներից է, նրա բազմադարյան մշակույթի ամենամեծ երախտավորներից մեկը՝ նվիրական ու սրբացած մի անուն:

Նա միայնակ կատարեց ավելին, քան կարող էր կատարել երաժիշտ-ազգագրագետների մի ամբողջ կաճառ: Եղավ

հայ ոգու հայտնաբերողը երաժըշտության, երգի մեջ, մեր ժողովրդի ինքնությունը հասւռատող մեղեդիների հուզաթրթիռ աշխարհում, մեր հավերժախոս երգարանը մատդկության երաժշտական մշակույթի պատմության մեջ:

Հանճարեղ կոմպոզիտորը շրջել է ողջ Հայաստանը, հավաքել ու գրի է առել ավելի քան երեք հազար երգ, մշակել, մաքրել դրանք օտարա.. տ ազդեցություններից և վերադարձրել ժողովրդին: Մեծ Կոմիտասը հազվագյուտ խմբավար էր, մեծահմուտ երգիչ, կատարող ու բանաստեղծ, իմաստուն գիտնական, կրքոտ հրապարակագիր և հրապարակախոս:

Տխուր կյանք է ունեցել մեծ արվեստագետը: Զրկվելով ծնողներից, որբացած 12-ամյա պատանուն Արևմտյան Հայաստանից բերել են Էջմիածին և ուսման տվել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ուր գեղեցիկ ու հմայիչ ձայնի և երաժշտական բացառիկ ընդունակությունների համար հատուկ ուշադրություն է դարձվել նրա երաժըշտական դաստիարակությանը: Ճեմարանն ավարտելով՝ 1893-ին նշանակվել է երաժշտության ուսուցիչ և խմբավար Մայր տաճարում: 1894-ին ձեռնադրվել է կուսական աբեղա: Նրան շնորհել են յոթերորդ դարի բանաստեղծ ու երաժիշտ կաթողիկոս Կոմիտասի անունը: Մեկ տարի անց դարձել է վարդապետ և այնուհետև կոչվել ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ: Սովորել է Թիֆլիսում, ավարտել Բեռլինի կոնսերվատորիան: Երաժշտական բեղմնավոր գործունեություն է ծավալել Գերմանիայում, գրել երգեր, ռոմանսներ, խմբերգեր:

Վերադառնալով Էջմիածին եռանդուն կերպով շարունակել է գիտական և մանկավարժական աշխատանքը: Ճեմարանի խմբով համերգներ է տվել Երևանում, Բաքվում, Թիֆլիսում: Իր արվեստը ցուցադրել ու դասախոսություններ է կարդացել Փարիզում, Շվեյցարիայի քաղաքներում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Վենետիկի Մխիթարյան միաբանությունում և այլուր: Ավստրիական նշանավոր երաժշտագետ Է. Վելլեշը ծանոթանալով Կոմիտասի երգերին, նրան բնութագրել է որպես «ներդաշնակության և պոլիֆոնիայի հազվագյուտ վարպետի»:

1910 թվականին տեղափոխվել է Կ. Պոլիս և 1912-ին կազմելով «Հայ գուսան» երգչախումբը, երաժշտական-խմբավարական, մանկավարժական-պրոպագանդիստական բեղուն աշխատանք է ծավալել:

Անվանի կոմպոզիտորը բնակվելով Կ. Պոլսում, ակտիվ մասնակցություն է բերել նաև թուրքական մշակութային կյանքին, երգեր հորինել թուրք բանաստեղծների խոսքերով, կարդացել բազում դասախոսություններ: 1915 թ. ապրիլի 2-ին և 3-ին «Թուրք օջախ» մշակութային կենտրոնի հատուկ հրավերով մեներգել և երգչախմբով կատարել է իր ստեղծագործությունները, որոնք մեծ ընդունելություն են գտել թուրք ունկնդրի կողմից: Բայց օրեր անց կատարվեց զարհուրելին:

1915 թ. թուրքական կառավարության կազմակերպած Մեծ եղեռնը, բարբարոսաբար բնաջնջեց երկու միլիոն անմեղ հայերի: Այդ ցնցող ողբերգությունը և մեծ արվեստագետի աքսորում կրած սպանիչ մղձավանջը նրան հասցրեցին մտավոր հավասարակշռության անդառնալի կորստի: (1935 թ. Փարիզի հոգեբուժական հիվանդանոցում հանճարեղ Կոմիտասը կնքեց իր մահկանացուն):

«... Կոմիտասի երաժշտությունը ոճական անաղարտություն է, վսեմաշուք լեզու: Ամեն մի հայ կոմպոզիտոր պետք է իմանա նրա ստեղծագործությունները: Ես միշտ եղել եմ ու գերված կմնամ Կոմիտասի երաժշտությամբ»,—ասել է Արամ Խաչատրյանը:

«... Կոմիտաս անունը թանկ է, որպես անուն ականավոր երաժիշտներից մեկի՝ լուսավորչի, որի տաղանդին, մտքին ու սրտին պարտական ենք ծնունդով, զարգացմամբ ու ծաղկմամբ...»—Դմիտրի Կաբալևսկի:

«—Երազում եմ,- գրել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայի ռեկտոր, ռուսական պետական երգչախմբի ղեկավար Ալեքսանդր Սվեշնիկովը,- **որ իմ ղեկավարած երգչախումբը կատարի Կոմիտասի «Պատարագներից» մի քանիսը: Ինչպիսի յուրահատուկ վարպետություն է դա»:**

Շատ շատերին է հմայում նրա թովիչ ու զուլալ, պարզ ու վճիտ, խոր ու խորհրդավոր երաժշտությունը: Կոմիտասը հայ ժողովրդի հավերժորեն հընչող ոգին է, ազգային հպարտությունը, «Անլռելի զանգակատունը»:

Քայլում ենք առաջ: Լենինի պողոտայի և Մոսկովյան փողոցի հատման մասում, ձախ կողմի վրա, Թատերական հրապարակն է, ուր կանգնած է մեծատաղանդ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը: Անմահ ճարտարապետը իր առջև փռել է Երևանի հատակագիծը և գլխահակ ու մտազբաղ պրպտում է, խորհում, աշխատում: (Աշխարհում միակ

քաղաքը, որտեղ կանգնեցված է իր ճարտարապետի հուշարձանը): Հուշարձանի հիմնաքարի երկայնքով փորագրված է բանաստեղծ Եղիշե Չարենցի հետևյալ տողը

«Նա տեսել է երևի արևային մի քաղաք»:

Հայ հանճարեղ ճարտարապետ, խորհրդային ճարտարապետության ականավոր գործիչ Ալ. Թամանյանը 1904 թ. Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան ավարտելուց հետո, ձեռնամուխ է լինում մի շարք ուշագրավ շենքերի ու շինությունների նախագծմանն ու կառուցմանը: Նրա նախագծով են կառուցվել Կազանի Պրոգորովսկայա կայարանի շենքը, Յարոսլավլի արդյունաբերական ցուցահանդեսի տաղավարներն ու այլ շենքեր: Ճարտարապետական գիտության զարգացման գործում նշանակալից ներդրման համար պարգևատրվել է Ոսկե մեծ մեդալով, իսկ 1914 թվականին արժանացել ակադեմիկոսի կոչման:

1923 թվականից Թամանյանը աշխատում է Հայաստանում: Կազմում է Երևանի վերակառուցման նոր հատակագիծը, որի սկզբունքներով մինչև այսօր էլ ընդարձակվում ու զարգանում է հայոց մայրաքաղաքը: Գլխավոր հատակագծի հիմքում, որպես քաղաքաշինության հաջողված ու լավագույն օրինակ, ընկած է օղակաձև-ճառագայթային քաղաք-այգու հատակագծման սկզբունքը՝ հյուսիս-հարավ կոմպոզիցիոն առանցքի վրա, ելնելով տեղանքի պայմաններից ու փողոցների գոյություն ունեցող ցանցից: Թամանյանի նախագծով կառուցվել են բազմաթիվ շենքեր ու շինություններ, որոնցից Հայկական ԽՍՀ կառավարական տունը, օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը անթառամ փառքով պսակեցին հեղինակի անունը:

Լենինի պողոտայի և Մոսկովյան փողոցի խաչմերուկներում է գտնվում ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարի տուն-թանգարանը: Բազմաթիվ ցուցանմուշները այցելուներին հանգամանալից պատմում են մեծ արվեստագետի գեղեցիկ կյանքի ու նրա թողած ստեղծագործական հարուստ ժառանգության մասին:

Այստեղ ցուցադրված են գեղանկարներ, քանդակներ, գրաֆիկական աշխատանքներ, լուսանկարներ, փաստաթղթեր, հրատարակություններ և այլն: Ճաշակով ձևավորված ցուցադրությունները Ե. Քոչարի մասին ամբողջական պատկերացում են տալիս դիտողին, որոնցից շատերը, ի նշան սիրո ու

Տաղով եկավ,
Ախով գնաց Սայաթ-Նովան,
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ-Նովան,
Սիրով եկավ,
Սոով գնաց Սայաթ-Նովան,
Սիրով մնաց Սայաթ-Նովան
ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Սայաթ-Նովայի հուշարձանը
Памятник Саят-Нове



Саят-Нова воспел своей золотой лирой свободу и справедливость, любовь и счастье, дружбу народов, дарил людям цветы жизни

Ե. Քոչար — «Նատյուրմորտ»
«Натюрморт» — Е. Кочар

Ալ. Թամանյանի հուշարձանը
Памятник Ал. Таманяну

Պարարվեստի ուսումնարանում
В хореографическом училище

երախտագիտության, ջերմ գրառումներ են թողնում տպավորությունների գրքում:

«Մեծ ուրախություն ունեցա այցելելու Եր. Քոչարի թանգարանը: Հիշում եմ 1966-ին Երևանում նրա հետ ունեցած մեր անմոռաց հանդիպումները: Իրապես հիացած եմ Վարդան Մամիկոնյանի արձանով: Միշտ մտքիս մեջ է Փարիզը, 1930-ական թվականները, երբ Քոչարի հետ միասին էինք: Երևանը հարստացավ արվեստի այս սքանչելի օջախով, որը պիտի ծառայե նոր սերունդներին, ցույց տալու, թե որքան մեծ արվեստագետ եղած է մեր սիրելի Քոչարը»:

Այս գրառումը թանգարանի բացման հաջորդ օրը՝ 1984-ի հունիսի 23-ին, թողել է ժամանակի մեծ նկարիչ՝ ֆրանսիական Ակադեմիայի անդամ Գառզուն՝ Գառնիկ Զուլումյանը:

Երվանդ Քոչարը հայ ազգային մշակույթի ճանաչված դեմքերից է: Մեծ նկարիչ, քանդակագործ-մոնումենտալիստ, նորարար ու գյուտարար: Այսպես է բնութագրում հայ արվեստասեր ժողովուրդը իր սիրելի զավակին:

Թիֆլիս, Փարիզ, Երևան: Ահա Եր. Քոչարի ստեղծագործական կյանքի երեք հիմնական փուլերը: Առաջինում՝ արևելքի այս պերճաշուք քաղաքում ծնվել է, առնականացել, երկրորդում՝ երիտասարդ հասակում ընկղմվել է աշխարհի քաղաքակրթության ու արվեստների հորձանուտը, իսկ հայրենի քաղաքում՝ Երևանում, հասունացել, հղկվել ու ստեղծել է մեծ արվեստագետին արժանի գլուխգործոցները:

Երվանդ Քոչարը բազմաշերտ, բազմաժանր ու բեղուն արվեստագետ է: Գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն և գեղանկարչություն տարածության մեջ: Հատկապես վերջինը, որ ամենուր ընկալվել ու ընկալվում է որպես նոր ուղղություն արվեստում:

Ֆրանսիացի հայտնի քննադատ և արվեստի պատմաբան Վոլդեմար Ժորժը գրել է.

«Քոչարի տարածական նկարչությունը ժամանակակից արվեստի գերագույն նվաճումներից մեկն է, բնորոշ ուրվատեսիլների դարաշրջանին, նկարիչների ու քանդակագործների համար երրորդ ուղի, ինքնուրույն մի արվեստ: Ժամանակն է Քոչարին՝ այդ աբարչին արժանին մատուցել»:

Մեծ նկարիչ-քանդակագործի մտքի թռիչքը 60-70-ական թվականներին փայլատակեց նորովի, երբ հրաշալի արվեստագետը կերտեց և հայրենի քաղաքում՝ Երևանում, բարձր պատվանդանի վրա կանգնեց-

րեց երկու հրեղեն նժույգներ ու նրանց ոսկե թամբին նստեցրեց հայ ժողովրդի ամենասիրված զավակներին, հայ ժողովրդի էպոսի հերոս Սասունցի Դավթին և V դարի հայ ազատագրական շարժման առաջնորդ Վարդան Մամիկոնյանին: Երկուսն էլ համաշխարհային արձանագործության փայլուն նմուշներ, որոնք հարստացնում են հայ արվեստի գանձարանը, նորոգում մեր ժողովրդի հերոսական անցյալի պատմության էջերը, զարդարում այս հինավուրց ու հավերժ ջահել քաղաքը, դառնում նրա խորհրդանիշը և փառք բերում նրանց արարող մեծագործ հեղինակին՝ Երվանդ Քոչարին:

Հատում անցնում ենք Մոսկովյան փողոցը: Աջ կողմի վրա Լենինի պողոտայի 48 համարի շենքն է: Ճարտարապետական ինքնատիպ լուծումներով կառուցված այս շենքը զարդարում է պողոտան, գրավում անցորդի ուշադրությունը:

«Այս տանը ապրել է . . .» կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ, հայ երգի գիտակ, բազմավաստակ երգիչ Շարա Տալյանը, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ, անվանի ռեժիսոր Վավիկ Վարդանյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ներսիսյանը, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Միքայել Մազմանյանը, Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Սուրեն Ստեփանյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ավետ Ավետիսյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարյանը, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Գուրգեն Գաբրիելյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Դավիթ Մալյանը . . .

Ծանոթանալով հուշատախտակների մակագրություններին, մեր առջև հառնում է արվեստի հսկաների փայլուն մի համաստեղություն, սիրելի դեմքեր, որոնց անմնացորդ ջանքերով, վիթխարի վերելք է ապրել հայ ազգային մշակույթը՝ թատրոնը, կինոն, երաժշտությունը, նկարչությունը, քանդակագործությունը: Բնական է, որ հենց այս շենքում է գտնվում նաև արվեստի աշխատողների տունը:

Լենինի պողոտան երևանցու համար սիրելի ու հարազատ է նաև ամենից առաջ այս հրաշալի մարդկանց հիշատակով: Շատ երևանցիներ լավ են հիշում ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, թատրոնի մեծահամբավ ռեժիսոր, Սոցիալիստական աշխատանքի հերոս Վարդան Աճեմյանին, հայ մեծանուն լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանին, գիտության վաստակավոր գործիչ ազգագրա-

գետ Սրբուհի Լիսիցյանին, մեծատաղանդ կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանին, Հայկական ԽՍՀ ժողովրդական արտիստ Անուշավան Տեր-Ղևոնդյանին և ուրիշների, որոնք ապրել են Լենինի պողոտայի այս հատվածում:

Շարունակում ենք մեր շրջագայությունը: Այնուհետև «Նաիրի» կինոթատրոնն է, «Երևաննախագիծ» ինստիտուտը, գեղարվեստաթատերական ինստիտուտը, բնակելի և վարչական շենքեր, առևտրի օբյեկտներ:

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Լենինի պողոտան եզրափակվում է բարձունքում հառնող պողպատագույն բազալտից կառուցված ինքնատիպ մի շենքով: Կառույցի առջև մեր հնավանդ դպրության ու գիտության ռահվիրաների բազալտակուռ արձաններն են, կենտրոնում՝ հայ դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը: Շենքի նախագծի հեղինակն է վաստակաշատ ճարտարապետ Մարկ Գրիգորյանը: Դա Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտն է՝ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ, որը տասնյակ դարերի տարեգրության հուշակավոր ու խոսուն մեր գանձարանն է:

Նախ՝ Մեծն **Մեսրոպ Մաշտոցի** մասին:

Հայ գրերի ստեղծող և մատենագրության հիմնադիր, առաջին թարգմանիչ, առաջին ուսուցիչ և հայալեզու դպրոցի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը ծնվել է պատմական Հայաստանի Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Ծննդյան տարին ընդունված է համարել 362 թ.: Վախճանվել է 440 թ. փետրվարի 17-ին, թաղված է Աշտարակի շրջանի Օշական գյուղում:

Հայ ժողովրդի համար մըղձավանջային, ծանր ժամանակներ էին: Հայաստանը բաժանված էր երկու մեծ տերությունների՝ Հռոմեական և Պարսկական պետությունների միջև: Հայ ժողովուրդը կորցնելով իր միասնությունն ու անկախությունը գտնվում էր նաև քաղաքական և մշակութային տարբեր ազդեցությունների տակ: Այս պայմաններում հայոց երկրում իբրև պետական, ուսումնական և կրոնական-պաշտամունքային լեզու էին համարվում հունարենն ու պարսկերենը: Խորենացու և Փարպեցու վկայությամբ, Մաշտոցի մոտ հղանում է հայկական գրեր ստեղծելու գաղափարը: Մաշտոցըն իր ծրագրերն իրականացնելու մտադրությամբ վերադառնում է Վաղարշապատ և, բարեբախտաբար, ի դեմս Սահակ կաթողիկոսի գտնում իր համախոհին, քանի որ հայ գրերի ըստեղծումը նաև պետական գործ էր, պետության միասնականությունը ապահովող գործոն, Վըռամշապուհ արքան ոչ միայն ողջունում է, այլև քաջալերում նրանց նախաձեռնությունը:

Տևական տքնությունների ու տառապանքների գնով Մեսրոպ Մաշտոցը կարողացավ ստեղծել միասնական հայկական հնչյունական համակարգը ներկայացնող 36 տառ, այսպես կոչված ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ԳԻՐ:

Ավարտելով իր գործը՝ սուրբ աջով հայրաբար ծնելով սքանչելի հայերեն լեզվի նշագրերը, Սամոսատ քաղաքում հանձնարարում է հունական դպրության Հռոփանոս անունով մի հմուտ գրչի ստեղծված տառերը ձևավորել գեղագրորեն: Հենց այստեղ էլ Մաշտոցը Աստվածաշնչից թարգմանեց մեկ նախադասություն.

«Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

405 թվականը, փաստորեն, դարձավ այբուբենի ծննդյան տարեթիվը, որից հետո սկսեցին կազմակերպվել հայալեզու դպրոցներ, հիմք դրվեց հայ մատենագրությանը, կատարվեցին բազում թարգմանություններ, որոնցից առաջինը՝ «Աստվածաշունչը»՝ ամբողջությամբ: Այս թարգմանությունը XVIII դարի ֆրանսիացի նշանավոր արևելագետ Մ. Լակրոզը անվանել է «Թարգմանությունների թագուհի»:

Հայ գրերի հայտնագործումից հետո լայն թափ ստացավ թարգմանական արվեստը և ինքնուրույն ստեղծագործությունը:

Ի պատիվ հնագույն թարգմանիչների մեծ վաստակի, դեռևս V դարում հայ ժողովուրդը հիմնադրեց «Թարգմանչաց տոնը», որը նշվում է արդեն 15 դար:

Մ. Մաշտոցը հայոց այբուբենը ստեղծեց այնպիսի կատարելությամբ ու կենսունակությամբ, որը շուրջ 1600 տարի առանց փոփոխությունների շարունակում է հավատարմորեն ծառայել հարազատ ժողովրդին:

Մեսրոպ Մաշտոցի արձանի մոտից ժապավենաձև կարճ ճանապարհը մեզ տանում է դեպի Մատենադարանի գլխավոր մուտքը, որի երկու կողմերում կանգնած են միջնադարի հայ վեց խոշոր մտածողների քարակոփ հուշարձանները:

Մովսես Խորենացի:

Հինգերորդ դարի հայ մատենագրությունը ներկայացնող նը-

շանավոր պատմիչների համաստեղության մեջ հատկապես առանձնանում է Մովսես Խորենացին, որը ըստ արժանվույն վաստակել է «Հայոց պատմահայր» պատվավոր տիտղոսը:

Խորենացին ծնվել է մոտավորապես 410 թվականին: Մ. Մաշտոցին և Սահակ Պարթև կաթողիկոսին աշակերտել է 20-25 տարեկանում: Այնուհետև մեկնել է Ալեքսանդրիա, հմտանալու քերթողական, ճարտասանական, քերականական «արվեստների» մեջ, կատարելագործելու հունարենի իր իմացությունը: Այդ ընթացքում այցելել է Եդեսիա, ծանոթացել նրա հինավուրց մշակութային կենտրոնի հարուստ դիվաններին:

Խորենացին հայրենիք է վերադառնում 440 թ. և անմնացորդ նվիրվում լուսավորչական գործին: Նա եռանդուն կերպով զբաղվում է թարգմանչական աշխատանքով, ինչպես նաև ինքնուրույն գործերի ստեղծմամբ: Խորենացին նշանավոր երգիչ-երաժիշտ ու բանաստեղծ էր: Բազմաթիվ շարականներ նրան են վերագրվում:

Սակայն Խորենացու մեծությունը որպես մատենագրի, մեծ մտածողի ու գործչի «Հայոց պատմությունը» անգնահատելի գործի մեջ է:

Խորենացին «Հայոց պատմությունը» շարադրել է հանճարեղ խորաթափանցությամբ ու մեծ տքնանքով:

«Հայոց պատմությունը» արդյունք է հեղինակի հանճարի և վեհ ու ազնիվ քաղաքացիական զգացման: Միջնադարում դրանով կրթվել են հայ ժողովրդի տասնյակ սերունդներ, կազմավորվել է մտավորականության գիտա-քաղաքական միտքը, այն քաջության, սխրանքների է կոչել դժվարին ճանապարհ կտրած ժողովրդին:

Խորենացին հայ ժողովրդի պատմությունը ստեղծելիս այն դիտել է համաշխարհային պատմության միջավայրում, նրա տեսադաշտում է եղել ժամանակի ողջ քաղաքակիրթ աշխարհը:

Նա հայոց պատմությունը շարադրել է մերձակա առնչություն ունեցող բոլոր երկրների պատմության հետ սերտորեն փոխկապակցված: Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ արժեքավոր ու հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Հին Բաբելոնի, Ասորեստանի, Պաղեստինի, Աքեմենյան Պարսկաստանի, Հունաստանի, Հին Հռոմի, Պարթևստանի, Բյուզանդիայի, Վրաստանի, Աղվանքի, Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մասին, որով և այս գիրքը դառնում է հիշյալ երկրների պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկը:

Մեր ժամանակներում «Հայոց պատմությունը» դարձել է համաշխարհային գիտության ուսումնասիրման առարկա, այն թարգմանվել է լատիներեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, հունգարերեն և այլ լեզուներով:

Խորենացին խորն է ըմբռնել իր ժողովրդի էությունը, նրա խիզախող ոգին և տվել նրա հպարտ ու անմահ բնութագիրը:

«. . . Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու, հիշատակելու արժանի»:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծումը նույնպես հայ ժողովրդի հանճարեղ զավակի «արիության գործերից» մեկն է, որը անմահ կմնա բոլոր ժամանակներում:

Խորենացու արձանի կողքին կանգնած է միջնադարյան հայ մշակույթի խոշորագույն դեմքերից մեկի՝ **Մխիթար Գոշի** հուշարձանը: Մեծ մտածող, գիտնական, օրենսդիր, գրող, մանկավարժ, հասարակական գործիչ Մխիթար Գոշը ծնվել է 1120 թ. Գանձակ քաղաքում (այժմ Կիրովաբադ, մահացել է 1213 թ., թաղված է Նոր Գետիքում, հետագայում՝ Գոշավանք (Դիլիջան քաղաքի մոտակայքում) :

Մեծ գիտնականի տասնյակ աշխատություններից բացառիկ արժեք են ներկայացնում «Դատաստանագիրքը» և առակները:

«Աստված մարդկային բնությունը ազատ է ստեղծել, իսկ կախումը տերերից առաջ է եկել հողի և ջրի կարիքից»: Ահա մեծ մտածողի՝ Մխիթար Գոշի կենսափիլիսոփայությունը:

Մինչև XII դարը հայ իրականության մեջ աշխարհիկ օրենսգիրք չի եղել, իրավական հարցերը լուծվում էին եկեղեցական կանոններով: Հեղինակը «Դատաստանագրքի» ստեղծումը ձեռնարկել է 1184 թվականին: Այն բաղկացած է «Եկեղեցական կանոններ» և «Աշխարհիկ օրենքներ» բաժիններից: «Դատաստանագրքի» ստեղծման նըպատակը և իրագործումը առաջադիմական խիզախ քայլ էր, լուսավոր մտքի արգասիք և ուներ համազգային նշանակություն: «Դատաստանագիրքը» գործածվել է Հայաստանում, Լեհաստանի, Ղրիմի և հայկական այլ գաղթօջախներում: Իսկ վրաց Վախթանգ թագավորը թարգմանել է այն ու գործածության մեջ դրել իր երկրում: Հնում այն թարգմանվել է լատիներեն ու ղփթերեն:

Միջնադարյան գրականության մեծարժեք գործերից է

նաև Մխիթար Գոշի առակների ժողովածուն: Նրա առակների ժողովածուն առաջին արձակ ստեղծագործությունն է, որը ներկայացնում է գեղարվեստական գրականությունը իբրև «ինքնուրույն բնագավառ»: Այս իմաստով Մխիթար Գոշի առակները ճանաչողական մեծ արժեք ունեն, որոնք շատ բան են տալիս Հայաստանի պատմությունը, հասարակական կյանքը ճիշտ հասկանալու համար: Նույնը կարելի է ասել «Դատաստանագրքի» վերաբերյալ: Այն ոչ միայն իրավական-իրավաբանական օրենսգիրք է, այլև ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակն արտացոլող մի աշխատություն:

Իր առաջադիմական հայացքներով Մխիթար Գոշը վեր է կանգնած ժամանակի և նույնիսկ հետագա դարերի ականավոր շատ մտածողներից:

Հաջորդը մեծերի շարքում միջնադարյան հայ ինքնատիպ դեմքերից մեկի՝ բանաստեղծ **Ֆրիկի** հուշարձանն է: Ծնվել է 1230-ական թվականներին՝ թաթար-մոնղոլական արշավանքների սկզբին, մահացել է XIV դարի առաջին քառորդում: Իր ստեղծագործություններում բանաստեղծը ճշմարտացիությամբ պատկերել է ժամանակի սոցիալ-քաղաքական ծանր վիճակը: Դա մի շրջան էր, երբ թաթարական հրոսակները հրով ու սրով զավթել էին Հայաստանը և հաստատել իրենց դաժան տիրապետությունը: Վայրագ թշնամին ավերում էր Հայաստանի ծաղկուն քաղաքները՝ Անին, Կարսը, Դվինը, Կարինը:

Քաղաքացի բանաստեղծը, որի համար թանկ էր իր հայրենիքի անկախությունը, ցավով ու սրտի կսկիծով է ողբում իր հայրենակիցների ծանր վիճակը, ընդվզում սոցիալական անարդարության դեմ:

Չորրորդը՝ միջնադարի խոշոր գիտնական, հայ իրականության մեջ բնական գիտությունների հիմնադիր **Անանիա Շիրակացու** հուշարձանն է: Մեծ մտածողը մաթեմատիկայի, տիեզերագիտության, աստղագիտության, աշխարհագրության, տոմարագիտության ու բնական այլ գիտությունների բնագավառում ուներ հանրագիտարանային վիթխարի գիտելիքներ:

Շիրակացու գրչին են պատկանում «Տիեզերագիտություն և օրացույց», «Մաթեմատիկա», «Չափի և կշիռների մասին», «Աշխարհագրություն», «Լուսնային պտույտի աղյուսակ», «Ողջ մարդկության գիտելիքների և իմաստությունների հիմքերը» և այլ անգնահատելի աշխատություններ:

Շիրակացին ապացուցեց, որ երկրագունդը կլոր է, պտտվում

է իր առանցքի շուրջը, որ լուսինը զուրկ է սեփական լույսից, գիտականորեն հիմնավորեց և մեկնաբանեց օրվա ու գիշերվա առաջացման, արևի և լուսնի խավարման, ինչպես նաև մինչ այդ անհայտ մի շարք երևույթներ:

Հայ բանահյուսության բնագավառում ևս Շիրակացու ստեղծագործությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Դրանք գրված են կենդանի, պատկերավոր ու հյութեղ լեզվով, որոնցում ատացոլվում են հայ արձակի բնորոշ առանձնահատկությունները:

Շիրակացին ծնվել է VII դարի սկզբում, պատմական Շիրակ գավառի Անի ավանում, մահացել է նույն դարի ութսունական թվականներին:

Անանիա Շիրակացուց աջ **Գրիգոր Տաթևացին** է: Անվանի փիլիսոփա, մանկավարժ և եկեղեցական նշանավոր գործիչ Գրիգոր Տաթևացու ստեղծագործությունը ֆեոդալական Հայաստանի փիլիսոփայության և սոցիալ-քաղաքական մտքի զարգացման բարձրակետն է: Ծնվել է 1346 թ., սովորել Տաթևի համալսարանում, հետագայում ղեկավարել միջնադարյան Հայաստանի գիտական այդ խոշոր կենտրոնը: Տաթևացու ստեղծագործական ժառանգությունը բնութագրվում է գիտական հետաքրքրությունների բազմակողմանիությամբ, իր ժամանակի համար առաջավոր գաղափարներով, փիլիսոփայական, աստվածաբանական մի շարք կարևոր պրոբլեմների լուծմամբ, որոնցում արտահայտված են մատերիալիստական միտումները: Տաթևացին եղել է նաև բարձրարվեստ նկարիչ և երաժիշտ: Նրա գեղանկարչական աշխատանքները, որոնցից երկուսը պահպանվում են Մաշտոցի անվան մատենադարանում, աչքի են ընկնում գունագեղությամբ, քնարականությամբ, մարդու ներաշխարհ թափանցող խորունկ փիլիսոփայությամբ: Գրիգոր Տաթևացին մահացել է 1409 թ. դեկտեմբերի 27-ին, Տաթևում:

Ահա և վեցերորդ հուշարձանը՝ **Թորոս Ռոսլինը**:

Համաշխարհային մշակույթի պատմության մեջ նշանակալից է հայ մատենական գեղանկարչությունը, որի փայլուն դրսևորումներից է կիլիկյան մանրանկարչության դպրոցը: Ռոսլինը այդ դպրոցի ամենախոշոր ներկայացուցիչն է: Ականավոր այս նկարչի ծննդյան վայրն ու թվականը հայտնի չեն, սակայն պահպանվել են Ռոսլինի ձեռքով պատկերազարդված յոթ ձեռագրեր, որոնցից չորսը գտնվում են Երուսաղեմի ս. Հակոբյանց վան-

քում, մեկը՝ Բալթիմորում (ԱՄՆ), մյուսը՝ Կ. Պոլսում (Թուրքիա):

Հայտնի է նաև, որ Ռոսլինի պատկերազարդ ձեռագրերում կան Կոնստանդին Առաջին կաթողիկոսի կամ նրա մերձավորների պատկերները: Թորոս Ռոսլինը կապված է եղել պալատական բարձր շրջանների հետ, այդ են վկայում կիլիկյան թագավոր Լևոն Երրորդի երկու դիմանկարները: Առաջինը Լևոնին պատկերում է պատանի հասակում, երկրորդը՝ 1262 թվականին Կեռան թագուհու հետ՝ հարսանյաց հանդեսին:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում է պահպանվում Թորոս Ռոսլինի պատկերազարդ յոթերորդ ձեռագիր-մանրանկարը, ուր պատկերված է Կոստանդինը, (ձեռագիր՝ 7690, 1249 թ.):

Թորոս Ռոսլինը Միջերկրական ծովի ափին, Հայկական Կիլիկիայում XIII դարի երկրորդ կեսում ձեռագրեր է ծաղկում, գրքեր ընդօրինակում, դրանք պատկերազարդում ամենանրբին արվեստով: Մագաղաթի վրա արարած նրա գեղանկար խորանները և լուսանցազարդերը միահյուսված ամենատարբեր պատկերներով հիացմունք են պարգևում մարդուն: Մեզանից ավելի քան 700 տարի առաջ ապրած հայ մեծ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի գործերը արվեստի իսկական գլուխգործոցներ են: Նրա ծաղկած գրքի յուրաքանչյուր էջը նման է մանրակերտ ու անխորտակ տաճարի, որի լուսաշող դարպասներից ներս մտնողը խանդավառվելով իր հետ կտանի լույսը սրբազան ու ջերմությունը հավերժող:

Մատենադարանի մարմարակերտ աստիճանները մեզ տանում են դեպի դարերի վաղեմություն ունեցող անմահ գանձերը:

«Մատենադարանը մշակույթի համաշխարհային մեծագույն տաճարներից մեկն է, ուր մըտնում ես ակնածանքով, գլուխ խոնարհելով այսպիսի սքանչելի մշակույթ ստեղծող մի իմաստուն ժողովրդի հանճարի ու արիության առջև»:

Այս գրառումը թողել է հայտնի գրող, Լենինյան մրցանակի դափնեկիր Սերգեյ Սմիռնովը: Մատենադարանը դիտելուց հետո իր տպավորությունն է գրել նաև մեծահամբավ ակադեմիկոս Ե. Տարլեն:

«Մատենադարանը անջնջելի տպավորություն է թողնում: Դեմ առ դեմ կանգնած ես պատմական մի ժողովրդի առջև, որը դասական հնադարից մինչև ներկա ժամանակները գտնվում է քաղաքակիրթ ազգերի առաջին շարքերում: Եվ որքան ուրախալի է, որ ժամանակակից

հայ սերունդը այսպիսի սիրով ու խնամքով է վերաբերվում իր մեծ անցյալին»:

Մատենադարանի ցուցադրություններում և գրապահոցներում պահպանվում են հայ ժողովրդի բազմադարյան պատմության, արվեստի, գրականության և բնական գիտությունների վերաբերյալ, ուսումնասիրման անսպառ աղբյուր հանդիսացող ավելի քան 16 հազար ձեռագրեր, 14 հազարը հայերեն, իսկ մոտ 2500-ը օտարալեզու: Դրանք V—XVIII դարերի ավելի քան 80 հայ պատմիչների ու ժամանակակիցների երկեր են, ինչպես նաև հին աշխարհի ու միջնադարի ականավոր գիտնականների ու մտածողների երկերի թարգմանություններ: Այստեղ պահպանվում են համաշխարհային գրականության այնպիսի հնագույն ու եզակի նըմուշներ, որոնց բնագրերը չեն պահպանվել և այսօր մարդկությանն են հասել միայն հայերեն թարգմանությունների շընորհիվ: Հայերեն ձեռագրերից բացի Մատենադարանում կան հազարից ավելի պարսկերեն, արաբերեն, հունարեն, հնդկերեն, ասորերեն, վրացերեն, լատիներեն, եթովպերեն և այլ լեզուներով ձեռագրեր:

Մեսրոպ Մաշտոցի ստեղծած հայկական գրերը հիմք դրեցին ազգային դպրության: Հայաստանի դպրոցներում և եկեղեցիներում սկսեցին գրել մայրենի լեզվով, զարգացավ գրական լեզուն՝ գրաբարը:

Վեցերորդ դարի սկզբից հայ գաղափարական-գեղարվեստական միտքը ծնում է այնպիսի երկեր, որոնք պատվավոր տեղ են գրավում բազմադարյան գըրական ավանդույթներ ունեցող հին ժողովուրդների ստեղծագործությունների շարքում: Ծաղկում է ապրում նաև թարգմանական արվեստը:

Ղազար Փարպեցու (V դ.) մի վկայությունից երևում է, որ Մատենադարանի հիմքը կազմող Էջմիածնի ձեռագրատունը գոյություն է ունեցել դեռևս հինգերորդ դարում, որի նշանակությունը առավել մեծանում է 1441 թվականից հետո, երբ կաթողիկոսական աթոռը Սիսից (Կիլիկիա) տեղափոխվում է Էջմիածին: Այնուհետև ձեռագրերի ստեղծման ու հայթայթման գործը ավելի մեծ չափերի է հասնում:

Հայաստանի տարբեր շըրջաններում հիմնվել են բազմաթիվ մատենադարաններ ու գըրչության կենտրոններ՝ Սաղմոսավանք, Գլաձոր, Տաթև, Սանահին, Հաղպատ, Գեղարդ, Կեչառիս, Հովհանավանք, Աղթամար, Կիլիկիայում՝ Սիս, Հռոմկլա, Բարձրաբերդ, Ակներ, Գռներ և այլն: Հարկադրաբար

հայրենիքից հեռացած հայ գրիչները շարունակել են ձեռագրեր ընդօրինակել պանդխտության մեջ, օտար երկրներում՝ Հնդկաստանում, Իտալիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Ռումինիայում, Լեհաստանում և այլուր:

Հարատևող արհավիրքներից հրաշքով փրկված ձեռագիր մատյանները լի են իրենց ըստեղծողների դժվարին ու ողբերգական ճակատագրի ու այդ մատյանները փրկողների մասին հիշատակություններով:

Ահա հռչակավոր Մշո «Ճառընտիր» ճակատագիրը: 1204 թ. սելջուկները թալանում են նրա տիրոջը, հափշտակում նաև բովանդակությամբ ու մանրանկարներով հարուստ հայկական ամենամեծ այս ձեռագիրը: Ամենատարբեր շրջանում բնակվող հայերը հավաքում են 4000 արծաթ դրամ, ետ գնում, ազատում այն գերությունից և պահում Մշո Առաքելոց վանքում, ուր մնում է ավելի քան յոթ դար:

1915 թ. սրով ո հրով տեղահանված գաղթական հայերը, պապերից ժառանգած այս մատյանը վերցնում են իրենց հետ: Երկու փթանոց ձեռագիրը ավելի հեշտ տեղափոխելու նպատակով այն բաժանում են երկու մասի, որի մի մասը հասնում է Էջմիածին, մյուսը չկարողանալով ավելի հեռու տանել, թաղում են Էրզրումի եկեղեցու բակում: Փլատակների տակ պատահաբար հայտնաբերված երկրորդ կեսը հետագայում բերվում է Էջմիածին և միացվում մյուս հատվածին:

Տառապանքների ուղի անցած այս անգնահատելի գանձը իր բազում բախտակիցների հետ միասին այժմ ապահով հանգրվանել է Մատենադարանի ուշագրավ ցուցադրություններում:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո (1920 թ. նոյեմբերի 29) կառավարությունը հոգատար վերաբերմունք ցուցաբերեց ձեռագրերի նկատմամբ: 1920 թ. դեկտեմբերի 16-ին պետականացվեց Էջմիածնի Մատենադարանը: Շուտով Մոսկվայի հայկական եկեղեցուց և Լազարյան ճեմարանից, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից, Երևանի գրական թանգարանից, Էրզրումից, Նոր Նախիջևանից (Դոնի Ռոստով), Աստրախանից և այլ վայրերից հավաքվեցին բոլոր ձեռագրերը և 1939 թ. Մատենադարանը Էջմիածնից տեղափոխվեց Երևան:

1959 թ. Երևանի հյուսիս-արևելյան սարալանջի գեղատեսիլ բարձունքին շահագործման հանձնվեց Մատենադարանի հոյակերտ պալատ-ամրոցը, որտեղ ապահով հանգրվան գտան հայոց ձեռագրերը, ժողովրդի անմահ գանձերը:

Մատենադարանի գոհարներից են պատմահայր Մովսես Խորենացու, պատմիչներ Եղիշեի (V դ.), Ղևոնդ Երեցի (VII դ.), նշանավոր մաթեմատիկոս ու աշխարհագրագետ Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն» (VII դ.), Մխիթար Գոշի «Դատաստանագիրք» (XII դ.), հայ քնարերգության գագաթներ Գրիգոր Նարեկացու (X դ.), Ֆրիկի (XII դ.), Նահապետ Քուչակի (XVI դ.), Սայաթ-Նովայի (XVIII դ.), ինչպես նաև բազմաթիվ այլ բանաստեղծների անմահ ստեղծագործությունները:

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը՝ Մատենադարանը, աշխարհի հնագույն և հարուստ ձեռագրատներից մեկը, գիտական և հրատարակչական պատկառելի գործունեություն է ծավալել: Այստեղ հրատարակվել են հայ մատենագիտության մի շարք գործեր, որոնց թվում պատմիչներ Կորյունի, Եղիշեի (V դ.), Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի (VII դ.), Կիրակոս Գանձակեցու (XIII դ.) երկերը, Վրաց պատմությունը (Քարթլիս Ցխովրեբա), հույն փիլիսոփաներ Թեոն Ալեքսանդրացու (I դ.), Զենոնի, Հերմես Եռամեծի (III դ.) աշխատությունների հայերեն թարգմանությունները, հայ փիլիսոփաներ Դավիթ Անհաղթի, Հովնան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու (XIV դ.) աշխատությունները և տասնյակ արժեքավոր այլ հրատարակություններ: Բազմաթիվ են նաև այն աշխատությունները, որոնք հրատարակվել են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով:

«ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչներս ապշած ենք Մատենադարանի ձեռագրերի հարստությամբ: Գտնում ենք, որ բացառիկ գիտական արժեք ներկայացնող այս գանձերը պետք է հնարավորին չափ շուտ ուսումնասիրվեն ու հրապարակվեն», — գրված է Մատենադարանի այցելուների գրքում:

Ֆրանսիացի գրող Հանրի Բարբյուսը գրել է. «Մատենադարանը հարստացրեց իմ միտքը: Ես երջանիկ եմ»:

Մատենադարանի տպավորությունների գրքում իրենց հիացմունքի խոսքն են թողել աշխարհահռչակ շատ մարդիկ:

«Ես զարմանքով և հիացմունքով տեսա, թե հնագույն մշակույթի որքան շատ գանձեր են պահպանվել այստեղ, Հայաստանում... Հուսով եմ, որ այս գանձերն անկասկած կդառնան աշխարհի մյուս երկրների գիտնականների ուսումնասիրության առարկա»:

Մեսրոպ Մաշտոցի հուշարձանը
Памятник Месропу Маштоцу

Մատենադարանը
Матенадаран

Մատենադարանի մուտքը
Вход в Матенадаран

Ավետարան (1280 թ.,
(Կիլիկյան Հայաստան)
(Евангелие, 1280 г.,
Киликийская Армения

Ճաշոց, 1286 թ. Կիլիկիա, ստացող՝ Հեթում Բ թագավոր (1289—1307 թթ.)
Служебник, 1286 г., Киликия, получатель царь Этум II (1289—1307 гг.)

(Ավետարան (1260 թ.) (Կիլիկյան Հայաստան)
Евангелие, 1260 г., (Киликийская Армения)

«Հայրեն» վոկալ երգչախումբը
Вокальный ансамбль «Айрен»

Ահա Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր Ալբերտ Օյզերի տպավորությունն ու կարծիքը։

Ընդհանուր հաշվով հայկական ձեռագրերի քանակն աշխարհում հասնում է շուրջ 25 հազարի։ Հայկական ձեռագրերի հարուստ հավաքածուներ կան Երուսաղեմում (Ս. Հակոբյանց վանք, մոտ 4500), Վենետիկում (Մխիթարյանների Մատենադարան, 4000), Վիեննայում (Մխիթարյանների մատենադարան, 1200), Սպահանում «Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանք, 1000), Փարիզում (Ազգային գրադարան), Լոնդոնում (Բրիտանական թանգարան), Օքսֆորդում (Բոդելյան գրատուն), ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտում, Թբիլիսիում (Վրացական ԽՍՀ ձեռագրերի ինստիտուտ), Ստամբուլում, Բեռլինում, Նյու Յորքում, Վաշինգտոնում և այլուր։

ՔԱՂԱՔԸ ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

Այժմ թողնենք քաղաքի եռուն կենտրոնը և տեղափոխվենք Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը խորհրդանշող մոնումենտալ հուշակոթողի ընդարձակ դիտահրապարակը։ Այս բարձունքից քաղաքը երևում է ինչպես ափի մեջ։ Դեմ առ դեմ ձյունափառ Արարատն է, իսկ աջ կողմում՝ քառագագաթ Արագածը։ Եվ իրավամբ է այստեղ փորագրված հետևյալ տողերը. «Այստեղ, հավերժական Արարատի և Արագածի հանդիման հայ ժողովուրդը կատարեց իր Նոյեմբերյան հեղափոխությունը, 1920 թվականի նոյեմբերի 29-ին»։ Քիչ այն կողմ բազալտի վրա փորագրված են նաև Ե. Չարենցի հետևյալ տողերը.

«Արև մի բոսոր
Երկինք մի մաքուր
Լոկ հոկտեմբերյան
Հողմերը տվին...»

Դիտահրապարակից երևում է ինքնատիպ, թմբուկաձև մի շինություն։ Դա Երևանի երիտասարդության պալատն է, ճարտարապետական խոշոր մի համալիր, որը երևում է քաղաքի տարբեր թաղամասերից։ Պալատն ունի հարմարավետ հյուրանոց, ամուսնադրության սրահ, դիսկոտեկ, բար և սրճարան։ Այստեղ է նաև Հայաստանի կոմերիտմիության պատմության թանգարանը։ Պալատի ցուցադահլիճում կարելի է ծանոթանալ երիտասարդ նկարիչների ու քանդակագործների

աշխատանքներին։ Շենքի 17-րդ հարկում է գտնվում պտտվող սրճարանը, որտեղից երևում է քաղաքի և Արարատյան դաշտի համայնապատկերը։

Հուշակոթողից աջ փռված է «Հաղթանակ» զբոսայգին իր հրաշալի, ստվերախիտ ծառուղիներով, խաղահրապարակներով, «Արևիկ» լճով, «Արագիլ» մանկական սրճարանով և հանգըստի բազում հաճելի անկյուններով։ Ահա հերոսների խճուղին։ Հաճախ են մարդիկ կանգնում այդ կարմրագույն տուֆե սալիկների առաջ, կարդում հերոսների անունները և գլխահակ հարգանք մատուցում անմահ հերոսներին։ Ճեմուղու վերջում, բարձրադիր մասում, երկինք է խոյանում Հաղթանակը խորհրդանշող «Մայր Հայաստան» մոնումենտալ կոթողը։ Պղնձաձույլ արձանը (հեղինակ՝ Ա. Հարությունյան, ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան) կանգնած է քարակոփ հսկա պատվանդանի վրա և երևում է քաղաքի տարբեր մասերից։ Պատվանդանի տակ Հայրենական պատերազմի թանգարանն է, որտեղ հավաքված բազմաթիվ ցուցանմուշները ներկայացնում են հայ ժողովրդի անօրինակ սխրանքը Մեծ Հայրենականում։

1941—45 թվականներին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում ցուցաբերած խիզախության համար 70 հազար հայ մարտիկներ պարգևատրվել են կառավարական ու մարտական շքանշաններով, 104-ը արժանացել են Խորհրդային Միության հերոսի բարձր կոչման։ Ցուցադրություններում ծանոթանում ենք հայ ժողովրդի ծոցից ելած 60 տաղանդավոր գեներալների, ծովակալների, մարշալների սխրանքներով լի կյանքին։

Թանգարանի ցուցադրություններում հարուստ նյութեր կան Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, Խորհրդային Միության ծովակալ Հովհաննես Իսակովի, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովի (Արմենակ Խամփերյանց), փառքի երեք աստիճանների ասպետների և աչքի ընկնող ուրիշ զորահրամանատարների, մարտի դաշտերում արիության էջեր գրած մարտիկների մասին։

«Մայր Հայաստան» կոթողի դիմաց անհայտ զինվորի գերեզմանաքարին գրված է. «Անունը քո անհայտ է, սխրանքը՝ անմահ» պարզ ու վսեմ բառերը։ Անպաճույճ ու փառահեղ աստղ մարմարի վրա, իսկ կենտրոնում՝ փառքի հավերժական կրակը ու թարմ ծաղիկներ։

«Հաղթանակ» զբոսայգուց աջ Ազատության պողոտան է, շարունակությունը՝ Թբիլիսյան խճուղին:

Քաղաքի այս հատվածում Արաբկիր, Նոր Զեյթուն և Քանաքեռ բնակելի թաղամասերն են, «ԵՐԱԶ» ավտոմոբիլային, Ալյումինի, Էլեկտրալամպերի գործարանները, շամպայն գինիների կոմբինատը, գիտահետազոտական ինստիտուտներ, առողջապահական հիմնարկներ, դպրոցներ, պրոֆտեխկրթության ուսումնարաններ և այլն:

Քանաքեռի կանաչախիտ թաղամասում է գտնվում հայ ժողովրդի մեծ լուսավորիչ, դեմոկրատ, հայ նոր գրականության և մանկավարժության հիմնադիր Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանը:

Աբովյանների տոհմական տունը, ուր 1809 թ. ծնվել է հայ ժողովրդի հանճարեղ զավակը, պահպանվել է 200 տարի առաջ ունեցած տեսքով: 1935-ին հին տան կողքին կառուցվեց երկհարկանի հոյակերտ մի շինություն, որը տուն-թանգարանի վերածվեց 1939 թ.: Նրա ընդարձակ սրահներում ճաշակով ձևավորված ցուցադրությունները պատմում են մեծ լուսավորչի կյանքի ու անձնվեր գործունեության մասին:

Թանգարանի առաջ վեհորեն կանգնած է Խ. Աբովյանի հուշարձան-կոթողը (հեղինակ՝ Ա. Տեր-Մարուքյան):

«Ոչ մի բնակավայր այնքան գեղեցիկ, այնքան երկնային չէ, ինչպես այս բարձրադիր վայրը...» — ասել է լուսավորիչը:

Խ. Աբովյանը ընդամենը 20 տարեկան էր, երբ Արարատ լեռան գագաթը բարձրանալու նպատակով Էջմիածին ժամանեց Դորպատի (այժմ Էստոնական ԽՍՀ Տարտու քաղաք) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը: Ամենայն հայոց Եփրեմ կաթողիկոսի քարտուղար և թարգմանիչ Աբովյանին, որը լավ գիտեր գրաբարը, տիրապետում էր ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն և քրդերեն լեզուներին, հանձնարարվում է ուղեկցել արշավախմբը: 1829 թ. սեպտեմբերի 27-ին նրանք բարձրացան Մեծ Մասիսի գագաթը: Հետագայում պրոֆեսոր Պարրոտի օգնությամբ Աբովյանը ուսումը շարունակում է Դորպատի համալսարանում, ուր խորապես ուսումնասիրում է գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, լատիներեն լեզուները:

Ավարտելով համալսարանը, Աբովյանը աշխատում է Թիֆլիսի, իսկ հետո Երևանի նահանգական դպրոցներում որպես տեսուչ, ուր կրքոտ հայրենասերն իրեն նվիրում է լուսավոր-

չական գործի զարգացմանը:

Գրեց չափածո և արձակ գործեր («Պարապ վախտի խաղալիք», «Թուրքի աղջիկը», «Ֆենդորա կամ որդիական սերը»), զանազան ուսումնասիրություններ, դպրոցական ձեռնարկներ: Սակայն Աբովյանի գրական ժառանգության գլուխգործոցը, նրա թագն ու պսակը «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» պատմավեպն է, որի նյութը պարսկական բռնակալության լծի տակ հեծող հայ ժողովրդի կյանքն է:

Առաջինը հայ իրականության մեջ Աբովյանն էր, որ արտացոլեց 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմը, Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանին, հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը:

«Վերքը» հայրենասիրական բոցաշունչ մի ստեղծագործություն է՝ գրված աշխարհաբարով, ժողովրդին հասկանալի լեզվով: Այն նորություն է հայ գրականության մեջ լեզվով ու ոճով, կառուցվածքով, նպատակով, իրադարձությունների ճըշմարիտ մեկնաբանությամբ, հետևություններով, տեսարանների ռունեղ նկարագրությամբ:

«Շունչդ տուր, հոգիդ, բայց քո հայրենիքըդ մի տուր թշնամյաց...»

Այս է Աբովյանի վեպի լեյտմոտիվը, նրա իմաստուն ոգին:

Աբովյանը մտահոգված էր Հայաստանի տնտեսական կյանքի վերափոխումներով, համոզված, որ հայ ժողովրդի բարեկամությունը ռուս ժողովրդի հետ հայրենի երկրի անկախության և տնտեսական բարգավաճման գրավականն է: «Օրհնվի էն սըհաթը, որ ռուսի օրհնված ոտը հայոց լիս աշխարհը մտավ...»:

Այսպիսի ճշգրիտ կողմնորոշում տվեց հայ ժողովրդին հանճարեղ Աբովյանը:

Աբովյանը ժողովրդի առօրյայից գրականություն մտցրեց աշխարհաբար լեզուն: Նա եղավ մեր նոր գրականության սկզբնավորողը և մնաց որպես սըրբազան ակունք՝ գալիք մեր բոլոր գրական գետերի ու աղբյուրների համար: Նա դրեց հայ նոր դպրոցի և մանկավարժության հիմնաքարերը:

«Նա մեր նոր առասպելն է,— ասել է Ավետիք Իսահակյանը,— ազգային նոր միֆը: Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ ինչպես չորս բարձր սյուներ, կըրել են հայ ժողովրդի ոգին, նըրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները: Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Եղիշեի «Վարդանանց պատերազմը», Նարեկացու խոսքը անմահության և հավերժության և Աբովյանի «Վերքը»: Այս

նվիրական գրքի մեջ հրեղեն լեզվով արտահայտված է մեր ժողովրդի խորագին վիշտը, նրա պայքարը և անշիջանելի պաթոսը: Գրքեր կան ժողովուրդներն են դաստիարակում, կռում նրանց կամքը, պահում-պաշտպանում. . .»:

Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի սխրանքը դարակազմիկ նշանակություն ունեցավ ժողովրդի հոգևոր կյանքի զարգացման ճանապարհին, որով դրվեց հայ նոր գրականության սկիզբը:

Մեծ լուսավորչի հիշատակին գրքեր են գրվել, երգեր ու առասպելներ հորինվել, մարմարակերտ հուշարձաններ կանգնեցվել, նրա անունով շրջան և ուսումնական օջախներ կոչել:

ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԸ

Քաղաքի կենտրոնական փողոցներից է: Գեղեցիկ ու շրջանաձև պուրակում վեհորեն կանգնած է մեծ հայրենասեր Խ. Աբովյանի արձանը: Նա հայացքը հառել է վերածնված Երևանին:

Արձանի ձախ կողմում Հայաստանի ժողովրդական ստեղծագործության պետական թանգարանն է: Ավելի քան վեց հազարի հասնող ցուցադրություններում ներկայացված են խեցեղեն իրեր, արծաթե զարդեր, մետաղյա դրվագումներ, փորագրություններ փայտի վրա, ձեռագործ գորգեր, ասեղնագործություն և այլ ցուցանմուշներ:

Աբովյան փողոցով քայլենք դեպի մայրաքաղաքի կենտրոն, դեպի Լենինի անվան հրապարակ: Ձախում առողջապահական հիմնարկներն են, աջում, ծառ ու ծաղիկների մեջ կանգնած է Հայաստանի կոմերիտական կազմակերպության հիմնադիր Ղուկաս Ղուկասյանի արձանը: Այնուհետև գյուղատնտեսական ինստիտուտն է՝ իր բազմաթիվ մասնաշենքերով: Ահա մեր առջև հառնում է սև տուֆից կերտված, յուրօրինակ զարդաքանդակներով մի կառույց՝ Խորհրդային Հայաստանի պետական համալսարանի առաջին շենքը (այժմ Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ):

Պետհամալսարանը, որ հիմնադրվել է 1920 թ. դեկտեմբերին, 1960 թվականից գտնվում է Մռավյան փողոցի վրա: Այսօր

համալսարանն ունի շուրջ 20 ֆակուլտետներ, 90 ամբիոններ, 15 պրոբլեմային և ճյուղային գիտահետազոտական լաբորատորիաներ: Համալսարանի 3000 աշխատողներից շուրջ 100-ը գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ են, 550-ը՝ գիտությունների թեկնածու-դոցենտներ, 25-ը՝ ակադեմիկոսներ ու ակադեմիայի թղթակից անդամներ, 46-ը գիտության վաստակավոր գործիչներ, մեկը՝ Լենինյան մրցանակի և վեցը՝ պետական մրցանակի դափնեկիրներ:

Անցած ժամանակամիջոցում մայր բուհից՝ պետհամալսարանից, բաժանվեցին և կազմավորվեցին 10 խոշոր ինստիտուտներ, որոնցում սովորող ուսանողության թիվը այսօր կազմում է ավելի քան 60 հազար: Երևանի համալսարանն են ավարտել արտասահմանյան շուրջ 30 երկրների 3000 երիտասարդներ, որոնցից 1200-ը՝ սփյուռքահայ պատանիներ ու աղջիկներ են:

Սակայն հայ իրականության մեջ սա առաջին համալսարանը չէ: Հայաստանում կրթական գործը հին պատմություն ունի: Հինգերորդ դարի սկզբին, հայոց գրերի գյուտից հետո, ստեղծվեցին հայագիր դպրոցներ, իսկ հաջորդ դարերում բարձրագույն կրթօջախներ հիմնադրվեցին Սյունիքում, Շիրակում, Տարոնում և այլուր: Տաթևի դպրոցը, որը ստեղծվեց IX դարի վերջին, կամուրջ էր վաղ միջնադարի վանական դպրոցի և XIII—XIV դարերի աշխարհիկ բարձրագույն դպրոցների՝ համալսարանների միջև:

Այստեղ էին հավաքվել ժամանակի խոշոր գիտնականներ, փիլիսոփաներ, նկարիչներ: Նմանատիպ բարձրագույն դպրոց ստեղծվեց նաև Վասպուրականում, որը գլխավորում էր փիլիսոփա Անանիա Նարեկացին: Այդ ժամանակ հայտնի էին Աղթամարի, Ոստանի, Վանի, Շիրակի, իսկ հաջորդ երկու դարերում՝ Սանահինի, Հաղպատի և Անիի դպրոցները: Հաղպատի դպրոցը գլխավորում էր ժամանակի նշանավոր գիտնական Հովհաննես Սարկավագը:

X-XI դարերում փառաբանված էին Կիլիկյան Հայկական թագավորության դպրոցները, որոնց հետ է կապված XII դարի խոշորագույն բանաստեղծ և երաժիշտ, հասարակական գործիչ, մանկավարժ կաթողիկոս Ներսես Շնորհալու անունը:

Հայ ժողովրդի դարության պատմության մեջ 1280 թվականը ամենահայտնի տարեթվերից է: Վայոց ձոր պատմական գավառում հիմնադրվեց

Գլաձորի համալսարանը, որը նախորդ դարերի և իր ժամանակի հայոց բարձրագույն դըպրոցներից ամենանշանավորն էր: Ուսումնական այս կենտրոնը իր ժամանակին եվրոպական մակարդակի համալսարան էր: Այստեղ ուսուցանում էին լեզու և գրականություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն, երաժշտություն, գրչության արվեստ, նկարչություն, մանրանկարչություն, հռետորական արվեստ, քերականություն, աստղագիտություն և այլն:

Գլաձորի համալսարանը հայ միջնադարյան գիտական մտքի գագաթը լինելով միաժամանակ յուրատեսակ քաղաքական կենտրոն էր, որը պայքարում էր հանուն մայրենի լեզվի և մշակույթի պահպանման, օգտաշատ դեր է խաղացել ու նըպաստել նրա հետագա զարգացման համար: Պատահական չէ, որ այն հիշվում է որպես «Երկրորդ Աթենք պանծալի», «Մայրաքաղաք իմաստության», «Մեծ դպրատուն», «Գերհռչակ համալսարան» և այլն:

Սակայն ինչպես միջնադարի և ավելի վաղ շրջանի մեր դպրոցները, Գլաձորի համալսարանը նույնպես երկար չգործեց: Հիմնադրումից 60 տարի անց այն ավերվեց թշնամիների ասպատակությունների հետևանքով և փակվեց:

Այս աղետալի դեպքերից հետո ստեղծվեց Տաթևի համալսարանը, որի համբավը մեծացավ հատկապես Գլաձորի համալսարանի սան, Որոտնեցու աշակերտ Գրիգոր Տաթևացու օրոք:

Սակայն XVIII դարում կըրթական գործը խիստ անկում ապրեց: Դրությունը փոխվեց, երբ Հայաստանի արևելյան մասը միավորվեց Ռուսաստանին:

Մեր ժողովրդի կրթության գործին մեծապես նպաստեցին մշակույթի և արվեստի զարգացման երեք խոշոր ուսումնական հաստատություններ՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որը հիմնադրվեց 1814 թ. և գործեց շուրջ մեկ դար, Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը (1824 թ.) և Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1874 թ.):

Ուսումնական այս հաստատությունները կարևոր և խոշոր դեր խաղացին մանկավարժական բարձրորակ կադրեր և հայագիտության մասնագետներ պատրաստելու գործում, որոնք Հայաստանում խորհըրդային կարգերի հաստատումից հետո վերադարձան Երևան և նորաստեղծ համալսարանում շարունակեցին իրենց դասախոսական աշխատանքը:

Աբովյան փողոցով քայլում ենք դեպի կենտրոն: Ձախում Երևանի պետական բժշկական

ինստիտուտն է, Միության մեջ ճանաչված բուհերից մեկը:

Հայերեն լեզվով բժշկական ձեռագրեր են պահպանվում Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանությունների, Փարիզի ազգային և Տյուբինգենի համալսարանի գրադարաններում, Բրիտական թանգարանում և այլուր: Այդ ձեռագրերի թվում են հայ բժշկության դասականներ Մխիթար Հերացու (XII դ.), Ամիրդովլաթի (XV դ.) աշխատությունները:

Վաղ շրջանում Հայաստանում հիմնվել են բժշկական հիմնարկներ, հիվանդանոցներ, բորոտանոցներ, ապաստաններ տկարների, ծերունիների և որբերի համար:

Առաջին բորոտանոցը հիմնըվել է Աղվիդա իշխանուհու կողմից 260—270 թթ.: Հիմնականում հիվանդանոցների ստեղծումը զարգացել է IV դարում, 365 թ. Աշտիշատում կայացած առաջին հայկական եկեղեցական ժողովի որոշմամբ:

Բուժական գործը իր զարգացումն է ապրել հայկական Կիլիկիայում: 1241 թ. Զաբել թագուհին Սիս քաղաքում հիմնել է մեծ համբավ ունեցող հիվանդանոց, ուր ինքը՝ թագուհին մասնակցել է հիվանդների խնամքի գործին:

Ավելի ուշ Հայաստանից դուրս հիվանդանոցներ են հիմնվել Լվովում (XIII դ.), Հընդկաստանի Մադրաս քաղաքում (XVIII դ.), Կ. Պոլսում, Իզմիրում (XVIII դ.) և այլն:

Հայաստանում բժշկության դասավանդումը սկսվել է Սանահինի ուսումնարանում, ուր Գրիգոր Մագիստրոսը XI դարում հայտնի էր որպես բժիշկ գիտնական: Տաթևի համալսարանում Օհան Որոտնեցին XIV դարում դասավանդել է բժշկական գիտություն, փիլիսոփայություն, իսկ նրա մահվանից հետո (1388 թ.) այդ գործը շարունակում է Գրիգոր Տաթևացին (1341—1411 թթ.):

Գրիգոր Տաթևացին գրել է կրոնա-փիլիսոփայական և բըժըշկա-կենսաբանական աշխատություններ: Հեղինակը դասավանդել է նաև անատոմիա և ֆիզիոլոգիա:

Այդ ժամանակներում բժըշկական դպրոցներ են գործել Անիում, Սանահինում, Տարոնում, Սիսում և այլուր:

Բրիտանական թանգարանում պահպանվում է Արևմտյան Հայաստանում գտնված Անահիտ աստվածուհու արձանից միայն գլուխը, որը համարվել է հիվանդների և ծննդկանների հովանավորուհին:

Ամենահին բժշկական բարձրագույն դպրոցը Սիս քաղա-

քում Ներսես Լաբրոնացու համալսարանն էր (XI դ.) և մեզ է հասել նրա հիմնադրի կողմից ուսանողների համար գրված անատոմիայի դասագիրքը:

Այնուամենայնիվ, առողջապահական գործը իր աննախադեպ ու բուռն զարգացումն ապրեց խորհրդային տարիներին: Երևանի ավելի քան 40 հիվանդանոցներում ու պոլիկլինիկաներում աշխատում են շուրջ յոթ հազար բժիշկներ, 12 հազար միջին բուժաշխատողներ:

Աբովյան փողոցով գնում ենք առաջ, հատում Կիրովի փողոցը: Բոլորովին վերջերս այստեղ ստեղծվել է ստորգետնյա առևտրի խոշոր մի կենտրոն, որը գտնվում է մետրոյի «Երիտասարդական» կայարանի հարևանությամբ և կրում է նույն՝ «Երիտասարդական» անունը: Առևտրի կենտրոնում զանազան իրերի՝ հագուստեղենի, կոշկեղենի, օծանելիքի, կտորեղենի, սպորտային և լուսանկարչական ապրանքների լայն ընտրության հնարավորություն է ընձեռվում: Այստեղ կա միջքաղաքային հեռախոս, սրճարան, օդանավերի տոմսերի վաճառքի դրամարկղ, ծաղկի խանութ, բազմաթիվ մանր ու մեծ կրպակներ, հանրախանութ և այլն:

Առևտրի կենտրոնի աջ կողմում, օղակաձև զբոսայգու այս հատվածում, Աբովյան և Իսահակյան փողոցների հատման անկյունում կանգնած է հայ դասական քնարերգության նահապետ Ավետիք Իսահակյանի արձանը:

Ավետիք Իսահակյանը (1875-1957) ծնվել է Ալեքսանդրապոլ (Լենինական) քաղաքում: Նրա մանկությունը անցել է հայրենի քաղաքում և Ղազարապատ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի, այնուհետև՝ Հառիճի դպրոցում: 1889-1892 թվերին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ուսանել է Վիեննայում, Լայպցիգի համալսարանում: Ճակատագրի բերումով Վարպետը շրջել է աշխարհով մեկ՝ Ժնև, Ցյուրիխ, Կ. Պոլիս, Բեռլին, Վենետիկ, Փարիզ...

1936 թ. Ավետիք Իսահակյանը վերադառնում ու բնակություն է հաստատում Խորհրդային Հայաստանում: 1944—1957 թ. եղել է Հայաստանի խորհրդային գրողների միության անփոփոխ նախագահը, ընտրվել է Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, արժանացել ԽՍՀՄ պետական մրցանակի:

Ավ. Իսահակյանը վիթխարի վաստակի տեր բանաստեղծ է, նրա ստեղծագործությունները արժանացել են լայն ճանաչման և դասվել համաշխարհային գրական գոհարների շարքը:

«Քնարերգության միակ աղբյուրը ՍԵՐՆ է, նա ինքն է բանաստեղծությունը: Առանց այդ զգացումի չկա ոչ երգ, ոչ արվեստ, ոչ պոեզիա»: Սա առնված է բանաստեղծի գրառումխոհագումներից:

Վարպետի հանճարեղ ու հզոր վրձնահարումները, նրա կենսափիլիսոփայական խորհուն ու խորունկ մտածողությունը, նուրբ լիրիկան, մարգարեական եզրահանգումները, խոր հումանիզմը հաստատված են համամարդկային ճշմարիտ արվեստի բյուրեղյա կնիքով:

«... Ես սիրեցի Իսահակյանին քնքշորեն... Իսահակյանը առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այժմ այդպիսի պայծառ ու անմիջական տաղանդ չկա ողջ Եվրոպայում», — գրում է Ալեքսանդր Բլոկը:

Մեծ մտածողի ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի բազմաթիվ ժողովուրդների լեզուներով:

Ավ. Իսահակյանի արձանից քիչ այն կողմ Իտալիայի Կարարա քաղաքի նվեր՝ «Բարեկամության ձեռքեր» հուշարձանն է: Իսկ դիմացի այգում այն խաչքար-աղբյուրի նմանակըն է, որը երևանցիները նվիրել են Կարարա քաղաքին:

Շարունակում ենք մեր շրջագայությունը, հասնում Սայաթ-Նովա պողոտային: Ձախ կողմում «Անի» հյուրանոցի բազմահարկ շենքն է, որը կրում է միջնադարյան հայոց մայրաքաղաքի անունը, իսկ աջում՝ Հանրապետության գեղագիտական դաստիարակության կենտրոնը, որի ընդարձակ սրահներում ցուցադրված են Միության բոլոր հանրապետությունների և աշխարհի շուրջ հարյուր երկրների երեխաների 150 հազար հետաքրքիր գործեր՝ յուղաներկ ու ջրաներկ կտավներ, գորգեր, գոբելեններ, դիմակներ, տիկնիկներ, քանդակներ և այլ ցուցանմուշներ: Գեղագիտական կենտրոնը մինչև վերջերս միակն էր աշխարհում և իր ծննդյան օրից (1970 թ.) ձեռք է բերել միջազգային համարում:

ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Մեր ճանապարհին «Մոսկվա» կինոթատրոնն է, Հայաստանի նկարիչների տունը, Կ. Ստանիսլավսկու անվան ռուսա-

կան պետական դրամատիկական թատրոնը, «Երևան» հյուրանոցը, արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի ընկերությունը, «Գիտելիք» հանրապետական ընկերությունը, «Մանկական աշխարհ» հանրախանութը, Հայֆիլհարմոնիայի փոքըր համերգասրահը, գրախանութներ և այլն: Ահա և իր ամբողջ վեհությամբ ու կոթողների կուռ միասնությամբ մեր առջև երևում է մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի անվան հրապարակը՝ Երևանի սիրտը:

Բարձունքից դիտելիս Երևանը նման է երփներանգ քարե ծաղկի, որի վարսանդը Լենինի հրապարակն է՝ ծաղկաթերթի նման բոլորված թաղամասերով:

Խորհրդային Երևանի ճարտարապետական փայլն ու հպարտությունը, քաղաքաշինության բարձրակետը անմահ Լենինի անունը կրող հրապարակն է, ուր 1940 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 20-րդ տարեդարձի առթիվ հայ երախտապարտ ժողովուրդը կանգնեցրեց մեծ առաջնորդի հուշարձանը (հեղինակ՝ ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Ս. Դ. Մերկուրով, ճարտարապետներ՝ Լ. Ս. Վարդանյան, Ն, Ֆ. Փարեմուզովա): Արձանը պատրաստված է դրվագված պղնձից, պատվանդանի հետ միասին բարձրությունը 19,5 մետր է: Պատվանդանը կառուցված է տեղական Փամբակի հղկված գրանիտից:

Հրապարակում անկրկնելի է կառավարական տունը, ուր Ալ. Թամանյանը հմտորեն ու նորովի է կիրառել հայ միջնադարյան դասական ճարտարապետության բնորոշ ոճերն ու կառուցաձևերը: Հենց այդ շինությունն էլ խորհրդանշում է Հայաստանի և հայ ժողովրդի վերածնունդը, որը 1924 թ. արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի: Մեծատաղանդ ճարտարապետը այդ տարիներին նախանշեց հրապարակի ողջ համալիրի հետագա չափագծերն ու շրջափակող շենքերի ծավալներն ու ոճաձևերը:

Հայկական ԽՍՀ մինիստրությունների, «Արմենիա» հյուրանոցի, թանգարանների, արհմիությունների և կապի տան շենքերը շուրջպար բռնած հրաշալի անսամբլ են կազմում և զարդարում մայրաքաղաքի գլխավոր հրապարակը: Ամռան ու աշնան ամիսներին, երբ երեկոները երգող շատրվանի ջրերը հորձանք տալով վեր են խոյանում, երբ երաժշտության ելևէջներից նուրբ երանգներով է ներկվում նրանց

ցոլքը, հրապարակը դառնում է հեքիաթային: Հազարավոր երևանցիներ ու բազմաթիվ հյուրեր զմայլված հրաշալի տեսարանով իրենց հաճելի հանգիստը անց են կացնում այստեղ: Եվ, իրավամբ, Լենինի անվան հրապարակը համարվում է երևանցիների և մեր հյուրերի զբոսանքի ու հանգստի ամենասիրված վայրերից մեկը:

Հատկապես գեղեցիկ ու բազմերանգ գույներով է զարդարվում հրապարակը, Նոյեմբերյան, մայիսմեկյան և հիշարժան այլ տոնակատարությունների օրերին: Գարնանային պերճանքով է լցվում Խորհըրդային Հայաստանի հանդիսությունների գլխավոր կենտրոնը, ծփանքի մեջ է լինում մեծ առաջնորդի անունը կրող հսկայածավալ հրապարակը:

Լենինի անվան հրապարակում է գտնվում Հայաստանի պատմության պետական թանգարանը: Այն հիմնադրվել է 1921 թ.: Հայ ժողովուրդը հնարավորություն ունեցավ հայրենի հարկի տակ հավաքելու իր պատմության ու հերոսական անցյալի վկայությունը հաստատող նյութական և հոգևոր մշակույթի գանձերը և այն ցուցադրել մարդկությանը:

Հայաստանի պատմության պետական թանգարանը հանրապետության գիտական, մշակութային, կուլտուր-լուսավորական հաստատություններից է: Թանգարանում ստեղծվել են հնագիտական և ազգագրական, հեղափոխության, պատմագրական, գեղարվեստական, տնայնագործական և այլ բաժիններ: Ֆոնդերում պահպանվում են ավելի քան երեք հարյուր հազար թանգարանային արժեքներ, որոնք լուսաբանում են հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Այստեղ ցուցադրված են նաև հայ-ռուսական դարավոր բարեկամության և անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական կապերին վերաբերող հարուստ նյութեր:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հեղափոխության պետական թանգարանը, որի ցուցադրությունները վառ կերպով պատմում են հերոսական այն համատեղ պայքարի մասին, որ կատարել են հայ, ռուս, ուկրաինացի, էստոնացի, վրացի, բելոռուս և այլ ժողովուրդների ազնիվ զավակները հանուն մեծ Հոկտեմբերի նվաճումների:

Ահա և մենք Հայաստանի պետական պատկերասրահում ենք: Այստեղ ցուցադրված են հայ, ռուս և արևմտաեվրոպական ականավոր նկարիչների մեծարժեք բազմաթիվ կտավներ, որոն-

ցից յուրաքանչյուրը յուրովի է հարստացնում մշակույթի այս հրաշալի գանձարանը:

Պատկերասրահը Խորհրդային Միության խոշոր թանգարաններից է, հատկապես հայ կերպարվեստի՝ գեղանկարչության, գծանկարչության (գրաֆիկայի) և քանդակագործության հավաքածուներով:

Գրականության և արվեստի թանգարանը նույնպես բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում և անսպառ նյութ տալիս տարբեր սերունդների, հայ գրողների, երաժիշտների ու արվեստագետների կյանքի ու գործունեության մասին:

Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի հրապարակները միացնող զբոսայգում ցայտող 2750 շատրվանները կառուցվել են 1968 թ. Երևանի հիմնադրման 2750-ամյակի առթիվ: Շատրվանախմբի շարքում սև մարմարից կառուցված հուշարձան է, իսկ կենտրոնում՝ հավերժական կրակ: Այն նվիրված է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման համար զոհված հերոսների հիշատակին: Մի քանի քայլ այն կողմ Ստեփան Շահումյանի հուշարձանն է:

Ստեփան Շահումյան (1878—1918): Խորհրդային կոմունիստական կուսակցության և միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչ, մարքսիզմի տեսաբան, սոցիոլոգ, ժուռնալիստ, հրապարակախոս: Հեղափոխության փորձություններով անցած Ստ. Շահումյանը 1899-ին Հայաստանում՝ Ջալալօղլիում (Ստեփանավան) ստեղծում է առաջին մարքսիստական խմբակը, իսկ 1902 թ. ստեղծում և ղեկավարում է «Հայ սոցիալ-դեմոկրատական միությունը»:

Սովորել է Բեռլինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, մասնակցել է Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության գործունեությանը, ծանոթացել Կ. Կաուցկու, Ա. Բեբելի, Ֆ. Մերինգի, Կ. Լիբկնեխտի, Ռ. Լյուքսեմբուրգի և ուրիշ առաջադեմ մարդկանց հետ: 1903 թ. Շվեցարիայում առաջին անգամ հանդիպել է Վ. Ի. Լենինին: Պրոֆեսիոնալ հեղափոխականը պայքարի դժվարին ու պանծալի ուղի է անցել: Նա ղեկավարել է հեղափոխական բազմաթիվ շարժումներ ու գործադուլներ, հանդես է եկել հրապարակախոսական ելույթներով, հայերեն թարգմանել «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», աշխատել է Թիֆլիսում, եղել է ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի ղեկավարներից: Աշխատակցել է բոլշևիկյան «Պրավ-

դա», «Վպերյոդ», «Պրոլետարի» թերթերին: 1905 թ. հիմնադրել ու խմբագրել է «Կովկազսկի ռաբոչի լիստոկ» բոլշևիկյան առաջին լեգալ թերթը Անդրկովկասում, իսկ 1906-ին «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» հայերեն թերթերը: 1906-ին Երևանի կազմակերպությունից մասնակցել է ՌՍԴԲԿ չորրորդ (միավորիչ) համագումարին, իսկ 1907-ին Բորչալուի կազմակերպությունից՝ ՌՍԴԲԿ հինգերորդ համագումարին:

1907-ին տեղափոխվել է Բաքու, դարձել տեղի կուսակցության կազմակերպության ղեկավարը: Ստոլիպինյան ռեակցիայի դաժան տարիներին Ստ. Շահումյանը հիմնադրել է «Բակինսկի պրոլետարի», «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ», «Վոլնա» և այլ թերթեր ու ամսագրեր:

Հեղափոխական աննկուն պայքար է ծավալել Ստ. Շահումյանը: 1917-ի փետրվարյան հեղափոխությունից հետո ազատվել է աքսորից ու վերադարձել Բաքու, որի բանվորների և դեպուտատների խորհրդի նախագահ էր ընտրվել հեռակա կարգով: Նույն թվականին նշանակվել է Կովկասի գործերի արտակարգ կոմիսար և գլխավորել երկրամասի աշխատավորների պայքարը խորհրդային իշխանության հաստատման համար: Կազմակերպում է Կովկասյան կարմիր բանակը, խորհրդային իշխանություն հաստատում քաղաքի մերձակա շրջաններում:

1918 թ. մայիսի 14-ին Վ. Ի. Լենինը գրել է. «Թանկագին ընկեր Շահումյան, մենք հրճվում ենք ձեր հաստատակամությամբ: Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որն անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ և մենք կհաղթենք»:

Թշնամու գերակշռող ուժերի ճնշման տակ Բաքվում խորհրդային իշխանությունը ժամանակավոր պարտություն կրեց: Շահումյանն ու նրա ընկերները (Բաքվի 26 կոմիսարները) ձերբակալվեցին և գնդակահարվեցին անդրկասպյան ավազուտներում՝ էսէռների ու անգլիական ինտերվենտների կողմից:

Ստ. Շահումյանը թողել է գիտական մեծ ժառանգություն, նրա երկերը հրատարակվել են հինգ հատորով: Հայ ժողվրդի սիրելի զավակի անունով են կոչվում Ստեփանավանի շրջանը, մայրաքաղաքի շրջաններից մեկը, հանրապետության քաղլուստունը, միջնակարգ դպրոց, փողոցներ: Շահումյանի անունով շրջան կա Բաքվում, Ռոստովի մարզում

4 այլուր: Շահումյանի անվամբ է կոչվում Երևանի ամենահնագույն արդյունաբերական ձեռնարկություններից մեկը՝ կաշվի գործարանը, ուր ելույթ է ունեցել «Կովկասյան բոլշևիզմի պարագլուխը» (բնորոշումը Ա. Մյասնիկյանինն է):

Ստ. Շահումյանի արձանի հանդիպակաց կողմում, 26 կոմիսարների անվան զբոսայգու հարևանությամբ շատրվանախումբ է, ծառ ու ծաղիկ, իսկ Կարմիր բանակի փողոցի հատման մասը ամփոփում է Ալեքսանդր Մյասնիկյանի մոնումենտալ հուշարձանը (հեղինակ՝ Արա Շիրազ): Հուշահամալիրի գրանիտյա սյուներից մեկի վրա փորագրված է Ե. Չարենցի խոսքերը.

Նաիրյան արևն էր քո մեջ
Լենինյան հրով ճառագած...

ԴԵՊԻ ՆՈՐ ՆՈՐՔ

Սակայն կրկին տեղափոխվեք Աբովյան պուրակ, որից այն կողմ սկսվում է Մյասնիկյան պողոտան և պատմենք խորհրդային կուսակցական ու պետական անվանի այս գործիչի՝ «Պողպատյա Մյասնիկյանի» մասին, ինչպես նրան անվանում էին ժամանակակիցները:

Ալեքսանդր Ֆեոդորի Մյասնիկյան (Մյասնիկով, 1886—1925):

Ծնվել է Նոր-Նախիջևանում (Դոնի Ռոստով), ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ուսանողական տարիներից ակտիվ մասնակցություն է ունեցել ընդհատակյա և լեգալ հեղափոխական աշխատանքներին: Բաքվում համագործակցել է Ստ. Շահումյանին: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից զորակոչվել է բանակ: Հիմնադրել է «Զվեզդա» թերթը, ընտրվել է Բելոռուսիայի կոմկուսի կենտկոմի նախագահ: Հոկտեմբերյան զինված ապստամբությունից հետո Հյուսիս Արևմտյան ռազմաճակատի ռազմհեղկոմի նախագահ էր, գլխավոր հրամանատար, ապա նորաստեղծ կարմիր բանակի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ և գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ, 1919-ին՝ Բելոռուսիայի կենտգործկոմի և կոմկուսի կենտրոնական բյուրոյի նախագահ: Այնուհետև տեղափոխվել է Մոսկվա ու ընտրվել ՌԿ(բ)Կ Մոսկվայի քաղաքային ու նահանգային կոմիտեների առաջին քարտուղար: 1921-ին նշանակվել է Հայաստանի նորաստեղծ կառավարության նախագահ և ռազմական գործերի ժողկոմ: Անդրֆեդերացիայի կազմակերպումից հետո (1922-ի մարտ) Մյասնիկյանը Անդրկովկասյան երկրային կոմիտեի առաջին քարտուղարն էր:

Կուսակցական, պետական ու ռազմական գործունեությանը զուգահեռ Մյասնիկյանը տաղանդավոր հրապարակախոս էր, գրականագետ ու խմբագիր: Կյանքի 39-րդ տարում զոհվել է Թիֆլիսի օդանավակայանում, ինքնաթիռի աղետի հետևանքով:

Մյասնիկյան պողոտան Ավանի գեղատեսիլ ձորով մեզ տանում է Երևանի Նոր Նորք, Ավան բնակելի թաղամասերը: Մեր ճանապարհին Երևանի կենդանաբանական այգին է, երկրում լավագույններից մեկը, այնուհետև՝ բուսաբանական այգին: Ձախ կողմի ճանապարհը տանում է դեպի Երևան—Սևան մայրուղի, որի երկու կողմերում բնակելի տներ են, գիտահետազոտական ինստիտուտներ, առևտրի օբյեկտներ: Աջ կողմից սկսվում է Գայի պողոտան, ուր բարձունքի վրա կանգնած է լեգենդար հերոսի հուշարձանը՝ նժույգին բազմած:

Գայ: Հայկ Դմիտրիի Բժշկյան (1887—1937): Խորհրդային ռազմական գործիչ, քաղաքացիական պատերազմի հերոս, «Երկաթյա դիվիզիայի» հրամանատար: Քաղաքացիական կռիվների ժամանակ պայքարել է սպիտակ չեխերի, Կոլչակի, Դենիկինի դեմ, նշանակվել է Արևելյան ռազմաճակատի առաջին բանակի հրամանատար: Ղեկավարել է Ուրալի, Պովոլժյեի, Օրենբուրգի, Ուֆայի, Օրսկի պաշտպանական մարտերը: Ազատագրել է Սիմբիրսկը, Սիզրանը, Սենգիլեյը, Բուգուլմկը և այլ քաղաքներ ու բնակավայրեր: Սիմբիրսկը ազատագրելուց հետո Գայը վիրավոր Լենինին հեռագրում է. «Սիրելի Վլադիմիր Իլյիչ, Ձեր հարազատ քաղաքի գրավումը պատասխանն է Ձեր մի վերքին, իսկ երկրորդինը կլինի Սամարան»:

Գայը 1922 թվին եղել է ՀԽՍՀ ռազմական գործերի ժողկոմ, ապա հանրապետության ռազմական կոմիսար: 1933-ից աշխատել է Ն. Ժուկովսկու անվան ռազմաօդային ակադեմիայում, եղել է ռազմական արվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, գրել է գիտական ուշագրավ աշխատություններ: Գայի և նրա «Երկաթյա դիվիզիայի» մարտիկների հիշատակին հուշարձան է կանգ-

նեցված Ուլյանովսկում: Նրա անունով են կոչվում ԽՍՀՄ տարբեր քաղաքներում դպրոցներ, պիոներական դրուժինաներ, փողոցներ, Երևանի սպայի տունը և այլն:

Գայի պողոտայի վրա է գտնըվում Հայկ Նահապետի արձանը: Հսկայի ձեռքերում պըրկված նետն ու աղեղն է, որը ուղղել է դեպի ոսոխը:

Յուրաքանչյուր ժողովուրդ ավանդություններ է հյուսում իր ծագման ու ձևավորման մասին և փոխանցում սերնդե-սերունդ: Հայ ժողովրդի համար ինքնատիպ «ծննդյան վկայական» է Հայկի և Բելի մասին ավանդությունը, որը մեկուկես հազարամյակ առաջ գրի է առել պատմահայր Մովսես Խորենացին:

... Հայկը վայելչակազմ, վառվռուն աչքերով, գեղեցիկ ու թիկնեղ, գանգրահեր ու հաղթաբազուկ մի այր էր, քաջ ու երևելի դյուցազն: Նա իր ուստրերով ու դուստրերով, թոռներով ու ծոռներով ապրում էր Բաբելոնից հյուսիս ընկած Արարատ երկրում: Մյուս բոլոր ժողովուրդներին իրեն ենթարկելուց հետո, Բաբելոնի բռնակալ թագավոր Բելը լուր է ուղարկում Հայկին, թե. «Ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր...»: Հայկը մերժում է նրան և խիստ պատասխանով ետ է ուղարկում Բելի պատգամավորներին: Բելը զորք հավաքած արշավում է Արարատյան երկիր և ուզում է ուժով հպատակեցնել Հայկին: Քաջարի Հայկը իր որդիներով, թոռներով գնում է Բելի զորաբանակին ընդառաջ, հասնում է Վանա լճին: Թշնամու զորքի մեջ ճանաչելով Բելին, Հայկը ուժգին ձգում է լայնալիճ աղեղը և դիպուկ արձակում եռաթև նետը, որը ծակում-անցնում է Բելի կուրծքը պաշտպանող զրահը և խրվում հողի մեջ: Բելը անշնչացած տապալվում է գետնին, իսկ բաբելոնական բանակը փախուստի է դիմում: Ըստ Խորենացու՝ Բելին հաղթելու վայրը Հայկը անվանում է Հայք, որի անունով էլ շըրջակա գավառը կոչվեց Հայոց ձոր: Հայկի սերունդները իրենց կոչեցին Հայկի զավակներ, հայկազուններ, հայեր, իսկ իրենց երկիրը՝ Հայք, Հայաստան:

Ըստ այս ավանդազրույցի Հայկը համարվում է մեր անվանադիր նախնին, ռազմի գերագույն աստվածը: Հայ ժողովուրդը նրա անունով է կոչել Օրիոն համաստեղությունը: «Աղեղնավոր», «Գեղապատշաճ», «Խայտակն», «Քաջագանգուր», «Վարսագեղ» մականուններով փառաբանվող Հայկը երբեմն նույնացվել է շի-

կակարմիր Հրահատ (Մարս) մոլորակին: Ավանդությունն ասում է, որ Հայկը մեր առաջին տոմարագիրն է, այսինքն՝ ժամանակի, տարվա չափ ու շրջանը որոշողը, իսկ տարվա ամիսները կոչվել են Հայկի ուստրերի ու դուստրերի անուններով:

Սովետական շրջանը Երևանի ամենաերիտասարդ, սակայն բնակչության թվով ու տարածքով ամենամեծն է: Այստեղ հիմնականում վարչական շենքեր են, դպրոցներ, առևտրական օբյեկտներ, մշակույթի օջախներ: Այստեղ ստեղծվել է առատ կանաչ գոտի: Մայրուղու և այլ ճանապարհների վրա ցուցադրված են Հայաստանի տարածքում գտնված քարատեսակներ: Հսկա ապառաժներն իրենց մոտ են կանչում և դու ակամա ծանոթանում ես Հայաստանի գրանիտին, բազալտին, ֆելզիտին և այլ քարատեսակների: Ավելի մեծ է հետաքրքրությունը հազարավոր տարիների հնություն ունեցող խաչքարերի, կենդանիների ու թռչունների պատկերներով քարերի նկատմամբ, որոնք ունեն հակիրճ բացատրություններ: Նորաստեղծ շրջանում կառուցվել են շատրվաններ, լողավազաններ, տարեցտարի ընդարձակվում է կանաչ գոտին: Անցած 20 տարում Նոր Նորքի բարձունքներում հոյակերտ մի քաղաք է բարձրացել իր 9 բնակելի զանգվածներով:

Նորից Խ. Աբովյանի արձանի մոտ ենք: Ձախ կողմում Նորքի բարձունքն է ու Նոր Մարաշը: Այստեղ Հայկական հեռուստատեսությունն է, որի առաջին հաղորդումը տրվեց 1956 թվականին: Այնուհետև տեսնում ենք բնակելի շենքեր, առողջապահական և ուսումնական հաստատություններ, տուրիստական բազաներ ու հանգըրվաններ: Այս թաղամասերը նույնպես թաղված են ծառ ու ծաղիկների, խաղողի այգիների մեջ: Այստեղ են գտնվում «Նաիրի» հյուրանոցը՝ զբոսաշրջիկների հիմնական բազան, «Ծիծեռնակ» միջազգային երիտասարդական կենտրոնը, որոնք էքսկուրսիաների ու հանգստի ճանաչված հանգըրվաններ են:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊՈՂՈՏԱ

Մեր շրջագայությունը շարունակելու համար նորից տեղափոխվենք Լենինի հրապա-

րակ, որտեղից ճառագայթաձև սկիզբ են առնում մի քանի փողոցներ: Ձախ կողմում Ամիրյան փողոցն է, որը ձըգվում է մինչև Կոնդ թաղամասը: Սա քաղաքի գեղեցիկ փողոցներից մեկն է, իսկ հրապարակից աջ՝ Հոկտեմբերյան պողոտան է, որը հասնում է մինչև երկաթուղային կայարան: Պողոտան հատում են Խանջյան և 26 կոմիսարների փողոցները: Աղասի Խանջյանը հայ ժողովրդի սիրելի ու երախտավոր զավակներից է, (1901—1936): 1922 թ. կուսակցական ղեկավար աշխատանք է տարել Լենինգրադում, աշխատել է Վ. Ի. Լենինի, Ս. Մ. Կիրովի հետ: 1930—1936 թվականներին Ա. Խանջյանը Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարն էր:

Խանջյան փողոցի վրա Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտն է, հանդիպակաց մասում՝ ռուս ժողովրդի հանճարեղ զավակ Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովի արձանը: Գրանիտյա պատվանդանին արձանագրություն կա՝ «Ալեքսանդր Գրիբոյեդովին՝ շնորհակալ հայ ժողովրդից» (Քանդակագործ՝ Օ. Բեջանյան, ճարտարապետ՝ Ս. Կնդեղցյան): Խանջյան փողոցի վրա են գըտնըվում Տ. Պետրոսյանի անվան շախմատի կենտրոնական տունը, «Կռունկ» սրճարանը, այլ հաստատություններ ու բնակելի շենքեր:

Վերադառնանք Հոկտեմբերյան պողոտայի խաչմերուկ: 26 կոմիսարների փողոցի առաջին աչքի ընկնող շենքը «Ռոսիա» կինոթատրոնի շենքն է, հանրապետությունում ամենամեծը: (Մեծ դահլիճը 1600, փոքրը՝ 1000 հանդիսատեսի համար): Երրորդ դահլիճում ցուցադըրվում են փաստագրական ֆիլմեր: Շենքն ունի ինքնատիպ, հարուստ ու հետաքրքիր ձևավորում: Օգտագործվել են կերամիկա, կոփածոներ, քանդակներ, ապակենկարներ և այլն:

Դեպի աջ, փողոցը հասնում է մինչև Օրջոնիկիձեի պողոտա ու ավարտվում: Այստեղ Երևանի պետկրկեսն է, ուր հանդես են գալիս տեղի, ինչպես նաև Միության տարբեր քաղաքներից եկած կրկեսի վարպետները:

Հոկտեմբերյան պողոտայով շարժվում ենք առաջ: Մարքսի փողոցի հատվածում Երևանի պետական համալսարանի բազմահարկ շենքն է, կողքին՝ քաղաքի կոլտնտեսային ծածկած խոշոր շուկաներից մեկը: Այս պողոտայի վրա է գտնվում նաև «Գայանե» հանրախանութը: Հենց այս հատվածից էլ

սկիզբ է առնում հայ դասական գրող Նար-Դոսի անունը կրող փողոցը, որը միանում է Զարենցի փողոցին: Այդ թաղամասում են գտնվում հանրապետական մարզադաշտը և V դարի հայ ժողովրդի ազգային հերոս, մեծ զորավար Վարդան Մամիկոնյանի հուշարձանը, (հեղինակ՝ Ե. Քոչար):

Հոկտեմբերյան պողոտան ավարտվում է Լենինի շքանշանակիր Երևանի երկաթուղային կայարանի մոտ: Կայարանամերձ հրապարակում մեծատաղանդ քանդակագործ ու նկարիչ Երվանդ Քոչարի կերտած հայկական ժողովրդական էպոսի հերոս Սասունցի Դավթի փառահեղ հուշարձանն է: Վիթխարի հեծյալի դինամիկ կերպարը դարձել է մայրաքաղաքի խորհըրդանիշը, որի ընդհանուր բարձրությունը կազմում է 12,5 մետր: Կայարանի դիմացի փողոցը Մայակովսկու անունն է կրում, որը տանում է դեպի Օրջոնիկիձեի շրջանի կենտրոնական մասը, հասնում մինչև Կոմերիտմիության անվան զբոսայգին ու լիճը, շարունակում Սովետաշեն փողոցով ու հասնում Վարդաշեն թաղամաս:

ԷՐԵԲՈՒՆԻ

Ավարտվում է Հոկտեմբերյան պողոտան, սկսվում է Բաքվի փողոցը, որի ձախ կողմի վրա Էրեբունի փողոցն է «Էրեբունի» թանգարանով: Այստեղ է նաև Ուրարտական բերդաքաղաք Էրեբունին (782 թ. մ. թ. ա.):

Արին-Բերդ բլրի ստորոտում կանգնած է կարմիր տուֆից կառուցված երկհարկանի մի շենք: Դա Երևանի հիմնադըրման թանգարանն է: Շինությունը կառուցված է ուրարտական ոճով, շենքի ճակատին, կենտրոնական մուտքի պատի ողջ բարձրությամբ, քաղաքը հիմնադրող Արգիշտի Առաջին թագավորի խորաքանդակ դիմանկարն է: Թանգարանում ցուցադրված են բերդի պեղումների ժամանակ հայտնաբերված 1500 հետաքրքիր նյութեր: Այստեղ ցուցադրվում են նաև Երևանի 2750 ամյակին նվիրված տոնակատարության առթիվ ստացված նվերները:

Երկու հարյուրից ավելի աստիճանները մեզ հասցնում են բլրի գագաթը: Կենտրոնական մուտքի ձախ կողմում, քարի վրա փորագրված սեպագիր արձանագրությունն է, Երևանի ծննդյան վկայագիրը: Միջնաբերդի կենտրոնում թագավորական-ռազմական խորհրդի սյունազարդ դահլիճն է, որը ծառայել է նաև հանդիսությունների համար: Հետաքրքիր շատ բան կա տեսնելու թե՛ թանգա-

րանում և թե՛ բերդաքաղաքում:

Վերադառնանք Բաքվի փողոց, որից այն կողմ սկսվում է Արտաշատի խճուղին: Այս մայրուղին տանում է դեպի Մասիս, Արտաշատ, Եղեգնաձոր, Ազիզբեկով, Սիսիան, Գորիս, հանրապետության հարավային շրջաններն ու բնակավայրերը:

ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Արտաշատի խճուղու մի հատվածում, աջ կողմից սկսում է Թամանցիների փողոցը: Այստեղ հանրապետության արդյունաբերական խոշոր ձեռնարկություններն են, որով հայտնի է մայրաքաղաքի Լենինյան շրջանը:

Թամանցիների փողոցը ձգվում է մինչև Սպանդարյան հրապարակ:

Սուրեն Սպանդարյան (1882—1916): Անդրկովկասի բոլշևիկյան խոշոր գործիչներից մեկը: Մարքսիստ, հրապարակախոս, փայլուն հռետոր ու լրագրող: Ստ. Շահումյանի հետ խմբագրել է «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» հայերեն բոլշևիկյան թերթերը: 1912 թ. ՌՍԴԲ (բ) Կ 6-րդ համագումարում որպես Բաքվի կազմակերպության պատգամավոր հանդիպում է Վ. Ի. Լենինին և նրանց միջև ջերմ բարեկամություն է հաստատվում: Սպանդարյանը ընտրվում է ՌՍԴԲ (բ) Կ Կենտկոմի անդամ: Նա վախճանվեց 34 տարեկանում, աքսորավայրում: Լենինյան գվարդիայի աննկուն մարտիկի անունով են կոչվում Երևանի շրջաններից մեկը, գյուղեր, արտադրական ձեռնարկություններ, ուսումնական հաստատություններ և այս ընդարձակ հրապարակը:

Թամանցիների փողոցով հատելով մի շարք փողոցներ, հասնում ենք Երևանյան լիճ: Ծովակալ Իսակովի պողոտայից՝ կամուրջ-խաչմերուկի հատվածից, սկսվում է Սեբաստիա փողոցը, որը կտրում-անցնում է Արարատյան բնակելի զանգվածը, Շահումյանի ողջ շրջանը:

Այս մայրուղին տանում է Լենինական, Կիրովական քաղաքները, Աշտարակի, Թալինի, Ապարանի, Սպիտակի, Ստեփանավանի, Կալինինոյի շրջանները, դուրս գալիս հանրապետության սահմաններից ու մտնում եղբայրական Վրաստան:

Սակայն մենք նորից վերադառնանք Թամանցիների փո-

ղոց՝ Աշխատանքի հրապարակ, ուր վեր է խոյանում Բանվորի վիթխարի արձանը: Այս հատվածի աջ ու ձախ կողմերի վրա ձգվում է վրաց ժողովրդի ազնիվ զավակ, խորհրդային պետական և կուսակցական խոշոր գործիչ, Հայաստանի և հայ ժողովրդի լավագույն բարեկամ Ս. Օրջոնիկիձեի անունը կրող գեղեցիկ պողոտան:

Գրիգորի Կոնստանդինի Օրջոնիկիձե (Սերգո), (1886—1937): Ծնվել է ազնվականի ընտանիքում: Երիտասարդ տարիներից զինվորագրվել է հեղափոխությանը:

Փոթորկուն է եղել լենինյան գվարդիայի աննկուն մարտիկ Գ. Օրջոնիկիձեի անցած ճանապարհը: Մարտնչել է Դոնի, Ցարիցինի (այժմ Վոլգոգրադ), Օրյոլի, Խարկովի և այլ քաղաքների պաշտպանության համար: 1920 թ. Հյուսիս-կովկասյան հեղկոմի նախագահն էր: Նույն թվին ՌԿ (բ) Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի նախագահ, Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման ակտիվ մասնակից: Գ. Օրջոնիկիձեն վարել է Համկ (բ) Կ կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի, ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի պաշտոնները, եղել է ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմը, Համամիութենական ժողովրդական տնտեսության բյուրոյի խորհրդի նախագահը, իսկ 1930 թ. Համկ (բ) Կ քաղբյուրոյի անդամ:

Երևանում Գ. Օրջոնիկիձեի անունով են կոչվում քաղաքի շրջաններից մեկը, միջնակարգ դպրոց, հաստոցաշինական գործարան, գյուղ ՀԽՍՀ Կրասնոսելսկի շրջանում և այլն:

Օրջոնիկիձեի անունը կրող պողոտան քաղաքի Լենինյան շրջանի՝ արդյունաբերական այս կենտրոնի սիրտն է: Պողոտան ձգվում է մինչև «Էրեբունի» օդանավակայան: Մենք էլ տեղափոխվենք այդ հատվածը և ծանոթանալով հիշարժան օբյեկտներին քայլենք դեպի քաղաքի կենտրոն:

«Էրեբունի» օդանավակայանը հաղորդակցվում է երկրի բազմաթիվ քաղաքների հետ. Թբիլիսի, Բաքու, Ստեփանակերտ, Կրասնոդար և այլն: Դեպի քաղաք՝ Օրջոնիկիձեի պողոտայի ձախ կողմից, սկսվում է Շիրակի փողոցը, որն անցնելով դաշնամուրի գործարանի, տրանսպորտային ձեռնարկությունների, բնակելի թաղամասերի միջով՝ հասնում է Չարբախ, ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդես, ծիարշավարան ու պատմական Կարմիր բլուր: Եվ այսպես «Էրեբունի» օդանավակայանի մոտից, Օրջոնիկի-

ձեի պողոտայով, մենք ուղղությունն վերցնենք դեպի քաղաքի կենտրոնական մասը: Ահա «Հայրենիք» կինոթատրոնը, որը գտնվում է Օրջոնիկիձեի պողոտայի և Կալինինի փողոցի խաչմերուկի ձախ կողմում: Հանդիպակաց մասում Լենինյան շրջանի հանրախանութն է: Այնուհետև գործարաններ ու ֆաբրիկաներ, բնակելի շենքեր: Ձախ կողմում Կոմիտասի անվան կուլտուրայի և հանգստի զբոսայգին է: Այստեղ է գտնվում քաղաքային պանթեոնը, ուր հանգչում են հայ ժողովրդի մեծերը՝ Կոմիտասը, Ավ. Իսահակյանը, Վ. Փափազյանը, Լեոն, Մ. Սարյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Հ. Ներսիսյանը, Ալ. Շիրվանզադեն, Ա. Խաչատրյանը, Վ. Աճեմյանը, Վ. Տերյանը, Ալ. Թամանյանը, Հովհ. Հովհաննիսյանը և այլք:

Օրջոնիկիձեի պողոտան և Կարմիր բանակի փողոցները բաժանվում են պետկրկեսի մոտ: Այստեղ՝ ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության նորակառույց շենքն է՝ Մամուլի տունը, թերթերի ու ամսագրերի խմբագրությունների բազմահարկը, ուր պատրաստվում և տպագրվում են տասնյակ թերթեր ու ամսագրեր, բրոշյուրներ, գիրք-ալբոմներ և ռեկլամային գունագեղ այլ նյութեր:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ

Կարմիր բանակի փողոցի վրա է գտնվում Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի շենքը: Թատրոնի վեհաշուք շենքի առջև կանգնած է հայ ռեալիստական դրամատուրգիայի հիմնադիր՝ Գաբրիել Սունդուկյանի (1825—1912) արձանը: Սունդուկյանը կրթությունը ստացել է Թիֆլիսում, այնուհետև՝ Պետերբուրգի համալսարանում:

Խորհրդային Հայաստանի առաջին պետական թատրոնի վարագույրը բացվեց Գ. Սունդուկյանի «Պեպոյի» բեմադրությամբ 1922 թ.: «Պեպո», «Խաթաբալա», «Քանդած օջախ» և մյուս ստեղծագործությունների գեղարվեստական մեծ արժանիքների համար Գ. Սունդուկյանը դարձավ հայ ժողովրդի սիրելին, հայ գրականության խոշոր ներկայացուցիչներից մեկը:

Նրա անունով կան փողոցներ, դպրոցներ: Սահմանված է Գ. Սունդուկյանի անվան գրական մրցանակ, որին արժանանում են տարվա լավագույն պիեսների հեղինակները: Գ. Սունդուկյանի անունը կրող Խորհրդային Հայաստանի մայր թատրոնում բեմ են բարձրացել բազմաթիվ մեծանուն դերասաններ, աշխարհահռչակ արվեստագետներ: Ասենք, որ հայ թատրոնն ունի ավելի քան 2000 տարվա պատմություն:

Երևանում բուռն թափով է զարգանում մշակույթը: Մայրաքաղաքում այսօր գործում են 11 պետական թատրոններ, 22 կինոթատրոններ, մշակույթի շուրջ 100 տուն: Թատրոնի շենքը գտնվում է 26 կոմիսարների անվան կուլտուրայի և հանգստի զբոսայգում, որը երևանցիների հանգստի սիրելի վայրերից է:

Զբոսայգու մոտ, ինչպես արդեն ասվել է, կանգնած է Ալ. Մյասնիկյանի հուշարձանը, իսկ դիմացը Ս. Մ. Կիրովի անվան մանկական զբոսայգին է, ուր օրնիբուն զրնգում է երեխաների երգն ու ծիծաղը: Զբոսայգում 1950 թ. կանգնեցվեց Խորհրդային Միության կրկնակի հերոս օդաչու Նելսոն Ստեփանյանի կիսանդրին: Այգու հանդիպակաց մասում Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի շենքն է: Կարմիր բանակի փողոցն ավարտվում է Լենինի պողոտայի հատույթում, որտեղից և սկսվում է հայ դասական երգիծաբան Հ. Պարոնյանի անունը կրող փողոցը: Այս փողոցի վրա են «Դվին» և «Հրազդան» հյուրանոցները, ձախ կողմում՝ Հրազդանի գեղատեսիլ ձորը, մանկական երկաթուղին, հանգստի գոտիները: Անցնում ենք առաջ. շարունակությունը հայ դասական գրող Պռոշյանի փողոցն է: Այս հատվածում Հայաստանի կոմպոզիտորների միությունն է, ձախում՝ Այգեձոր հրաշալի թաղամասը: Շարունակելով ճանապարհը, դուրս ենք գալիս Մարշալ Բաղրամյան լայնահուն պողոտան:

ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ

Հայ զորահրամանատարության համաստեղության մեջ առանձնակի համարում ունի Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս, մեծ հայրենասեր ու քաղաքացի Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը (1897—1982): Ականավոր զորավարը ոսկե տառերով գրեց մեր Մեծ Հայրենիքի ու իր գեղեցիկ կյանքի հավերժ հերոսական պատմությունը:

Ընդամենը տասնութ տարե-

կան էր, երբ կամավոր զինվորագրվեց ժողովրդի փրկության գործին և նրա ծառայությունը տևեց շուրջ յոթ տասնյակ տարի: Կռվեց Կարսում, ուր հանդիպեց ազգային հերոս Անդրանիկին, մասնակցեց թուրք հրոսակների դեմ մղված Սարդարապատի հերոսամարտին: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո դարձյալ կամավոր մտնում է Կարմիր բանակի շարքերը: 1923-ին նա Հայկական հեծյալ գնդի հրամանատարն էր: Այնուհետև ուսանում է Գլխավոր շտաբի ակադեմիայում, նշանակվում Կիևի զինվորական օկրուգի 12-րդ բանակի շտաբի պետ:

Մեծատաղանդ զորավարի սխրագործությունները առավել ցայտուն կերպով դրսևորվեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Նա մասնակցեց Կիևի, Դոնի—Ռոստովի, Մոսկվայի պաշտպանությանը: 1943-ին Բաղրամյանը Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատարն էր: Նրա գլխավորած զորքերը մասնակցեցին Մերձբալթյան հանրապետությունների ազատագրմանը: Հ. Բաղրամյանը գլխավորեց երրորդ Բելոռուսական ռազմաճակատի զորքերը, ազատագրեց Քյոնիգսբերգը (այժմ՝ Կալինինգրադ):

Հովհ. Բաղրամյանի անունով կա շրջան, մետրոպոլիտենի կայարան Երևանում, գյուղ, և այս լայնահուն պողոտան՝ Երևանի եռուն կենտրոնում:

Մարշալ Բաղրամյանի պողոտայի վրա են գտնվում մի շարք հիմնարկ ձեռնարկություններ, կազմակերպություններ, գիտության և մշակույթի օջախներ:

Պողոտայի աջ ու ձախ կողմերում են գտնվում ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի, Հայաստանի գրողների ու ճարտարապետների միությունների, Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական կոմիտեի, Գերագույն խորհրդի նախագահության շենքերը, մետրոպոլիտենի «Մարշալ Բաղրամյան» կայարանը, Ստ. Շահումյանի անվան քաղլուստունը և էլի ուրիշ շենքեր ու շինություններ, որոնք անշուշտ հայ ճարտարապետության վերջին տարիների նվաճումներն են: Ահա Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան, որի տասնյակ ինստիտուտներում և գիտահետազոտական հիմնարկներում աշխատում են շուրջ 14 հազար գիտական աշխատողներ: Այդ թվում 80 ակադեմիկոսներ ու թղթակից անդամներ, 1100-ից ավելի դոկտոր-պրոֆեսորներ, 4,5 հազար գիտությունների թեկնածուներ, 1300 դոցենտներ:

Մարշալ Բաղրամյան պողոտան ձգվում է մինչև Կիևյան, Կասյան և Քոչարի փողոցների խաչմերուկը: Բարձունքում մաթեմատիկական մեքենաների գիտահետաօոտական ինստիտուտի շենքն է, աջում՝ երևանյան մետրոպոլիտենի վարչության շենքը և «Բարեկամություն» կայարանը, այնուհետև բնակելի շենքեր, առևտրի օբյեկտներ և այլն: Դեպի ձախ Կիևյան փողոցն է: «Հրազդան» կամուրջը քաղաքի աջ ու ձախ ափերը միացնում է իրար: Կամրջից ձախ՝ բարձունքում Ծիծեռնակաբերդ զբոսայգին է, իսկ բլրի գագաթին՝ 1915 թ. եղեռնի զոհերի հուշարձանահամալիրը:

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

1915 թվականին Օսմանյան Թուրքիայի կողմից կատարվեց հրեշավոր մի ոճիր՝ հայերի զանգվածային կոտորածը՝ աշխարհում առաջին ցեղասպանությունը:

Միջին դարերում Հայաստան և Փոքր Ասիա ներխուժած սելջուկ-թուրքերի ավերիչ հարձակումներով սկսվեց հայ ժողովրդի պատմության ամենամռայլ ժամանակաշրջանը: Նրանց կողմից ստեղծված «Կեսարիայի ավազակային պետության» հիման վրա հետագայում կազմակերպված Օսմանյան կայսրությունը դժոխային վիճակ ստեղծեց ոչ միայն բնիկ հայերի, այլև բոլոր քրիստոնյա ժողովուրդների համար: Ռազմաֆեոդալական Թուրքիայում տիրում էր կատաղի շովինիզմը, կրոնական մոլեռանդությունն ու ոստիկանական կամայականությունը:

Թուրքական բռնակալները դավանելով պանթուրքիստական ու պանիսլամական հետադիմական գաղափարախոսությունը, հրով ու սրով նվաճելով Հայաստանը, բռնությամբ փորձում էին բնաջնջել կամ ձուլել-թուրքացնել հպատակ ժողովուրդներին, դրանով իսկ ստեղծել համաթուրանական մի տերություն Միջերկրականից մինչև Արալյան ծով, որի մեջ պետք է մտնեին բոլոր մահմեդականները:

Երկրի ներսում գլուխ բարձրացրած մեծապետական շովինիզմի քաղաքականության արդյունքը նախ արյունարբու Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի օրոք կազմակերպած (1894—96 թթ.) 300 հազար հայերի կոտորածը եղավ:

Անհայտ զինվորի գերեզմանի մոտ...
У могилы Неизвестного солдата

«Հաղթանակ» զբոսայգու մուտքը
Вход в парк «Победы»



«Մայր Հայաստան» հուշակոթողը
Монумент «Мать Армения»

«Մայր Հայաստան» հուշակոթողը
Монумент «Мать Армения»

«Արևիկ» լճի ափին
На берегу озера «Аревик»

«Հերոսների ճեմուղու» հատվածում
Часть «Аллеи героев»

Օսմանյան կայսրության մեջ ապրող բոլոր ազգությունները՝ հայերը, հույները, քրդերը, արաբները և այլք, պետք է թուրք դառնան, հակառակ դեպքում «մենք նրանց կկոտորենք» — ահա 1911 թ. Սալոնիկում տեղի ունեցած համաթուրանական համագումարի բանաձևի էությունը: Եվ այդ ծրագրի իրականացման նախապայմանը հայերի բնաջնջման՝ հայկական հարցի արմատական լուծումը եղավ:

Իշխանության գլուխ անցած երիտթուրքերը, որ բռնակալական Թուրքիայի հայահալած քաղաքականության շարունակողներն էին, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կայսերական Գերմանիայի հետ միասին դրությունը համարելով բարենպաստ, որոշեցին իրականացնել հայերի բնաջնջման դիվային ծրագիրը: Այդ կապակցությամբ ընդունվեց կառավարական որոշում և կազմվեց հայերի բնաջնջման կոմիտե:

1915 թ. թուրքական կառավարությունը իր նահանգապետներին ուղղած հրահանգներից մեկում ասում էր.

«Թեև հայկական տարրի ոչնչացման հարցը վաղուց էր վճռված, հանգամանքները թույլ չեն տվել իրականացնելու այդ սրբազան գործը: Ներկայումս, երբ բոլոր խոչընդոտները վերացված են և վրա է հասել մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրերից ազատելու ժամանակը, հաստատակամորեն հանձնարարվում է չենթարկվել խղճի խայթին... ոչնչացնել բոլորին...»:

Այդ հրեշավոր ծրագրի իրականացումը ապահովելու համար նախ զորակոչի ենթարկվեցին 18—45 տարեկան ռազմունակ հայ տղամարդիկ, ապա մտավորականներին տարբեր պատճառներով բանտերը լցրեցին:

1915 թ. ապրիլի 14-ին Թալեաթի, Էնվեր փաշայի և Նազըմի ստորագրությամբ տեղական իշխանություններին է ուղարկվում հայերի ընդհանուր տեղահանման, ջարդերի կազմակերպման՝ բնաջնջման հրամանը: Որոշակի օր ու ժամի կարգադրությամբ ծրարները բացվեցին 1915 թ. ապրիլի 24-ին: Եվ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ թուրքերը նախ Օսմանյան բանակում գազանաբար կոտորեցին 60 հազար հայ զինվորականների, հարյուրավոր մտավորականներ խոշտանգվեցին, սպանվեցին բանտերում, իսկ ոտքի հանված, փաստորեն մահվան դատապարտված անզեն ու անօգնական 1,5 միլիոն հայ ազգաբնակչությունը գազանաբար

սպանվեց Անատոլիայի անապատային ճանապարհներում: Զոհվածների մեջ էին հայ գրականության դասականներ, անվանի գիտնականներ, հասարակական գործիչներ, բժիշկներ, ուսուցիչներ, դերասաններ: 1914 թ. օսմանյան կայսրությունում ապրող 3 միլիոն հայերից մեկ միլիոնը սփռվեց աշխարհով մեկ՝ Ռուսաստան, Մերձավոր Արևելք, Եվրոպա, Ամերիկա...

Հարազատ երկրից տեղահանված և գազանաբար սպանված ժողովրդի հետ մեկտեղ ոչնչացվեցին նաև դարերի ընթացքում նրա կողմից ստեղծված մշակութային արժեքները: Ամայացան հայկական տասներկու նահանգները, գերության մեջ մնացին սրբազան ու վեհափառ Արարատը, Մարութա լեռը, Սիփան սարը, ծիծաղախինդ Վանա լիճը...

Այսօր Երևանի հուշարձանի անմար կրակի մոտ միշտ թարմ ծաղիկներ կան ու մարդիկ, որոնք գլխահակ լսում են կոմիտասյան մորմոքուն մեղեդին ու արցունք թափում անմեղ զոհերի համար: Սակայն ուրիշ է ապրիլի 24-ի օրը՝ Հիշատակի օրը: Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր մարդկային հոծ բազմությունը ծաղկեփնջերով ու պսակներով ուղղություն է վերցնում դեպի Երևանի հուշարձան, գալիս են հարյուր հազարավոր մարդիկ հիշելու, սգալու զոհերի հիշատակն ու մեր կորցրած երկիրը: Ծիծեռնակաբերդը հայ ժողովրդի համար դարձել է սրբավայր և ուխտատեղի:

Ծիծեռնակաբերդ զբոսայգու արևմտյան մասում վեր է խոյացել երկրում իր տեսակի մեջ եզակի Մարզահամերգային հսկա համալիրը, որի ստեղծող հեղինակային կոլեկտիվը (ճարտարապետներ՝ Կ. Հակոբյան, Ա. Թարխանյան, Հ. Պողոսյան, Գ. Մուշեղյան, Ս. Խաչիկյան, կոնստրուկտորներ Ի. Ծատուրյան, Գ. Ազիզյան) 1986 թ. արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի: Այս վիթխարի շինությունը իր ծավալատարածական հորինվածքով, մեծաթռիչք կոնստրուկցիաներով, նրբագեղ կերտվածքներով հավասարը չունի: Համալիրի տարածքը կազմում է 40 հազար քառակուսի մետր, դիտվում է քաղաքի գրեթե բոլոր թաղամասերից: Կառույցն ունի 5200 տեղանոց սպորտային և 2000 տեղանոց համերգային դահլիճներ, որոնք կառուցված են այնպես, որ խոշոր միջոցառումների ժամանակ տեղապտույտի միջոցով դահլիճները միանում են իրար, ուր կարող է տեղավորվել 7700 հանդիսատես:

Շնորհիվ ճարտարապետա-

կան ճշգրիտ լուծումների, համալիրը օրգանապես միաձուլվում է բարձունքի ուրվանկարին և բնության հետ կազմում միակուռ ամբողջություն:

Մարզահամերգային այս հըսկան տոնական տեսք ու տրամադրություն է ստանում, երբ բազմությունը քայլում է նրա լայնարձակ աստիճանավանդակներով, երբ շատրվանախմբի ջրերը աշխույժով ցայտում են ու եղեռնի անսահման վշտի հուշարձանի հարևանությամբ մարզահամերգային հոյակերտ կոթողը ավելի ցայտունությամբ է խորհրդանշում ու հաստատում հայ ժողովրդի վերածնունդը:

Համերգասրահի երեսուն մետրը երկարությամբ ու տասնմեկուկես մետր բարձրությամբ հսկայական գոբելեն-վարագույրը, որի հեղինակն է մեծատաղանդ արվեստագետ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը, իր իսկական անվանումն է ստացել՝ «Վերածնունդ»: Այո, դա ժողովրդի ինքնահաստատման առհավատչյան է:

Մարտիրոս Սարյանի 1923 թ. ստեղծած առաջին մեծարժեք վարագույրից հետո ստեղծվեց երկրորդը՝ համարժեք ու հավասարազորը, այս անգամ նոր՝ վերածնության խորհրդանիշով: Վարագույրն իջնում է Հայաստանի պետականությունը խորհրդանշող հանդիսավոր առիթներով, իջնում է հանդարտ ու փառահեղ, և բեմահարթակից վեր ձգվող տարածքը ասես բռնկվում է բոսորագույն բոցով:

Մարզահամերգային համալիրի աստիճանավանդակների ստորին հարթակի մոտից գեղեցիկ անցումով դուրս ենք գալիս Հալաբյան փողոց, որը անցնում է բնակելի շենքերի մոտով: Մեր ճանապարհին Վ. Ի. Լենինի անվան հանրապետական հիվանդանոցի մասնաշենքերն են: Այս ձգվող փողոցը միանում է Աշտարակի խճուղուն և դուրս գալիս քաղաքի սահմաններից:

ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՂՈՏԱ

Աջափնյակի Կիևյան կամուրջով ու փողոցով հասնում ենք Բարեկամության հրապարակ՝ Կիևյան-Կասյան-Քոչար փողոցների խաչմերուկ և մեր շրջագայությունը շարունակում ենք Կոմիտասի պողոտայով,

որը մայրաքաղաքի երկարաձիգ պողոտաներից է:

Մի պահ կանգ առնենք Կասյան փողոցի առաջին շենքի մոտ, ծանոթանանք պատին ամրացված սպիտակ մարմարե հուշատախտակին:

«Այս տանը ապրել է Պարույր Սևակը (1924—1971)»:

Հայ հանճարեղ բանաստեղծ **Պարույր Սևակը** ծնվել է պատմական Վայոց ձորի Չանախչի գյուղում (այժմ Սովետաշեն):

Պարույր Սևակի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Անմահները հրամայում են» (1949), հավաստեց հեղինակի ինքնատիպությունը, ընդգրկումների անչափելի լայնությունը, ոճական թարմությունը, լեզվական հարստությունը: Այդ գիրքը վկայեց, որ խորհրդահայ պոեզիա է մուտք գործել ճշմարիտ և խոշոր բանաստեղծ: Հետագայում՝ «Սիրո ճանապարհը», «Նորից քեզ հետ» և մյուս ժողովածուները լայն ճանաչում բերեցին բանաստեղծին:

Պ. Սևակը նորարար բանաստեղծ էր: Պոետի քաղաքացիական ազնիվ կիրքը, հասարակական հույժ կարևոր ու այրող խնդիրների հետ ունեցած սերտ առնչությունը, ստեղծագործական տքնանքն ու չթուլացող որոնումները նրա տաղանդի բնորոշ առանձնահատկություններն էին, որոնք իրենց ողջ ուժով ու փայլով դրսևորվեցին հայ պոեզիայի կոթողային ստեղծագործություններից մեկի՝ «Անլռելի զանգակատուն» հայրենաշունչ պոեմի մեջ: (Այն նվիրված է անմահ Կոմիտասին):

Բանաստեղծական հուժկու պոռթկումով, պատմափիլիսոփայական խոր իմացությամբ բարձրարվեստ այդ գործը, որը ժամանակին արժանացավ ՀԽՍՀ պետական մրցանակի, հայ ժողովրդի կենսունակության ու վերածննդին ձոնված մի ոգեշունչ հիմն է:

Հայ ազգային պոեզիայի փայլուն ստեղծագործություններից են նաև Պ. Սևակի «Մարդը ափի մեջ» և «Եղիցի լույս» խոհափիլիսոփայական ժողովածուները, որոնք արժանի հռչակ բերին հեղինակին:

Ամենազոր բնությունը շռայլ կարողություններով ու զարմանահրաշ հատկություններով էր օժտել Պ. Սևակի անհատականությունը: Նա ինքնատիպ ու անկրկնելի էր որպես բանաստեղծ, փիլիսոփա, գիտնական, մտածող ու անձնավորություն:

Վիթխարի է, խոր ու բեղուն այն ակոսը, որը մեծատաղանդ բանաստեղծն ու խոշոր գիտնականը թողեց մարդկության մշակույթի հոգևոր գանձարանում:

Սիրված բանաստեղծի գրքերը թարգմանվել են աշխարհի տասնյակ ազգերի ու ազգությունների լեզուներով: Կարճ տևեց Պ. Սևակի գեղեցիկ կյանքը: Ապրեց ընդամենը քառասուն և յոթ տարի:

Շարունակում ենք մեր շրջագայությունը:

Կոմիտասի պողոտայի այս հատվածում հիմնականում բնակելի բարձրահարկ շենքեր են, առողջապահական ու մանկական հիմնարկներ, գիտահետազոտական ինստիտուտներ, առևտրական օբյեկտներ, որոնք կառուցվել են վերջին 20—25 տարիների ընթացքում: Քաղաքի այս մասը 26 կոմիսարների անվան շրջանի տարածքն է: Այստեղ են գտնվում ֆրեզերային հաստոցների գործարանը, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը, Ն. Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարանը և այլն:

ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ

Նորից տեղափոխվենք քաղաքի կենտրոն: Զբոսնենք Աբովյան փողոցին զուգահեռ Տերյանի անունը կրող գեղեցիկ փողոցով:

Վահան Տերյան (1885—1920): Հայ դասական քնարերգության ամենաքնքուշ բանաստեղծն է:

Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում՝ գեղատեսիլ Ջավախք գավառի Գանձա գյուղում, ուսումնառությունը շարունակել է Թիֆլիսում, Մոսկվայի Լազարյան ճեմարանում, ապա Մոսկվայի և այնուհետև Պետերբուրգի համալսարաններում:

Տերյանը ընտրվել է Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ և աշխատանքի անցել Ազգությունների ժողովրդական կոմիսարիատում որպես Հայկական գործերի բաժնի վարիչ, աշխատել Վ. Ի. Լենինի հետ:

Տերյանը մահացավ Օրենբուրգում, պետական կարևոր հանձնարարությամբ Ասիա մեկնելու ճանապարհին: Կարճ ապրեց, բայց իր թողած գրական փայլուն, լուսավոր ու հարուստ ժառանգությամբ մնում է հայ ժողովրդի ամենասիրելի բանաստեղծներից մեկը: Հանգչում է Կոմիտասի անվան այգու քաղաքային պանթեոնում: Ամեն տարի հուլիսին Տերյանի ծննդավայրում անց են կացվում տերյանական օրեր:

Գանձայում է գտնվում նրա տուն-թանգարանը: Երևանի Տերյանի անվան միջնակարգ դպրոցի առջև դրված է պոետի կիսանդրին, իսկ Երևանի իր անունը կրող փողոցի օղակաձև այգու հատվածում կանգնեցվելու է բանաստեղծի հուշարձանը:

Մեր շրջագայությունը սկսենք Երևանի Կ. Մարքսի անվան պետական պոլիտեխնիկական ինստիտուտի մոտից: Սա հանրապետության խոշոր բուհերից մեկն է, ուսանողության թիվը հասնում է 35 հազարի:

Հանդիպակաց մասում Երևանի պետական գյուղատնտեսական ինստիտուտն է: Այդ նույն շարքում Ալ. Մյասնիկյանի անվան Հայկական ԽՍՀ պետական գրադարանն է, հայ տպագիր մշակույթի պահպանման ամենախոշոր կենտրոնը աշխարհում: Գրադարանի ֆոնդերում հաշվվում է շուրջ յոթ միլիոն գիրք, թերթ ու ամսագիր: Այստեղ են պահպանվում հայ առաջին տպագիր գրքից («Ազդարար», 1512 թ.) սկսած մինչև այսօրվա հրատարակությունները: Գրադարանը հարուստ է նաև հնատիպ ու հազվագյուտ գրքերով, ինչպես նաև Խորհրդային Միության և արտասահմանյան բազմաթիվ լեզուներով հրատարակված գրականությամբ:

Տերյան փողոցի վրա են գտնվում «Խորհրդային գրող», «Արևիկ», Կիրովի փողոցի վրա՝ «Լույս», իսկ Ավ. Իսահակյան փողոցի վրա՝ «Հայաստան» հրատարակչությունները: Տերյան-Իսահակյան փողոցների խաչմերուկում Հայկական ԽՍՀ Հրատպետկոմն է և նորաստեղծ «Պարբերական» արտադրահրատարակչական միավորումը: Գրահրատարակչական այս կազմակերպությունները տարեկան լույս են ընծայում շուրջ 200 անուն գիրք, որոնց ընդհանուր տպաքանակը կազմում է 11 միլիոն օրինակ: Այս փողոցում են գտնվում նաև ՀԽՍՀ «Արմենպրես» ինֆորմացիոն հեռագրական գործակալությունը, Հակոբ Մեղապարտի անվան Պոլիգրաֆկոմբինատը՝ հանրապետության պոլիգրաֆարդյունաբերության հնագույն և խոշոր ձեռնարկություններից մեկը: Ավ. Իսահակյան փողոցի վրա 1986 թ. հոկտեմբերին կանգնեցվեց հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի արձանը: Այս փողոցի վրա է Երքաղխորհրդի դրամատիկական թատրոնը, հարևանությամբ՝ Հայկական ԽՍՀ պետական գրապալատը, երևանյան մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանն իր ինքնատիպ ու գեղեցիկ մուտքով և առավել գեղեցիկ կայարանային սրահ-

ներով: Միության 8-րդ՝ Երևանի մետրոպոլիտենը իր ուղևորներին ընդունեց 1981 թ. մարտին: Գործող ինը կայարանների ընդհանուր երկարությունը կազմում է 11,9 կմ: «Լենինի հրապարակ», «Երիտասարդական», «Սպանդարյան հրապարակ», «Սասունցի Դավիթ» և մյուս կայարանները ինքնատիպ ու ժամանակակից հոյակապ կառույցներ են: 2000 թվականին մետրոպոլիտենի գծերի ընդհանուր երկարությունը կկազմի 47 կիլոմետր:

